



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Protection of Rights
Without Borders NGO

ԶԵԿՈՒՅՑ

«Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության
ինքնակառավարման մարմինների գործունեությունը որպես դատական
իշխանության անկախության երաշխիք»

Երևան, 2019թ.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ձեկույցը պատրաստվել է 2019թ.-ին «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության աջակցությամբ:

Ձեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության տեսակետների հետ:

Ուսումնասիրությունն իրականացվել և զեկույցը կազմվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի իրավական փորձագետներ Հայկուհի Հարությունյանի, Արաքս Մելքոնյանի, Հասմիկ Հարությունյանի, Նինա Հակոբյանի կողմից:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	9
Դատական իշխանության ինքնակառավարման մարմինների դերը դատարանների անկախության ապահովման գործում	10
<i>Միջազգային չափանիշներ.....</i>	<i>11</i>
<i>Ձևավորման ընթացակարգերը.....</i>	<i>13</i>
<i>Դատական խորհուրդների լիազորությունների շրջանակը.....</i>	<i>14</i>
ՀՀ-ում Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման օրենսդրական հիմքերը.....	15
Ձևավորված ԲԴԽ կազմ և անդամներ	16
Խորհրդի անդամների համապատասխանելիությունը պահանջվող չափանիշներին	18
<i>Խորհրդի դատավոր անդամները.....</i>	<i>21</i>
Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները.....	25
Դատավորների ընտրություն և նշանակում.....	25
<i>Միջազգային չափանիշներ.....</i>	<i>25</i>
<i>Դատավորների ընտրության հիմքում դրվող չափանիշները.....</i>	<i>27</i>
<i>Ընտրության համար պատասխանատու մարմինները.....</i>	<i>32</i>
<i>Նշանակման Գործընթացի թափանցիկությունը.....</i>	<i>34</i>
<i>Փորձաշրջանով նշանակումներ.....</i>	<i>36</i>
ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումներ	36
Դատավորների ընտրությունն ու նշանակումը ՀՀ-ում	36
<i>Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակների կազմումը.....</i>	<i>37</i>
<i>Դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումը.....</i>	<i>39</i>
<i>Ընտրության հիմքում դրվող չափանիշները.....</i>	<i>41</i>
Դատավորների առաջխաղացում և գնահատում.....	42
<i>Դատավորների գնահատման խնդիրներն ու նպատակները: միջազգային չափանիշներ</i>	<i>42</i>
Դատավորների գնահատման իրավասու մարմինները.....	48
Գնահատման մեթոդները	52



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորների գործունեության գնահատումը ՀՀ-ում.....	53
Դատավորների վերապատրաստումներ.....	56
<i>Միջազգային չափանիշներ.....</i>	56
<i>ՀՀ ներպետական օրենսդրություն</i>	58
<i>Պրակտիկայի ուսումնասիրություն.....</i>	61
Դատավորների կարգապահական պատասխանատվությունը	63
<i>Միջազգային չափանիշներ.....</i>	63
<i>Կարգապահական պատասխանատվության հիմքերը.....</i>	63
<i>Կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմինները</i>	67
<i>Որոշումը բողոքարկելու հնարավորությունները.....</i>	69
<i>Կարգապահական պատասխանատվության տեսակները</i>	70
Դատավորների կարգապահական պատասխանատվությունը ՀՀ-ում.....	71
<i>Կարգապահական պատասխանատվության առիթներն ու հիմքերը.....</i>	71
<i>Կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինները.....</i>	74
<i>ԲԴԽ կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամկետներն ու ընթացքը.....</i>	76
<i>Վարույթի թափանցիկությունը.....</i>	77
<i>Կարգապահական տույժերի տեսակները.....</i>	78
<i>Կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման բողոքարկման հնարավորությունները</i>	78
Դատական իշխանության բյուջեի կառավարում և վերահսկողություն	80
<i>Միջազգային չափանիշներ.....</i>	80
<i>ՀՀ ներպետական օրենսդրություն</i>	83
<i>Դատական իշխանության բյուջեի բաշխումը.....</i>	85
<i>ՀՀ պրակտիկայի ուսումնասիրություն</i>	86
Դատարանների կառավարումը	89
<i>Միջազգային չափանիշներ.....</i>	89



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<i>ՀՀ ներպետական օրենսդրություն</i>	92
Իշխանության այլ մարմիններին կարծիքի տրամադրումը	95
<i>Միջազգային չափանիշներ</i>	95
<i>ՀՀ ներպետական օրենսդրություն</i>	96
Դատավորների հեղինակության պաշտպանությունն ու խթանումը	99
<i>Միջազգային չափանիշներ</i>	99
<i>ՀՀ ներպետական օրենսդրություն</i>	100
Հանրային հաշվետվողականություն և վերահսկողություն	107
<i>Միջազգային չափանիշներ</i>	107
<i>ՀՀ ներպետական օրենսդրություն</i>	108
<i>Պրակտիկայի ուսումնասիրություն</i>	110



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատական իշխանության անկախությունը պաշտպանելու և խթանելու հարցում Եվրոպական լավագույն փորձի և չափանիշների լույսի ներքո դատական խորհրդի կողմից հիմնական գործառնություններից մեկը դատական իշխանության ինքնակառավարումն է: Դատական խորհուրդները¹ մարմիններ են՝ ստեղծված սահմանադրության կամ օրենքի հիման վրա, որոնց նպատակն է պաշտպանել դատական իշխանության և անհատ դատավորների անկախությունը, և այդպիսով նպաստել դատական համակարգի արդյունավետ գործունեությանը²: Դատական խորհուրդների ստեղծումը առաջարկվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարականով, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի կողմից³:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ «չկա ստանդարտ մոդել, ըստ որի պետությունը պարտավոր է ձևավորել իր Բարձրագույն դատական խորհուրդը, քանի դեռ դրա ֆունկցիան է ապահովել անկախ դատական իշխանության պատշաճ գործունեությունը ժողովրդավարական պետությունում: Չնայած առկա են մոդելներ, որոնցում իշխանության այլ ճյուղերի ներգրավումը բացառվում է, նման ներգրավվածությունը տարբեր աստիճանով ընդունվում է և հիմնավորվում է դատական խորհրդի ֆունկցիաների սոցիալական բովանդակությամբ և իշխանության այլ ճյուղերի կողմից խորհրդի վարչական գործունեության դիտարկման անհրաժեշտությամբ: Ակնհայտ է, որ դատական իշխանությունը պետք է հաշվետու լինի իր գործունեության համար օրենքին համապատասխան՝ պայմանով, որ պատշաճ և արդար ընթացակարգեր են գործում և որ պաշտոնից հեռացում կարող է տեղի ունենալ միայն պատճառաբանված հիմքերով: Այդուամենայնիվ, ընդհանրականորեն խորհրդի գոյության հիմնական նպատակ դիտարկվում է դատարանների անկախության պաշտպանությունը պետական իշխանության այլ ճյուղերի անհարկի ազդեցություններից այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են դատավորների ընտրությունն ու նշանակումը և կարգապահական հարցերը»⁴: Վենետիկյան հանձնաժողովն արձանագրել է, որ դատական խորհուրդների կազմի մասին գործող պրակտիկայի համաձայն՝ ընդհանուր կանոնն այն է, որ դատական խորհուրդների կազմի մեծամասնությունը պետք է կազմված լինի դատական իշխանության անդամներից և որ արդար հավասարակշռությունը պետք է պահպանվի դատական իշխանության ներկայացուցիչների և այլ ի պաշտոնե կամ ընտրվող անդամների միջև:

Այդպիսով, դատական խորհրդի անդամների էական մասը կամ մեծամասնությունը պետք է ընտրվեն դատական իշխանության կողմից: Ի ապահովումն խորհրդի ժողովրդավարական լեգիտիմության, մյուսն անդամները պետք է ընտրվեն պառլամենտի կողմից իրավաբանական որակավորում ունեցող անձանց շրջանակից՝ հաշվի առնելով հնարավոր շահերի բախումը⁵:

¹ Դատական խորհուրդներին տարբեր պետություններում անվանում են նաև Բարձրագույն դատական խորհուրդ, Արդարադատության բարձրագույն խորհուրդ, Արդարադատության խորհուրդ և այլն: Հետևաբար, տեքստում, այս տերմինները համարժեք են:

² Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12 on Judges: Independence, efficiency and responsibilities, para. 26.

³ Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12, paras. 26-29; CCJE, Opinion No 1(2001), para. 45, and Opinion No 10(2007), Venice Commission, Report on the Independence of the Judicial System, Part I: The Independence of Judges, CDL-AD(2010)004, para. 32.

⁴ Venice Commission, Opinion on the Reform of the Judiciary in Bulgaria, CDL-INF(1999)005, para. 28; Venice Commission, Judicial Appointments, CDL-AD(2007)028, para. 28.

⁵ Venice Commission, Judicial Appointments, CDL-AD(2007)028, para. 29.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Տարբերում են դատական խորհուրդների երկու հիմնական մոդելներ՝

- հարավ-եվրոպական մոդել, որի դեպքում խորհուրդը հիմնականում շեշտը դնում է դատական իշխանության կառավարման վրա, և
- հյուսիս-եվրոպական մոդել, որի դեպքում խորհուրդն ունի լիազորություններ վարչարարության, դատարանների կառավարման և բյուջետավորման հարցերում:⁶

Համաձայն Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (հետայսու տեքստում՝ ԵԴԽԽ) Դատավորների մասին Մազնա Կարտայի՝ ի ապահովումն դատավորների անկախության՝ յուրաքանչյուր պետություն պետք է ստեղծի օրենսդիր և գործադիր իշխանություններից անկախ և լայն լիազորություններով օժտված դատական խորհուրդ կամ այլ հատուկ մարմին: Լիազորությունները պետք է վերաբերեն դատավորների կարգավիճակին վերաբերող բոլոր հարցերին, ինչպես նաև կազմակերպական, գործառնության և դատական մարմինների հեղինակության հարցերին: Խորհուրդը պետք է կազմված լինի կամ բացառապես դատավորներից կամ մեծամասամբ դատավորներից՝ ընտրված գործընկերների կողմից: Դատական խորհուրդը պետք է հաշվետու լինի իր գործողությունների ու որոշումների համար:⁷

Համաձայն ԵԴԽԽ թիվ 10 Կարծիքի -ի՝ դատական խորհուրդն անձամբ կամ այլ մարմնի հետ համագործակցությամբ պետք է իրականացնի հետևյալ գործառնությունները՝

- Դատավորների ընտրություն և նշանակում
- Դատավորների առաջխաղացում
- Դատավորների գնահատում
- Կարգապահական և էթիկայի հարցեր
- Վերապատրաստում
- Առանձին բյուջեի վերահսկողություն և կառավարում
- Դատարանների ղեկավարում և կառավարում
- Դատավորների կերպարի (հեղինակության) պաշտպանություն
- Պետության մյուս իշխանության ճյուղերին կարծիքի տրամադրում
- Հանրության առաջ պարտավորություններ՝ թափանցիկություն, հաշվետվողականություն և հաշվետվություն:⁸

Նույն գործառնությունները, որոշ բացառություններով, դատական խորհրդի կամ այլ անկախ մարմնի իրավասությանը ենթակա լինելու վերաբերյալ փոխհամաձայնություն հաստատվել է նաև Դատական խորհուրդների եվրոպական ցանցի գլխավոր ասամբլեայի կողմից Բուդապեշտի բանաձևով:⁹

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների համաձայն՝ ստեղծվեց նոր պետական մարմին՝ Բարձրագույն դատական խորհուրդ, որի նպատակն է դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը: Սահմանադրության փոփոխությունների համաձայն՝ բարձրագույն դատական խորհուրդն օժտված է լիազորություններով,

⁶ Venice Commission, Compilation of Venice Commission Opinions and Reports concerning Courts and Judges, CDL-PI(2015)001, p. 56.

⁷ CCJE, Magna Carta of Judges, CCJE (2010)3, 17 նոյեմբերի 2010, para. 13.

⁸ CCJE, Opinion No 10(2007) on Council for the Judiciary in the Service of Society, para. 42.

⁹ ENCI, Self Governance of the Judiciary: Balancing Independence and Accountability, Budapest Resolution, 21-23 May 2008.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որոնք նախկինում վերապահված էին դատական իշխանության ինքնակառավարման այլ մարմինների, ինչպիսիք էին Դատավորների ընդհանուր ժողովը, Դատարանների նախագահների խորհուրդը:

Ավելին, ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի ընդունմամբ՝ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդն օժտվեց լայն լիազորություններով, որոնք ներառում են ինչպես դատավորների նշանակման ու առաջխաղացման, կարգապահական հարցերը, այնպես էլ դատավորների գնահատման, դատական իշխանության բյուջեի կազմման ու բաշխման հետ կապված հարցեր:

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ձևավորման, լիազորությունների, գործունեության իրավական և գործնական համապատասխանությունը ինչպես ՀՀ սահմանադրությանը, այնպես էլ ոլորտին առնչվող միջազգային չափանիշներին, վեր հանել օրենսդրական և պրակտիկ խնդիրներն ու ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես վերը նշվեց, իրականացված հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ձևավորման, լիազորությունների, գործունեության իրավական և գործնական համապատասխանությունը ինչպես ՀՀ սահմանադրությանը, այնպես էլ ոլորտին առնչվող միջազգային չափանիշներին, վեր հանել օրենսդրական և պրակտիկ խնդիրներն ու ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- **Փաստաթղթերի վերլուծություն.** իրականացվել է դատական խորհուրդների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների մարմինների՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներով, Վենետիկի հանձնաժողովի կարծիքներով և զեկույցներով, Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի կարծիքներով, ԵԱՀԿ շրջանակներում ընդունված հանձնարարականներով և միջազգային այլ մարմինների փաստաթղթերով դատական խորհուրդներին վերաբերող սկզբունքների ու չափանիշների ուսումնասիրություն: Վերլուծվել են ՀՀ սահմանադրությամբ և ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով նախատեսված կարգավորումները և ՀՀ բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները վերոգրյալ սկզբունքներին ու չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից:

Իրականացվել է ՀՀ բարձրագույն դատական խորհրդի գործունեության և 2018 թվականի ընթացքում ընդունված որոշումների ուսումնասիրություն:

- **Փորձագիտական հարցազրույցներ.** Փորձագետների հետ քննարկվել են ՀՀ բարձրագույն դատական խորհրդի լիազորություններին ու գործունեությանը վերաբերող օրենսդրական ու պրակտիկ խնդիրները, դրանց հնարավոր լուծումներին վերաբերող առաջարկությունները: Ընդհանուր առմամբ, իրականացվել են հարցազրույցներ Բարձրագույն դատական խորհրդի գործունեության վերաբերյալ ԲԴԽ անդամների, փաստաբանների, դատավորների ու ոլորտի մասնագետների հետ: Հարցազրույցները ենթարկվել են բովանդակային վերլուծության՝ միասնական խնդիրների դուրսբերման նպատակով: Վերլուծությունն իրականացվել է էքզեկի համակարգի միջոցով՝ նախապես դուրս բերված չափանիշների ու հարցադրումների հիման վրա:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատական իշխանության ինքնակառավարման մարմինների դերը դատարանների անկախության ապահովման գործում

Դատական իշխանության անկախությունը իրավունքի գերակայության կենտրոնական ասպեկտներից է, քանզի անկախության բացակայության պայմաններում դատարանների կողմից օրենքի կիրառումը դառնում է ոչ օբյեկտիվ և կամայական: Նման իրավիճակներից խուսափելու և հնարավոր դրսևորումները կանխելու համար ժամանակակից ժողովրդավարական համակարգերը ստեղծել են անկախության ապահովման մեխանիզմներ: Նման մեխանիզմներից են հանդիսանում դատական խորհուրդները: Դատական խորհուրդները դատավորների նշանակումն ու պաշտոնական առաջխաղացումը քաղաքական գործընթացներից և քաղաքական ազդեցությունից մեկուսացման և դատավորների հաշվետվողականության համար պատասխանատու մարմիններն են: Վերջիններս իրենց նշանակությամբ դասվում են դատական ներքին կարգապահության ապահովման համար պատասխանատու մարմինների շարքին: Հանդիսանալով դատավորների և քաղաքական գործիչների միջև միջանկյալ օղակ՝ դատական խորհուրդները իրական հնարավորություն են ստեղծում դատական իշխանության անկախության և հաշվետվողականության համար: Ըստ այդմ, գոյություն ունեն դատական խորհուրդների տարբեր մոդելներ, որոնք ունակ են արտացոլել տվյալ դատական իշխանության խնդիրներն ու հնարավորությունները՝ հաշվի առնելով դատական խորհրդի կազմն ու լիազորությունները: Դատական խորհուրդների պատմության առաջին մոդելը հանդիպում է Ֆրանսիայում դեռևս 1946 թվականին Դատական բարձրագույն խորհրդի տեսքով: Վերջինիս հիմնական դերը դատական իշխանության անձնակազմի կառավարումն էր: Խորհրդի կազմում դատավորները փոքրամասնություն են կազմել և ընտրվել են ուղղակիորեն դատավորների կողմից¹⁰: Դատական խորհուրդների իտալական մոդելը ամբողջությամբ այլ մոտեցում է ներկայացրել: 1958 թվականին Իտալիան դարձավ առաջին երկիրը, որտեղ ստեղծվեց դատական խորհուրդ՝ օժտված բոլոր իրավասություններով դատական իշխանությունը քաղաքական ճնշումներից զերծ պահելու համար: Այս մոդելը հիմք հանդիսացավ հետագայում այլ դատական համակարգերում դատական խորհուրդների ձևավորման համար¹¹: Ի տարբերություն այս մոդելի, Իսպանիայում և Պորտուգալիայում գոյություն են ունեցել միանգամայն տարբերվող դատական խորհուրդներ, որոնց կազմում դատավորները մեծամասնություն են կազմում և խորհուրդը էական դեր ունի դատավորների նշանակման, պաշտոնի առաջխաղացման և պաշտոնից ազատման հարցում:

Որոշ երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Ավստրիան և Հոլանդիան, գոյություն ունեն ավելի քիչ իրավասություններով օժտված դատական խորհուրդներ: Վերջիններիս հիմնական դերակատարումը կայանում է դատավորների ընտրության գործընթացում և ոչ թե դատավորների առաջխաղացման կամ կարգապահության հարցերում¹²:

¹⁰ Cheryl Thomas, *Judicial Appointments in Continental Europe*, Lord Chancellor's

¹¹ Thomas, *supra* note 14. For further discussion, see *infra* Section IV.D.

¹² Nuno Garoupa, Tom Ginsberg, *The comparative law and Economics of Judicial Councils*, University of Illinois College of Law, 2008



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Այս երկրներում գործող դատական խորհուրդները ունեն ևս մեկ առանձնահատկություն՝ վերջիններիս կապը գերագույն դատարանների հետ: Ավստրիայում, օրինակ, դատական խորհուրդները գտնվում են գերագույն դատարանի ենթակայության ներքո և զբաղվում են վարչարարությամբ¹³:

Դատական խորհուրդների՝

- ✓ ձևավորումը,
- ✓ կազմը
- ✓ ձևավորման ընթացակարգը
- ✓ լիազորությունների շրջանակը

Միջազգային չափանիշներ

Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատվել է, որ գոյություն չունի մեկ ընդհանուր մոդել, որին պետք է ներկայիս ժողովրդավարական երկրներում հետևեն դատական խորհուրդ ձևավորելիս: Այս մոտեցումը կիրառելի է այնքան ժամանակ, քանի դեռ դատական խորհուրդը ձևավորվում է և գործում դատական իշխանության անկախ գործունեությունը երաշխավորելու համար: Չնայած որ գոյություն ունեն մոդելներ, որտեղ իշխանության մնացած ճյուղերի ներգրավվածությունը խորհրդի կազմում հասցված է նվազագույնի կամ ընդհանրապես բացառվում է, այնուհանդերձ, կան համակարգեր, որտեղ նման ներգրավվածությունը որոշ չափով ընդունելի է, ինչը հիմնավորվում է տվյալ համակարգում գործող դատական խորհրդի գործառույթներից և վարչարարության գործառույթների այդ ճյուղերի կողմից վերահսկելու անհրաժեշտությունից¹⁴:

Կազմի առումով Վենետիկի հանձնաժողովը բազմիցս նշել է, որ խորհրդի անդամների մեծամասնությունը կամ գերակշիռ մասը պետք է լինեն դատավորներ՝ ընտրված դատավորների կողմից¹⁵:

Դատական խորհուրդների եվրոպական ցանցի կողմից հաստատվել է, որ խորհուրդների կազմի վերաբերյալ ընդունված կոնսենսուսը պահանջում է, որ խորհուրդը ունենա համընդգրկուն կազմ, որտեղ մեծամասնություն կկազմեն դատավորները: Վերջիններիս թիվը ոչ մի պարագայում չպետք է պակաս լինի անդամների ընդհանուր թվի 50%-ից¹⁶: Ցանցի կողմից ընդունվել է, որ խորհուրդների լավագույն մոդելները ընդգրկում են անդամներ իրավաբանական համայնքից, ակադեմիական ոլորտից կամ քաղաքացիական հասարակությունից՝ ունենալով դատական իշխանության թափանցիկությունն ու

¹³ Hammergren, *supra* note 19, at 10 (Costa Rica). On Austria, see EXTERNAL RELATIONS, FEDERAL MINISTRY OF JUSTICE, THE AUSTRIAN JUDICIAL SYSTEM, (2006) (judges are appointed by the Federal Ministry of Justice by recommendation of the president of a court of appeal).

¹⁴ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e)

¹⁵ CDL-AD(2013)014 Opinion on the Draft Law on Amendments to the Constitution, Strengthening the independence of Judges and on the Changes to the Constitution proposed by the Constitutional Assembly of Ukraine (14-15 June 2013), para. 35 and CDL-AD(2010)026 Joint Opinion on the Law on the Judicial System and the Status of Judges of Ukraine, by the Venice Commission and the Directorate of Co-operation within the Directorate General of Human Rights and Legal Affairs of the Council of Europe (Venice, 15-16 October 2010).

¹⁶ Ibid 1



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

անկախությունը ապահովելու բավարար լիազորություններ: Այս նպատակին հասնելու համար անդամների նշանակման մեխանիզմը պետք է լինի այնպիսին, որ կբացառի գործադիր կամ օրենսդիր մարմնի կողմից միջամտությունը, իսկ դատավոր անդամների ընտրությունը կիրականացվի դատավորների կողմից: Ոչ դատավոր անդամների պարագայում խորհուրդ է տրվում, որ վերջիններս ընտրվեն իրենց կարողությունների, քաղաքացիական հասարակությունում ունեցած դերի հաշվին: Պրակտիկ իրավաբանությունից ստացված փորձը կամ ակադեմիական իրավաբանական գործունեության մեջ ընդգրկված լինելը համարվում է ցանկալի պայման և կնպաստի խորհրդի գործառույթների արդյունավետ իրականացմանը: Այս անդամներից պահանջվում է նաև դատական համակարգին և դատաիրավական կյանքին բավարար ծանոթություն՝ դատարանների գործունեությունը առավելագույնս պատկերացնելու նպատակով, ինչը կնպաստի նաև անդամի արդյունավետ գործունեությանը¹⁷: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը խորհուրդների կազմում դիտարկվում է որպես առավելություն: Քաղաքացիական հասարակության անդամ ներկայացուցիչները, սակայն, պետք է ուղղորտում հեղինակություն վայելեն և կարողանան ներկայացնել հասարակ քաղաքացուն և հանրության կարիքները: Վենետիկի հանձնաժողովը ՀՀ-ում դատական օրենսգրքի փոփոխությունների կապակցությամբ ներկայացված 2017 թվականի կարծիքում անդրադարձել է ձևավորվող խորհրդի կազմի և անդամների ընտրության հստակ ընթացակարգերին: Կարծիքի համաձայն՝ անդամների ներկայացման ընթացակարգը պետք է այնպիսին լինի, որ ապահովի ոչ դատավոր անդամների մասնագիտական բազմազանությունը: Մասնագիտացված հասարակական կազմակերպություններից անդամների ներկայացնելու կապակցությամբ նշվել է, որ մասնագիտացված հասարակական կազմակերպություն եզրույթը կարիք ունի հստակեցման, նեղ մեկնաբանության դեպքում այլ կառույցներից անդամ ներկայացնելու հնարավորությունը հնարավոր է նվազի¹⁸:

Եվրոպայի Դատավորների խորհրդատվական խորհրդի /ԵԴԽԽ/ համաձայն՝ դատական խորհուրդները նախ պետք է ամրագրում ստանան սահմանադրական մակարդակում կամ համարժեք օրենքով: ԵԴԽԽ-ն նույնպես սահմանում է, որ արդարադատության խորհուրդների կազմը պետք է այնպիսին լինի, որ կարողանա ապահովել դրա անկախությունն ու գործառույթները արդյունավետ իրականացնելու հնարավորություն տա: Ըստ այդմ, խորհուրդը հնարավոր է բաղկացած լինի բացառապես դատավորներից կամ ունենա անդամների խառը կազմ՝ բաղկացած դատավոր և ոչ դատավոր անդամներից: Երկու դեպքում էլ անդամների կողմից անձնական շահերն ու դրանց պաշտպանությունը պետք է գոյություն չունենան: Այն դեպքում, երբ կազմը բաղկացած է միայն դատավորներից, ապա նրանք պետք է ընտրվեն անմիջապես դատավորների կողմից: Խառը կազմի պարագայում, ավելորդ ճնշումներից խուսափելու համար, անդամների գերակշիռ մեծամասնությունը պետք է դատավորներ կազմեն¹⁹: Անկախ մասնագիտացումից՝ խորհրդի անդամները պետք է ընտրվեն *կարողությունների, փորձի, դատական գործընթացների ճանաչողության, ինչպես նաև անկախության մշակույթին հարելու չափանիշներով*: Ոչ դատավոր անդամները հնարավոր է լինեն հայտնի իրավաբաններ, ակադեմիկոսներ, դասախոսներ: Անդամներից պահանջվում է քաղաքական զսպվածություն, ինչպես նաև գործադիր

¹⁷ Ibid 1

¹⁸ Venice Commission, CDL- AD (2017)019, Opinion on the draft Judicial Code of Armenia

¹⁹ https://rm.coe.int/168074779b#_ftn9



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Իշխանությունից կատարյալ անկախություն: Ինչը նշանակում է, որ կառավարության գլուխը կամ որևէ նախարար չի կարող արդարադատության խորհրդի անդամ լինել: Առանձնակի կարևորվում է արդարադատության խորհրդի նախագահի անկողմնակալ լինելը, ով որևէ մտերմություն չունի քաղաքական կուսակցությունների հետ: Օրինակ, խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ երկրի ղեկավարը միայն ֆորմալ լիազորություններով է օժտված, հնարավոր է վերջինս նշանակվի նաև արդարադատության խորհրդի նախագահ, մինչդեռ կառավարման այլ համակարգերում խորհրդի նախագահը պետք է լինի դատավոր և ընտրվի խորհրդի անդամների կողմից²⁰:

Դատական խորհրդի կազմի վերաբերյալ կարևորվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումները, ըստ որի՝ կարգապահական պատասխանատվության գործերով դատական խորհուրդների կազմը պետք է բաղկացած լինի նաև դատավորների հավասարակշռված թվից, որի դեպքում գործում է անկողմնակալության վստահելի կանխավարկած: Ավելին, խորհրդի կազմում որպես անդամ ընդգրկված դատավորները պետք է ընտրվեն դատավորների կողմից²¹: Դատական խորհուրդների կազմում ոչ դատավոր անդամների ներգրավվածությունը բացատրվում է այն հանգամանքով, որ արդարադատության իրականացման որակի, ինչպես նաև դրա անկողմնակալ իրականացման նկատմամբ հսկողությունը չի հանդիսանում սոսկ տվյալ դատավորի շահերը շոշափող հարց: Խորհրդի նման վերահսկողական դերը կարող է բարձրացնել արդարադատության իրականացման նկատմամբ հասարակական վստահությունը²²: Ժողովրդավարական հասարակարգերում դատական խորհուրդները պետք արտահայտեն նաև հասարակության կամքը և ըստ այդմ՝ կապված լինեն հասարակական ներկայացուցչության հետ: Օրենսդիր մարմինը նման պարագայում իրավասու է ընտրել խորհրդի անդամների մի մասին, օրինակ՝ իրավաբան մասնագետներից: Մինևույն ժամանակ, կան պետություններ, օրինակ՝ Հունգարիան, Վրաստանը, որտեղ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներից են ընդգրկվում խորհրդի կազմի մեջ:

Ձևավորման ընթացակարգերը

Եվրոպայի Դատավորների խորհրդատվական խորհրդը սահմանել է, որ խորհրդի դատավոր անդամները պետք է ընտրվեն դատական իշխանության կողմից՝ խորհրդի անկախությունն ապահովելու համար: Սակայն ԵԴԽՄ-ն չի առաջարկում ընտրության մեկ կոնկրետ մեթոդ: Էական է, որ դատավոր անդամները ներկայացված լինեն դատական իշխանության բոլոր մակարդակներից, ինչպես նաև, որ ընտրության կազմակերպումը հնարավորինս պահպանի դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը:

Ոչ դատավոր անդամները չպետք է ընտրվեն գործադիր իշխանության կողմից: Չնայած պետություններն օգտվում են իրենց ընտրական ընթացակարգերը հավասարակշռելու հայեցողությամբ, այդուամենայնիվ, ԵԴԽՄ-ն խորհուրդ է տալիս ոչ դատավոր անդամներին ընտրել չքաղաքականացված ընթացակարգով: Եթե ոչ դատավոր անդամները ընտրվում են տվյալ երկրի ազգային ժողովի կողմից,

²⁰ <https://rm.coe.int/168074779b>

²¹ Case of RAMOS Nunes De Carvalho E Sa v. Portugal, App N 55391/13, 57728/13, 74041/13, para 75, 21 June 2016

²² Venice Commission, Opinion on Recent Amendments to the Law on Major Constitutional provisions of the Republic of Albania, CDL-INF(1998)009, para. 9.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ապա ընտրվող անդամները չպետք է խորհրդարանի անդամ լինեն, և պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից՝ ընդդիմության աջակցությամբ և մասնակցությամբ, և որ ամենակարևորն է պետք է ապահովեն հասարակության լայն ներկայացվածությունը:

Դատական խորհրդի կազմի անդամների ընտրությունը կենտրոնական դեր ունի հաշվետվողականության և հետագա անկախության ապահովման համար: Նշանակման գոյություն ունեցող մոդելները տարբեր են, միևնույն ժամանակ ձևավորվել են ընդհանուր մոտեցումներ: Այսպես, **Դատական իշխանության եվրոպական ցանցը** ընդունել է, որ դատական խորհրդի անդամների նշանակումը պետք է այնպիսի համակարգ լինի, որը բացառի գործադիր կամ օրենսդիր մարմնի միջամտությունը²³: Այս մոտեցումը կարևորվում է նաև տեսական գրականության մեջ²⁴:

Ընդհանուր առմամբ, անդամների նշանակման հարցում **քաղաքական վերահսկողությունը** դիտարկվում է որպես անհարգալից մոտեցում և լուրջ խոչընդոտ դատարանների անկախության համար: Դատական խորհրդի անդամների նշանակման մեխանիզմը ազդում է դրա գործունեության և արդյունավետության վրա:

Ինչ վերաբերվում է գործադիր մարմնի ներգրավվածությանը դատական խորհրդի ձևավորմանը, ապա մի կողմից այն տարածված պրակտիկա է, մյուս կողմից՝ այն կարող է վստահության հետ կապված խնդիրներ առաջացնել: **Վենետիկի հանձնաժողովը** նշել է, որ գործադիր մարմնի ներկայացուցչությունը խորհրդի կազմում չի կարող խաթարել խորհրդի անկախությունը, սակայն, արդարադատության նախարարը չպետք է մասնակցություն ունենա խորհրդի որոշումների կայացմանը, օրինակ, կարգապահական պատասխանատվության հարցերով:

Արդարադատության նախարարության ներգրավվածությունը դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում մտահոգիչ է: Սակայն այն դեպքում, երբ վերջինիս ներգրավվածությունը տեղի է ունենում միայն կարգապահական վարույթի հարուցման փուլում՝ այսինքն, բացակայում է գործադիր մարմնի վճռորոշ դերը որոշման կայացման փուլում, ապա նման մոդելը համարվում է ընդունելի²⁵:

Դատական խորհուրդների լիազորությունների շրջանակը

Խորհրդի անդամների նշանակման հարցի հետ զուգահեռ առանձնակի կարևորվում է նաև խորհրդին տրված լիազորությունների շրջանակը: Ինչքան լայն են խորհրդին տրված լիազորությունները, այնքան մեծ է խորհրդի դերը: Մի կողմից, եթե խորհուրդը դատավորների նկատմամբ մեծ լիազորություններ ունի, ապա այն կարող է վերացնել քաղաքական գործիչների կողմից կիրառվող ճնշումը: Մյուս կողմից, նույն այդ լիազորություններն ու խորհրդին տրված իշխանությունը հնարավոր է նվազեցնի դատական իշխանության անկախությունը: Օրինակ, վարչարարական լիազորությունները, դատավորների նշանակումը կամ գործունեության գնահատումը բավարար հիմք կարող են ստեղծել որոշ

²³ ENCJ (2010–2011) Councils for the Judiciary report

²⁴ Guarneri C (2007) Courts and marginalized groups. Perspectives from Continental Europe. Int J Const Law 5(2):187–210

²⁵ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատավորներին ոգևորելու համար: Միննույն ժամանակ, խորհրդին տրված այդ լիազորությունները կարող են չարաշահվել²⁶:

ԵԴԽԽ 10-րդ կարծիքի համաձայն՝ խորհուրդները կենտրոնական դերակատարում պետք է ունենան հետևյալ հարցերում՝

- Դատավորների նշանակում և ընտրություն
- Դատավորների առաջխաղացում
- Դատավորների գնահատում
- Կարգապահական և էթիկայի հարցեր
- Բյուջեի վերահսկողություն և կառավարում
- Դատարանների վարչարարության ապահովում
- Դատավորների հեղինակության պաշտպանություն
- Հանրային պատասխանատվություն: թափանցիկություն, հաշվետվողականություն

ՀՀ-ում Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման օրենսդրական հիմքերը

ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ ՀՀ դատական օրենսգիրք) 79-րդ հոդվածի համաձայն՝ բարձրագույն դատական խորհուրդն /այսուհետ՝ ԲԴԽ/ անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Խորհուրդը կազմված է տասը անդամից, որոնցից հինգը դատավորներ են: Խորհրդի դատավոր անդամներին ընտրում է Դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Կազմում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր աստիճանների դատարաններից²⁷: Մյուս ոչ դատավոր անդամներին անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրման իրավունքի: Սահմանադրությամբ նախատեսվում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված խորհրդի անդամների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության պահանջներ: Ըստ այդմ, Դատական օրենսգրքի հոդված 83-ը սահմանում է, որ ԱԺ կողմից ընտրված անդամը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Խորհրդի նախագահի ընտրությունը

²⁶ Bobek M, Kosar D (2013) Global solutions, local damages: a critical study in judicial councils in Central and Eastern Europe. College of Europe Research Paper in Law 07/2013, at http://aei.pitt.edu/47507/1/researchpaper_7_2013_bobek_kosar.pdf. Accessed 7 Nov 2015

²⁷ ՀՀ Սահմանադրություն, 2015թվականի փոփոխություններով, հոդված 174



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն Խորհուրդն իր կազմից ընտրում է նախագահ՝ հաջորդաբար Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից: Խորհրդի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկում են համապատասխանաբար Ընդհանուր ժողովի կամ Ազգային ժողովի կողմից ընտրված բոլոր անդամների թեկնածությունները: Նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ²⁸:

Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրությունից հետո՝ հնգօրյա ժամկետում, խորհրդի տարիքով ավագ անդամը հրավիրում է խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում Ազգային ժողովի ընտրած անդամներից ընտրվում է խորհրդի նախագահ:

Ձևավորված ԲԴԽ կազմ և անդամներ

2018 թվականի փետրվարի 27-ի ՀՀ ԱԺ նստաշրջանի և հերթական նիստին քննարկվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի հինգ անդամների ընտրության կարգը²⁹:

Խորհրդի առաջին կազմի հինգ անդամները ներկայացվել են ՀՀ ԱԺ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունները միասին³⁰: Անդամների պաշտոններում ըստ այդմ առաջադրվել են՝ Գազիկ Հարությունյանի (պաշտոնավարման հնգամյա ժամկետ), Գևորգ Դանիելյան (պաշտոնավարման հնգամյա ժամկետ), Լիպարիտ Մելիքջանյանի (պաշտոնավարման հնգամյա ժամկետ), Հայկ Հովհաննիսյանի (պաշտոնավարման եռամյա ժամկետ) և Սերգեյ Մեղրյան (պաշտոնավարման եռամյա ժամկետ) թեկնածությունները:

Փետրվարի 28-ի կայացած ԱԺ նիստում ձայների մեծամասնությամբ ու փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվել են ներկայացված 5 անդամները: Քվեարկությանը մասնակցել է 98 պատգամավոր, որոնցից 96-ը քվեարկել են Գազիկ Հարությունյանի օգտին: Արդարադատության նախկին նախարար Գևորգ Դանիելյանը ստացել է 90 կողմ և 7 դեմ ձայն, Սերգեյ Մեղրյանը 87 կողմ և 10-ը դեմ ձայն, Հայկ Հովհաննիսյանը 86 կողմ և 11 դեմ, Լիպարիտ Մելիքջանյանը 82 կողմ և 15 դեմ³¹: Ընտրությունից հետո խորհրդի անդամները ԱԺ ամբիոնից կարդացել են երդման տեքստն ու ստորագրել այն:

Նմանապես, 2018 թվականի մարտի 1-ին կայացել է ՀՀ դատավորների հերթական տարեկան ընդհանուր ժողովը:

²⁸ ՀՀ Դատական օրենսգրքի, հոդված 84

²⁹ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10036&year=2018&month=02&day=27&lang=arm&view=print

³⁰ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9532&Reading=0>

http://www.parliament.am/draft_docs6/BDKH/HJD.pdf

http://www.parliament.am/draft_docs6/BDKH/HHK.pdf

³¹ <https://www.armeniatv.am/hy/66428-66428>

<https://analitik.am/news/view/389893>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ժողովի օրակարգում ընդգրկված է եղել նորաստեղծ Խորհրդի առաջին կազմի դատավոր անդամների ընտրության հարցը: Ըստ այդմ, քվեարկության արդյունքներով Խորհրդի անդամներ են ընտրվել³².

1. Արմեն Բեկթաշյանը, 5 տարի ժամկետով, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից, քրեական մասնագիտացմամբ
2. Անի Մխիթարյանը, 5 տարի ժամկետով, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից, քաղաքացիական մասնագիտացմամբ
3. Սերգեյ Չիչոյանը, 5 տարի ժամկետով, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանից
4. Արման Խաչատրյանը, 3 տարի ժամկետով, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանից, քաղաքացիական մասնագիտացմամբ
5. Ռուզաննա Հակոբյանը, 3 տարի ժամկետով, ՀՀ Վճռաբեկ դատարանից, քաղաքացիական և վարչական մասնագիտացմամբ

ԲԴԽ ձևավորման և կազմի վերաբերյալ հասարակական ընկալումներն ու կարծիքները տարբեր են եղել: Մասնագիտական համայնքը խորհրդի կազմի վերաբերյալ ավելի խիստ կարծիք է արտահայտել:

ԲԴԽ կազմը ինձ համար անակնկալ էր: Դատավորները՝ ոչնչով ակտիվ, ոչնչով աչքի չեն ընկել, տեսության զարգացմանը մասնակցելուն էլ ակտիվ դերակատարում չեն ունեցել:

Փորձագետ

Դատական համակարգը ունի իր ներքին կյանքը, գրված ու չգրված օրենքները, դատավորները լավ գիտեն յուրաքանչյուր դատավոր իրենից ինչ է ներկայացնում ու համակարգը ոնց է գործում, գիտեն իրար մարդկային ու մասնագիտական որակները, մակարդակը: Ու եթե կարգապահականի, առաջխաղացման ու նշանակման հարց է լինում, դատավորները ճիշտ են գնահատում, քանի որ ճանաչում են, իհարկե, սխալ էլ կարող է լինել: Նման ձև էր գործում ԱԽ-ն, քանի որ դատավորները մեծամասնություն էին: Հիմա եկան 5 օտարը մարդ, համակարգի համար օտար: Երբ այդ անդամները սկսում են սուբյեկտիվ ընկալմամբ գնահատել դատավորներին ու որոշում կայացնել, ստացվում է այն, ինչ մենք հիմա ունենք:

Փորձագետ

Հինգ իրավաբանները համախմբվել են, որ իրենց խոսքը անցնի, իրենց 5 ձայնը ունեն արդեն: Կարծես ԲԴԽ-ում ֆոնկցիա ձևավորված լինի: Այլախոսություն իրենց մեջ չի խրախուսվում, միաձայն է անցնում ամեն ինչ, իրենք պաղկվում են փակ գաղտնի քվեարկության հետևում:

Փորձագետ

³² <http://www.court.am/index.php?link=arm/left/news.htm>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲԴԽ հիմնական խնդիրը կադրերն են: Էդտեղ էլ պիտի լինի մրցութային: Հասարակությանը մասնավորապես իրավական հանրային համար լրիվ ճանաչելի պիտի լինեն, որ հասկանաս ' էս մարդու դիրքորոշումը էս է, էս մարդու անցած ուղին էս է, կաշկանդվելու է սրանից, չի կաշկանդվելու սրանից: Բա չիմանա՞ս: Պետք է թափանցիկ, բյուրեղյա վիճակ լինի: ԲԴԽ կազմի ընտրության մասին ո՞վ իմացավ:

Փորձագետ

Հիմք ընդունելով դատական օրենսգրքի 84 և 166-րդ հոդվածների դրույթները՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների կողմից 2018 թվականի մարտի 5-ին տեղի է ունեցել խորհրդի նախագահի ընտրությունը: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության սրահում Գևորգ Դանիելյանի, Ռուզան Հակոբյանի և Սերգեյ Մեդրյանի կազմով ստեղծված հաշվիչ հանձնաժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ խորհրդի նախագահ է ընտրվել պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը³³:

ԲԴԽ դատավոր անդամների համար պահանջվել է 10 տարվա փորձառություն, և որպես չափանիշ, միայն դա է հաշվի առնվել: Այլ չափանիշներ չկան, որոնք դրվեին ընտրության հիմքում, անհասկանալի է, թե այդ դատավորներին ինչի համար, 10 տարվա ինչպիսի գործունեության համար են ընտրել, ինչը խնդրահարույց է: Քանի որ ներկայիս կազմում կան դատավոր անդամներ, ովքեր որպես դատավոր չեն փայլել, իրենց մասնագիտական գիտելիքներով աչքի չեն ընկել, բայց ընտրվել են: Այդ դատավորները չեն հանդիսացել արդարադատության մարմնավորում, ընդհակառակը:

Փորձագետ

Խորհրդի անդամների համապատասխանելիությունը պահանջվող չափանիշներին

ԲԴԽ կազմը չի արտացոլում դատական իշխանության նկատմամբ ազդեցություն ունեցող մարմնի իմաստը, հեղինակությունը: Անդամներն են խնդրահարույց, ցենզերը: Վճռարեկ դատարանի դատավորների ցենզերն ավելի բարձր են: Կան անդամներ, որ առհասարակ իրավաբան չպետք է լինեին:

Փորձագետ

³³ <https://www.panorama.am/am/news/2018/03/05/%D4%B3%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AF-%D5%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/1915193>
<https://www.civilnet.am/news/2018/03/05/%D4%B3%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AF-%D5%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D4%B2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%AB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0/331096>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Արդեն իսկ ձևավորված և գործող խորհրդի կազմի ԱԺ կողմից ընտրված իրավաբան գիտնականների՝ մասնագիտական գործունեությունը ունի հետևյալ պատկերը.

Այսպես, խորհրդի **նախագահ Գագիկ Հարությունյանը** հանդիսանում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1996 թվականից մինչ 2018 թվականը հանդիսացել է ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ: 1997 թվականից հանդիսանում է Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) անդամ, 2009 թվականից՝ Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի Բյուրոյի անդամ:

Խնդիր է ԲԴԽ նախագահի ընտրությունը, ինչը կոնկրետ նպատակով ու պատվերով պաշտոն էր: Բայց Վենետիկին նախապես ասել էին, որ խորհրդի նախագահը դատավոր է լինելու, մինչդեռ հակառակը արեցին, իսկ Վենետիկը դա ընդունել էր արդեն որպես առաջադեմ քայլ:

Փորձագետ

ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրով նշանակվել է ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահ³⁴: Այս տեղեկությունը սակայն արտացոլված չէ Գագիկ Հարությունյանի՝ ԱԺ-ին ներկայացրած ինքնակենսագրականում³⁵:

Անդրադառնալով խորհրդի նախագահի ազգական կապերին և վերջիններիս զբաղեցրած պաշտոններին՝ պետք է արձանագրել, որ Գ.Հարությունյանի որդին՝ Արտակ Հարությունյանը 2016 թվականի տվյալներով եղել է ՀՀ Գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ: Դրանից առաջ եղել է ՀՀ Ազգային անվտանգության կիբերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնը³⁶: Գագիկ Հարությունյանի եղբայրը՝ Արզուման Հարությունյանը, 2010 թվականից հանդիսանում է ԱԱԾ ղեկավարի առաջին տեղակալ:

Խորհրդի **անդամ Գևորգ Դանիելյանի**՝ ԱԺ ներկայացրած ինքնակենսագրականից երևում է, որ վերջինս դասախոսական ու գիտաստեղծագործական աշխատանքը 1989 թվականից համատեղել է գործնական աշխատանքի հետ: 2007 թվականից մինչ 2010 թվականը եղել է ՀՀ արդարադատության նախարար, 2011 թվականից հանդիսացել է ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդականը: 2013 թվականին նշանակվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

³⁴ <http://www.president.am/hy/decrees/item/947/>
³⁵ http://www.parliament.am/draft_docs6/BDKH/Gagik_Harutyunyan.pdf
³⁶

<https://www.hraparak.am/posts/591f95a9e3d84d0d37fc52e2/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BE-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D5%B6%D5%B5%D5%A1-%D5%A3%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AF-%D5%B0%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%86%D5%B8%D5%BF%D5%B8>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ: 1999-2002 թթ հանդիսացել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և միջազգային իրավունքի, իսկ 2002-2004 թթ և 2010-2013թթ՝ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության մասնագիտացման գծով բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական պետական քննությունների հանձնաժողովի նախագահ:

Հատկանշական է, որ Գևորգ Դանիելյանը հանդիսացել է նաև ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ³⁷, ինչը սակայն արտացոլված չէ վերջինիս ինքնակենսագրականի մեջ³⁸:

Եվս մեկ ուշագրավ փաստ՝ համաձայն ՀՀ Հանրապետական կուսակցության պաշտոնական կայքէջում հասանելի տեղեկատվության՝ Գևորգ Դանիելյանը 2007 թվականի նոյեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է, 2008 թվականին եղել է նույն կուսակցության խորհրդի անդամ³⁹:

Խորհրդի մյուս անդամ Լիպարիտ Մելիքջանյանը 2005 թվականից ի վեր աշխատում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում՝ որպես դասախոս, 2007թ-ից՝ որպես ասիստենտ: 2014թվականին ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ստացել է դոցենտի գիտական կոչում՝ իրավաբանության մասնագիտությամբ⁴⁰:

Լիպարիտ Մելիքջանյանը 2017 թվականին «Ելք» դաշինքի նախընտրական ցանկով մասնակցել է ԱԺ խորհրդարանական ընտրություններին: Խորհրդի անդամը այս կապակցությամբ նշել է, որ քաղաքական գործունեությամբ զբաղվել է ընդամենը մեկ ամիս, որն է կուսակցության անդամ չի հանդիսացել, պարզապես ԱԺ ընտրությունների ժամանակ իր անունը ներառվել է «Ելք» դաշինքի ընտրությունների ցուցակում և ընտրության ժամանակ առաջադրել է իր թեկնածությունը Իջևանում որպես ռեյտինգային թեկնածու⁴¹:

Հայկ Հովհաննիսյանը նույնպես մասնագիտությամբ իրավաբան է, 1999թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ: 1999 թվականից հանդիսանում է ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին առընթեր արբիտրաժային դատարանի փոխնախագահ: 2004 թվականին Մեծ Բրիտանիայի միջազգային և համեմատական իրավական ուսմունքների ինստիտուտի կողմից հրավիրվել է Լոնդոն որպես այցելու գիտնական-հետազոտող:

2013 թվականի ի վեր հանդիսանում է «Հովհաննիսյան և գործընկերներ» ՍՊԸ փաստաբանական ընկերության գործընկեր:

³⁷ <http://www.president.am/files/legislation/947.pdf>

³⁸ http://www.parliament.am/draft_docs6/BDKH/Gevorg_Danielyan.pdf

³⁹ <http://www.hhk.am/ajax/persons.php?id=78&language=hy>

⁴⁰ http://www.parliament.am/draft_docs6/BDKH/Lipait_Melikjanyan.pdf

⁴¹ <https://www.panorama.am/am/news/2018/02/27/%D4%BC%D5%AB%D5%BA%D5%A1%D6%80%D5%AB%D5%BF-%D5%84%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84%D5%BB%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/1911924>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ի թիվս այլ նվաճումների և կարևոր մասնակցությունների Հ. Հովհաննիսյանը 2016 թվականին Հայաստանի Հաշտարարների Ինքնակարգավորվող Կազմակերպության հիմնադիր ժողովի կողմից միաձայն ընտրվել է կազմակերպության նախագահ⁴²:

Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից վերջինը **Սերգեյ Մեղրյանն** է, ով նույնպես մասնագիտությամբ իրավաբան է, վերապատրաստվել է Կենտրոնական եվրոպական համալսարանի Սահմանադրական և իրավական քաղաքականության ինստիտուտում: 2007 թվականից ի վեր աշխատում է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնում որպես ամբիոնի վարիչ: 2015 թվականից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է, միաժամանակ նաև ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

2015-2018 թվականներին հանդիսացել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովի անդամ⁴³:

Ս.Մեղրյանի անվան հետ է կապվել 2018 թվականին լուրերով տարածված տեղեկությունը այն մասին, որ վերջինս փորձել է որոշակի դատական գործերով ազդել գործով ելքի վրա՝ հաշվի առնելով ունեցած կապերն ու շահագրգռվածությունը⁴⁴:

Խորհրդի դատավոր անդամները

Արմեն Բեկթաշյանը 1996 թվականին ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, 1998 թվականին ավարտել է զինվորական ծառայությունը: Մեկ տարի անց նշանակվել է Արարատի մարզի դատախազության քննիչ:

2003 թվականին նշանակվել է Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա համայնքի դատախազության քննիչ: 2005-ին նշանակվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների դատախազության ավագ դատախազ:

2007-2014թթ-ին աշխատել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

2017թ-ին նշանակվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր⁴⁵:

Հանրության մեջ Ա.Բեկթաշյանը առավել հայտնի է Բուդաղյանների գործով, ինչպես նաև Նորք-Մարաշի զինված խմբի գործի քննությամբ, ինչը անցնում էր բավականին լարված մթնոլորտում: Խորհրդի անդամը կապվում է նաև պաշտպանության նախկին փոխնախարար Վահան Շիրխանյանի հետ ունեցած լարված հարաբերություններով⁴⁶:

⁴² http://www.parliament.am/draft_docs6/BDKH/Hayk_Hovhannisyan.pdf

⁴³ http://www.parliament.am/draft_docs6/BDKH/Sergey_Meghryan.pdf

⁴⁴ <http://araratnews.am/bardzraguyn-datakan-xorhordi-theknatcun-i-shah-zokhanch-bzhshki-phordzel-e-azdel-khnuthyan-vra/>
<https://www.aysor.am/am/news/2018/05/05/%D5%80%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF/1410557>

⁴⁵ <http://iravaban.net/183658.html>

⁴⁶ <https://www.hraparak.am/posts/5a9f83f94b0f5608e64620de/%D5%B4%D5%A5%D5%AF%D5%A8-%D5%B4%D5%A5%D6%80%D5%AA%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%BF->



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Հակոբյանը, խորհրդի անդամ է ընտրվել 3 տարի ժամկետով: 2002-ից մինչ 2008 թվականը աշխատել է որպես ՀՀ տնտեսական դատարանի դատավոր: 2008 թվականից մինչ 2015 թվականն աշխատել է ՀՀ վարչական դատարանի դատավոր, իսկ 2015 թվականից նշանակվել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր:

Ըստ տարածված տեղեկատվության՝ Ռուզաննա Հակոբյանը հանդիսանում է նաև Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ, Սփյուռքի նախկին նախարար Հրանուշ Հակոբյանի քրոջ դուստրը⁴⁷:

Խորհրդի անդամ դատավոր **Արմեն Խաչատրյանը** նույնպես ընտրվել է 3 տարի ժամկետով: Վերջինս ներկայացված է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանից, քաղաքացիական մասնագիտացմամբ:

Ա.Խաչատրյանը 1993 թվականին ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, 1993-1994 թվականներին եղել է ժամկետային զինվորական ծառայության մեջ: 1995 թվականից մինչ 1999 թվականը աշխատել է ՀՀ ՆԳ և ԱԱՆ քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզային քննչական բաժնում՝ որպես քննիչ:

Աշխատել է նաև Գյումրիի կայագործի զինվորական դատախազությունում՝ որպես քննիչ, նույն դատախազությունում աշխատել է նաև որպես ավագ քննիչ:

2 տարի աշխատել է որպես Գյումրիի կայագործի զինվորական դատախազի օգնական, նաև ավագ օգնական:

2006-2007 թթ-ին աշխատել է Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում: 2007 թվականից աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, 2014 թվականից հանդիսացել է ՀՀ Արդարադատության խորհրդի անդամ⁴⁸:

Խորհրդի անդամը հայտնի է նրանով, որ 2008 թվականին բավարարեց հարկային մարմինների բողոքն ընդդեմ Գյումրիում գործող ընդդիմադիր «Գալա» հեռուստատեսության, որը, ըստ հարկայինի, 51 հազար եվրո հարկերից էր խուսափել: Արմեն Խաչատրյանի կայացրած վճռով

[http://politik.am/%D5%B0-%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D6%84%D6%80%D5%B8%D5%BB-%D5%A1%D5%B2%D5%BB%D5%AB%D5%AF%D5%A8-%D5%AF%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%BE%D5%AB-%D5%A2%D5%A1%D6%80/](http://politik.am/%D5%B0-%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A2%D5%B8%D5%B2%D5%B8%D6%84%D5%A8-%D5%B4%D5%B5%D5%B8%D6%82%D5%BD%D5%A8-%D5%A9%D5%A1%D6%80%D5%BD%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%BE%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6-%D5%B7%D5%AB%D6%80%D5%AD%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A5%D5%BF-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%B8%D5%BE-%D5%A5%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%B6%D5%AB-%D5%A2%D5%A4%D5%AD-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8)
⁴⁸ <http://iravaban.net/183748.html>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գալա» հեռուստատեսությունը եթերազրկվեց: 2017 թվականին ՄԻԵԴ-ը վերացրեց Արմեն Խաչատրյանի վճիռը, 3900 եվրոյի փոխհատուցում սահմանելով «Գալա»-յի համար⁴⁹:

Խորհրդի

անդամ **Սերգեյ Չիչոյանը** նույնպես ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: Դատավորի պաշտոնում սկսել է աշխատել 1999 թվականից՝ Գեղարքունիքի մարզի Առաջին աստիճանի դատարանում:

2003 թվականից մինչ 2008 թվականն աշխատել է Գեղարքունիքի մարզի առաջին աստիճանի դատարանի նախագահի պաշտոնում: 2008-2009 թվականը զբաղեցրել է Հյուսիսային քրեական դատարանի նախագահի պաշտոնը:

2009 թվականից հանդիսացել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր:

Ս. Չիչոյանը նույնպես հանդիսացել է ՀՀ արդարադատության խորհրդի անդամ՝ 2014 թվականից⁵⁰:

Համաձայն Սերգեյ Չիչոյանի կողմից ներկայացրած բարձրաստիճան պաշտոնատար անձի 2013 թվականի գույքի, եկամուտների և փոխկապացված անձանց հայտարարգրի՝ վերջինիս եղբայրը՝ Արմեն Չիչոյան, հանդիսանում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ⁵¹:

2017 թվականի հայտարարագրերի համաձայն՝ Խորհրդի անդամն ու կինը միասին հայտարարգրել են 114.260 ԱՄՆ դոլար՝ որպես փոխառության գումար տվյալ հարկային տարվա սկզբում⁵²: Ներկայացված հայտարարագրերի համաձայն Ս. Չիչոյանը մեկ տարում վաճառել է երկու ավտոտնակ՝ 11 միլիոն 640 հազար և 282 հազար դրամ արժողությամբ: Իսկ խորհրդի անդամի կինը վաճառել է բնակարանը՝ 60 միլիոն 140 հազար դրամով: Կնոջ հայտարարագրի համաձայն՝ ամուսնու կողմից վաճառված ավտոտնակները նաեւ իր սեփականությունն են՝ ավտոտնակների վաճառքի մասին տվյալներ կան նաեւ իր հայտարարագրում: Ամուսինները համասեփականատեր են ոչ միայն անշարժ գույքի, այլև փոխառությունների դեպքում⁵³:

Դատավոր **Անի Մխիթարյանը** խորհրդի կազմում նշանակվել է 5 տարի ժամկետով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից: 1989-1994 թթ-ին վերջինս սովորել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: 1996-2005 թվականն աշխատել է ՀՀ Սահմանադրական դատարանում՝ որպես առաջատար մասնագետ, այնուհետ՝ որպես վարչության պետի տեղակալ:

⁴⁹ http://forrights.am/sorces/print.asp?id=13&ln=1&page_id=109

<https://www.aravot.am/2018/03/02/940405/>

⁵⁰ <http://iravaban.net/183747.html>

⁵¹ <http://www.ethics.am/hy/>

⁵² <http://www.ethics.am/hy/>

⁵³ <https://news.am/arm/news/452482.html>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2005-2008 թթ-ին աշխատել է Լոռու մարզի առաջին աստիճանի դատարանի դատավոր, 2008-2009թթ-ին աշխատել է Հյուսիսային քաղաքացիական դատարանի դատավոր: 2009թ-ին նշանակվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր⁵⁴:

2016 թվականին ճանաչվել է «Տարվա լավագույն դատավոր»:

2017 թվականին փաստաբանների կողմից ներկայացվել է երկու դիմում՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին և ՀՀ Արդարադատության նախարարին դատավոր Անի Մխիթարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին⁵⁵:

⁵⁴ <http://iravaban.net/183745.html>

⁵⁵ <http://iravaban.net/168649.html>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները

Դատավորների ընտրություն և նշանակում

Միջազգային չափանիշներ

Դատավորների նշանակման մեխանիզմները հիմնականում կարելի է բաժանել երկու հիմնական խմբի⁵⁶.

Դատավորների ընտրովի համակարգ

Ընտրովի համակարգերում առանձնանում են երկու տարբերակ.

1. Ժողովրդի կողմից թեկնածուների ուղղակի ընտրություն քվեարկության միջոցով: Այս տարբերակը, սակայն քիչ է հանդիպում (ԱՄՆ):
2. Թեկնածուների ընտրություն Խորհրդարանի միջոցով (Սլովենիա, Ուկրաինա):

Նման եղանակը, ըստ էության, ենթադրում է մեծ ժողովրդավարության ապահովում, մինչև ժամանակ, հնարավոր է նաև նման գործընթացը ներառի քաղաքականության տարբեր, քանզի դատավորները հնարավոր է ներգրավվեն քաղաքական քարոզարշավների մեջ և ամբողջ նշանակման գործընթացը քաղաքականացվի:

Ուղղակի ընտրության միջոցով դատավորների նշանակումը հանդիպում է ԱՄՆ որոշ նահանգներում: Նշանակման նման համակարգը հիմնվում է այն մոտեցման վրա, որ քաղաքացիները պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց սեփական դատավորներին: Այս համակարգի քննադատները, սակայն նշում են, որ նման ընտրությունը չի ենթադրում իմացության հիման վրա կատարված ընտրություն և այն չի պաշտպանում դատական անկախությունն ու դատարանների անկողմնակալության սկզբունքը:

Որոշ նահանգներում ստեղծվել են իրավաբաններից, համայնքի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովներ, որոնք համայնքի ղեկավարին են ներկայացնում որակավորում ստացած իրավաբանների ցուցակը: Ինչից հետո ղեկավարը նրանցից մեկին նշանակում է դատավորի պաշտոնում: Որոշ ժամանակ պաշտոնավարելուց հետո տեղի է ունենում պաշտոնավարման շարունակության ընտրություն: Նույնիսկ այս դեպքում քննադատվում է այն հանգամանքը, որ ընտրողները վստահելի տեղեկության չեն տիրապետում որակական ընտրություն կատարելու համար:

Որոշ նահանգներում ստեղծվել են մասնագիտական կառույցներ, որոնց իրավասություն է տրվել գնահատել վերընտրվելու ցուցակում հայտնված դատավորների մասնագիտական գործունեությունը: Գնահատումը իրականացվում է դատավորների աշխատանքին մոտ կանգնած քաղաքացիների,

⁵⁶ Council Of Europe's Standards Of The Judicial And Prosecutorial Training And Nomination Process CoE, Recommendation (94)12 European Commission For Democracy Through Law (Venice Commission), Cdl-Ad(2007)028 CDL-AD(2003)019, Opinion on three Draft Laws Proposing Amendments to the Constitution of Ukraine



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

իրավաբանների հետ հարցումների արդյունքում, ինչի հիմքում դրվում է դատավորի բարեխղճությունը, իրավական կարողությունները, հաղորդակցության հմտությունները, պարտաճանաչությունը և այլն: Արդյունքերը, այնուհետև, հասանելի են դառնում ընտրողներին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքացիները իրականում տրամադրված տեղեկությունը ընտրություն կատարելիս ընդունում են որպես ի գիտություն:

Միացյալ Նահանգներում ֆեդերալ դատավորները առաջադրվում են Նախագահի կողմից և նրանց պաշտոնավարումը հաստատվում է Սենատի ընտրությամբ: Հատկանշական է, որ առաջադրած թեկնածուների ընտրության հարցում Սենատի դերը մեծացել է:

Դատավորների նշանակման համակարգ

Նման համակարգում նշանակող մարմինը կարող է լինել երկրի ղեկավարը, ինչը առկա է մի շարք երկրներում:

Միաժամանակ, էական է խորհրդարանական մեթոդի և կիսանախագահական մեթոդի միջև տարբերակումը: Առաջինի պարագայում նախագահը ավելի շատ ֆորմալ դեր ունի, և կարող է դուրս մնալ կուսակցական քաղաքականությունից:

Երկրի ղեկավարը որքանով է ազատ նշանակումն իրականացնելիս: Հետևաբար, այդ գործընթացում հիմնական դերակատարում պետք է ունենա անկախ մարմին, ինչպիսին է դատական իշխանության ինքնակառավարման մարմինը: Նման մարմնի կողմից առաջարկները հնարավոր է մերժվեն միայն բացառիկ դեպքերում, և երկրի ղեկավարը չպետք է իրավասություն ունենա դատավորի պաշտոնում նշանակել այնպիսի թեկնածուի, ով ընդգրկված չէ ներկայացված առաջարկների մեջ: Քանի դեռ երկրի ղեկավարը կաշկանդված է անկախ խորհրդի կողմից ներկայացված թեկնածուների ցուցակով, նրա կողմից իրականացվող նշանակումը խնդրահարույց չէ:

Առկա են նաև մոդելներ, որ դատավորի թեկնածուները նշանակվում են կառավարության կողմից, օրինակ՝ Շվեդիայում: Գործում է նաև երկրի ղեկավարի ու կառավարության կողմից նշանակման մոդելը⁵⁷: Օրինակ, Գերմանիայում դատավորները նշանակվում են նախագահի կողմից՝ Դատավորների նշանակման կոմիտեի կողմից ներկայացմամբ: Կոմիտեն բաղկացած է 16 նախարարներից և խորհրդարանի կողմից ընտրված 16 անդամների կողմից: Նախագահի կողմից նշանակումը ձևական գործընթաց է, սակայն որոշման կայացման համար պատասխանատու է նախարարը: Չնայած գերմանական մոդելը ենթարկվել է քննադատության քաղաքական հնարավոր ճնշումների ենթարկվելու համար, այնուհանդերձ, այն պարունակում է օբյեկտիվությունն ապահովող երաշխիքներ և զսպիչների համակարգ, արդյունավետ գործող դատական վերահսկողություն՝ մասնավորապես նշանակումների որոշումների բողոքարկման համար և ամենակարևորը՝ իրավական մշակույթ, որտեղ դատավորների անկախությունը հարգված է⁵⁸:

⁵⁷ Council Of Europe's Standards Of The Judicial And Prosecutorial Training And Nomination Process

⁵⁸ <https://trema.nvvr.org/editie/2018-05/recruitment-and-appointment-of-judges-and-justices-in-europe-and-the-us>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մեկ այլ մոդել է արդարադատության խորհուրդների կողմից ուղղակի նշանակումը: Օրինակ, Իտալիայում և Պորտուգալիայում արդարադատության խորհուրդը իրավունք ունի նշանակել, տեղափոխել և որոշում կայացնել դատավորի առաջխաղացման վերաբերյալ, ինչպես նաև կարգապահական վերահսկողություն իրականացնել: Յուրաքանչյուր դեպքում, սակայն, պետք է ապահովել, որ նշանակման և պաշտոնական առաջխաղացման հարցերը հիմնվեն թեկնածուի արժանիքների վրա:

Դատավորների ընտրության հիմքում դրվող չափանիշները

Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնցով սահմանվում են դատավորների ընտրության հիմքում դրվող չափանիշները:

Մասնավորապես, ԵԽ Նախարարների կոմիտեի (2010)12 հանձնարարականի համաձայն՝ դատավորների ընտրության հարցերը պետք է հիմնված լինեն օրենքով կամ իրավասու մարմինների կողմից սահմանված **օբյեկտիվ չափանիշների** վրա: Ընտրության որոշումները, ըստ այդմ, հիմնվում են թեկնածուի՝

- իմացության,
- որակումների,
- կարողությունների ու
- հմտությունների վրա՝

Հաշվի է առնվում, թե ինչքանով է թեկնածուն ունակ գործը քննել օրենքի կիրառմամբ ու մարդու իրավունքները հարգելով⁵⁹:

Օբյեկտիվ չափանիշների պահանջ ներկայացվել է նաև **Դատավորների եվրոպական ասոցիացիայի կողմից**⁶⁰: Վենետիկի հանձնաժողովն այս առնչությամբ սահմանում է, որ դատավորների նշանակումը կարևոր է նրանց անկախությունն ու անկողմնակալությունը երաշխավորելու համար, խորհուրդ է տրվում, որ նշանակման կարգը մանրամասն նկարագրվի Մահմանադրությամբ⁶¹: Նմանատիպ կարծիք արտահայտվել է նաև ԵԱՀԿ փորձագետների կողմից⁶²: Ավելին, դատավորների կամ թեկնածուների նկատմամբ չպետք է որևէ խտրական մոտեցում կիրառվի՝ կախված որևէ հիմքից՝ սեռ, ռասա, մաշկի գույն, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային կամ սոցիալական ծագում: Միաժամանակ, տվյալ պետության քաղաքացի լինելու պահանջը չպետք է դիտարկվի որպես խտրական մոտեցում:

⁵⁹ <https://rm.coe.int/16807096c1> , Recommendation CM/Rec (2010)12 and explanatory memorandum

⁶⁰ Judges' Charter in Europe (European Association of Judges) (1997)

⁶¹ CDL-AD(2008)010, Opinion on the Constitution of Finland

⁶² OSCE, Human Dimension Meeting, Strengthening Judicial Independence And Public Access To Justice, Working Group I: Judicial Administration With A Special Focus On Judicial Councils



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրների մեծ մասում դատավորների նշանակման և առաջխաղացման չափանիշները սահմանված են օրենքներով: Սրանից բացառություն են կազմում այն երկրների համակարգերը, որտեղ նախատեսված է հայեցողական լիազորություն դատավորներին ընտրող մարմնի համար, ինչը երբեմն կարող է քաղաքական առանձնահատկություններ ունենալ⁶³: Նման հայեցողությունը հնարավոր է տեղի ունենա, երբ ընտրությունը կատարվում է օրենսդիր մարմնի կողմից:

Մեկ այլ հանձնարարականով սահմանվել է, որ նշանակման որոշումները պետք է հիմնվեն իմացության, անձնային որակումների, բարեխղճության, կարողությունների ու արդյունավետ աշխատանքի վրա⁶⁴: Որպես չափանիշ կարող են դիտարկվել նաև թեկնածուի քննական ավարտական արդյունքները, անձնական որակները և այլ չափանիշներ⁶⁵:

ԵԱՀԿ կողմից այս և նմանատիպ չափանիշները խմբավորվել են երկու հիմնական տեսակի՝ *օբյեկտիվ և սուբյեկտիվ* բնույթի չափանիշների⁶⁶: Ի հավելումն սահմանվել է, որ հանրային հասանելիություն և առավելագույնս լեգիտիմություն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել դատական իշխանության բազմազանությունը: Եվ դատական իշխանության բոլոր մակարդակներում պետք է ապահովվի գենդերային ներկայացվածությունը:

Դատական պաշտոնների համար չպետք է լինի խտրականության որևէ դրսևորում: Այստեղ ևս սահմանվել է, որ դատավորի կամ թեկնածուի նկատմամբ քաղաքացիության պահանջի ներկայացումը չի կարող դիտարկվել որպես խտրականության դրսևորում:

Դատավորների ընտրության վերաբերյալ որոշում կայացնող մարմինը պետք է անկախ լինի օրենսդիր և գործադիր մարմնից: Դատավորներին ընտրելիս պետք է բացառվի կոռուպցիոն ցանկացած երևույթի դրսևորում⁶⁷: Այն դեպքում, երբ օրենքով նախատեսվում է պետության գլխի կողմից դատավորների թեկնածուների նշանակում, ապա նման կարգավորումը խնդիր չէ, եթե կա անկախ ու կոմպետենտ մարմին, որը կներկայացնի իր կարծիքն ու առաջարկները:

Դատավորների եվրոպական խորհրդատվական խորհրդի 1-ին կարծիքով սահմանվել է, որ մարմինները, որոնք պատասխանատու են դատավորների նշանակման և առաջխաղացման համար, պետք է ընդունեն, հրապարակեն ու պրակտիկայում կիրառեն օբյեկտիվ չափանիշներ, որպեսզի ապահովվի դատավորների ընտրությունն ու նշանակումը վերջիններիս որակավորումների, բարեխղճության ու կարողությունների հիման վրա: Արժանիքներն այս առումով չեն *վերաբերում սոսկ իրավական գիտելիք*

⁶³ CDL-AD(2009)023, Opinion on the Draft Criteria and Standards for the Election of Judges and Court Presidents of Serbia

⁶⁴ Recommendation (94)12 of the Committee of Ministers of CoE

⁶⁵ OSCE, Opinion On The Law 29/1967 Concerning The Judicial System, The Supreme Council Of The Judiciary, And The Status Of Judges In Tunisia

(As Amended Up To 12 August 2005)

⁶⁶ Ibid 3

⁶⁷ Ibid 3



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կամ ակադեմիական հմտություններին, այլ ներառում են նաև բնավորության գծերը, հաղորդակցվելու, կշռադատելու, արդյունավետ գործելու կարողությունները⁶⁸:

Ընտրությունը պետք է ներառի մտավոր և անձնային բարձր որակներ, ինչպես նաև էթիկապես ընդունելի աշխատանք ու ինքնաարտահայտվելու կարողություններ: Մտավոր կարողությունների պահանջը ենթադրում է պատշաճ մշակութային ու իրավական գիտելիքներ, անալիտիկ հմտություններ և ինքնուրույն որոշում կայացնելու կարողություն:

Անհրաժեշտ է նաև ունենալ բարձր անձնային որակներ, ինչպիսին է պարտավորությունների կատարման հարցում պատասխանատվության ստանձնումը, ինչպես նաև անկախության, համոզիչ լինելու, սոցիալապես հաղորդակցվելու, համագործակցելու կարողություններ: Անկախ նրանից, թե ինչ ընթացակարգ է նախատեսում նշանակումը, կարևոր է, որ ընտրությունը իրականացվի անկախ մարմնի կողմից:

Նշանակում կատարելիս քաղաքական բնույթի գործոնները չպետք է օգտագործվեն և որևէ ազդեցություն ունենան որոշումների վրա⁶⁹: Արդարադատության խորհուրդների եվրոպական ցանցի դիրքորոշմամբ՝ նշանակման որոշումները պետք է ընդունվեն օբյեկտիվ ու նախապես սահմանված չափանիշների հիման վրա, զերծ լինեն ցանկացած տեսակի քաղաքական կողմնապահությունից կամ ցանկացած այլ ազդեցությունից⁷⁰:

Պահանջվող չափանիշների վերաբերյալ մոտեցում արտահայտվել է նաև **Դատավորների կարգավիճակի վերաբերյալ Եվրոպական խարտիայի** կանոնների մեջ: Վերջիններս առանձնակի շեշտադրում են ազատ և անկաշկանդ իրավական հարցերի գնահատման կարողությունը, ինչպես նաև օրենքը պրակտիկայում կիրառելու կարողությունները: Խարտիան բացառում է թեկնածուի ընտրությունը մերժելը՝ պայմանավորված վերջինիս սեռով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, փիլիսոփայական, կրոնական կամ քաղաքական հայացքներով⁷¹: Խարտիայի կանոնները սահմանում են նաև, որ դատավորի պաշտոնում նշանակված անձը սկզբունքորեն չի կարող զբաղեցնել մեկ այլ դատական պաշտոն կամ այլ տեղ տեղափոխվել առանց իր համաձայնության: Միակ բացառությունը այս կանոնից վերաբերում է այն դեպքերին, երբ դատավորի տեղափոխությունը կատարվում է որպես կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառում:

Բանգալորյան սկզբունքները իրենց հերթին պահանջում են, որ Թափուր պաշտոնները այնպես ներկայացվեն, որ հնարավորություն տա համապատասխան թեկնածուներին տեղեկանալ և ներկայացնել իրենց թեկնածությունը⁷²: Սկզբունքների մեկնաբանությունները նախատեսում են նաև, որ դատավորի

⁶⁸ Opinion N 1 of the CCJE

⁶⁹ Consultative Council Of European Judges (Ccje), Ccje(2017)5prov5

⁷⁰ Ibid 9

⁷¹ European Charter on the statute for judges

⁷² Measures For The Effective Implementation Of The Bangalore Principles Of Judicial Conduct



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

պաշտոնում ընտրված անձիք լինեն բարեխիղճ և տիրապետեն անհրաժեշտ որակավորումներին ու կարողություններին⁷³:

Չափանիշների հստակությունը

Վենետիկյան հանձնաժողովի կողմից կարևորվում է դատավորների թեկնածուների ընտրության չափանիշների հստակությունը: Մա պայմանավորված է նրանով, որ հասկանալի լինի, թե ինչպես է հնարավոր, որ լավագույն կամ ցուցակների առաջին տեղերի թեկնածուները չեն նշանակվում դատավորի պաշտոնում, այլ նշանակվում է ավելի քիչ միավոր ունեցող դատավորը⁷⁴:

Մերֆայի՝ դատավորների նշանակման և ներկայացվող պահանջների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքում տեղ են գտել դատավորին ներկայացվող պահանջների հետևյալ մեկնաբանությունները: Այսպես, դատավորին ներկայացվող պահանջները սահմանում են, որ դատավորի պաշտոնի համար պահանջվող չափանիշները, ի լրումն տարիքի, ազգության, առողջական վիճակի և այլն, նախատեսեն նաև որակավորման առկայություն, կարողություններ և արժանիքներ:

Որակավորումը ներառում է և տեսական և պրակտիկ անհրաժեշտ գիտելիքների առկայություն: *Կարողություններն այն որակն է, ինչը անհրաժեշտ է գիտելիքները դատավորի պաշտոնում կիրառելու համար:* Արժանի լինելու չափանիշը ներառում է դատավորի էթիկական որակները և ըստ այդմ նաև վարքագիծը: Մա ներառում է՝

- ազնվությունը,
- գիտակից լինելը,
- հավասարության նկատմամբ մոտեցումները,
- արժանապատվությունը,
- հետևողականություն և լավ օրինակ ծառայելու կարողությունը:

Այստեղ նշվում է նաև կասկածելի, դատարանի նկատմամբ վստահությունը խաթարող վարքագծից զերծ մնալու հանգամանքների մասին, ոչ քաղաքակիրթ պահվածքի և անհանդուրժողականության, ոչ կոռեկտ բառերի, հագուստի մասին:

Տոեսական գիտելիքների գնահատման համար հաշվի է առնվում ուսման ընթացքում ստացված գնահատականները, գիտական և մասնագիտական հոդվածների տպագրությունը, իսկ պրակտիկ կարողությունները՝ փորձի հիման վրա: Մրան զուգահեռ նաև նախատեսված է այլ հանգամանքները հաշվի առնելու պայմանը, ինչը հանձնաժողովի կողմից գնահատվել է չափազանց լայն և անորոշ՝ սուբյեկտիվ մեկնաբանության հանգեցնելու ռիսկերով:

Վենետիկյան հանձնաժողովը նշել է, որ օրինակ, կարողությունները որպես չափանիշ գնահատելիս, պետք է լինի նաև որոշակի սանդղակ, որի հիման վրա հնարավոր կլինի դա որոշել :Հանձնաժողովը նշել

⁷³ https://www.unodc.org/documents/nigeria/publications/Otherpublications/Commentry_on_the_Bangalore_principles_of_Judicial_Conduct.pdf

⁷⁴ Opinion No905/2017, on the former Yugoslav Republic of Macedonia



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Է նաև, որ այդ պահանջները պրակտիկայում ճիշտ գնահատելը չափազանց կարևոր է՝ սուբյեկտիվ մոտեցումները բացառելու համար⁷⁵:

Դատարանների նախագահների ընտրությունը

Ինչ վերաբերում է դատարանի նախագահի ընտրությանը, ապա ԵԴԽԽ-ն գտնում է, որ դատարանների նախագահների ընտրության գործընթացը պետք է լինի նույն կերպ, ինչպես մյուս ատյանի դատարանների դատավորների ընտրությունը: Ինչը կներառի թեկնածուի գնահատումը և սահմանված չափանիշների հիման վրա համապատասխան մարմնի կողմից ընտրությունը կամ նշանակումը: Յուրաքանչյուր դեպքում, ընտրությունը պետք է մրցակցային գործընթաց լինի, որտեղ ընտրության հիմքում դերակատարում կունենան դատավորի արժանիքները, որակավորումը, բարեխղճությունը, կարողությունն ու արդյունավետ աշխատանքը:

Որոշ երկրներում դատարանների նախագահները ընտրվում են դատավորների կողմից: ԵԴԽԽ նշում է, որ նման դեպքերում նույնպես պետք է ապահովել, որ որպես ընտրության օբյեկտիվ հիմք նախատեսվեն նաև թեկնածուի արժանիքներն ու կարողությունները⁷⁶:

Դատարանների նախագահների ընտրության հարցում բացի ընդհանուր չափանիշներից, պահանջվում է նաև դատարանի գործունեությունը կազմակերպելու և ղեկավարելու կարողություններ: Սա ներառում է նաև դատարանի վարչարարության կարողություններ, կոլեգաների կողմից հարգանքի վայելում, այլ կառույցների հետ համագործակցելու ունակություն, խնդիրներ լուծելու հմտություն և այլն: Հանձնաժողովն ընդունել է, որ նման չափանիշներ նախատեսելը դատարանի նախագահ ընտրելու հարցում տեղին է, և նման պահանջները պետք է տեղ գտնեն նորմատիվ տեքստերում:

Ամփոփելով դատավորների նշանակման համար վերոնշյալ չափանիշները՝ կարող ենք դրանք դասակարգել երկու հիմնական խմբի.

ՕԲՅԵԿՏԻՎ ԲՆՈՒՅԹԻ	ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲՆՈՒՅԹԻ (անձնային)
Մասնագիտական իմացություն	Անձնային բարձր որակներ
Մասնագիտական կարողություններ	բարեխղճություն
Աշխատանքի արդյունավետություն	Բնավորության գծեր
Համապատասխան ուսումնառության ավարտական արդյունքները	Հաղորդակցվելու, կշռադատելու ունակություն
Համագործակցելու ձիրք	Պատասխանատվություն
Համոզիչ և հասկանալի խոսք	Արդարության ձգտում

⁷⁵ Opinion On The Draft Criteria And Standards For The Election Of Judges And Court Presidents Of Serbi Cdl-Ad(2009)023

⁷⁶ Opinion of the CCJE Bureau, CCJE-BU(2017)9REV



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ընտրության համար պատասխանատու մարմինները

Դատավորների նշանակման գործընթացում պատասխանատու մարմինը, որպես կանոն, պետք է անկախ լինի գործադիր իշխանությունից⁷⁷: Դատավորների նշանակման և ընտրության համար պատասխանատու մարմինը պետք է ինքնուրույնության ու անկախության առավելագույնս երաշխիքներ ունենա: Վերջինիս կողմից կայացվող որոշումները պետք է ցանկացած տեսակի ազդեցությունից զերծ լինեն:

Այն դեպքում, երբ սահմանադրական կամ այլ նորմերով պահանջվում է, որ պետության կամ կառավարության գլուխը կամ Ազգային ժողովը որոշում կայացնեն դատավորների ընտրության և նշանակման վերաբերյալ, ապա դատական իշխանության ներսում գործող անկախ և իրավասու որևէ մարմին պետք է առաջարկություն ներկայացնի կամ կարծիք հայտնի նշանակման վերաբերյալ, ինչին պետք է հետևի նշանակող մարմնի որոշումը: Նման անկախ մարմինները պետք է հանրությանը տեսանելի լինեն և հանդես գան ներկայանալի/ընդգրկուն կազմով⁷⁸: Մարմնի կազմում դատավորներից բացի պետք է լինեն իրավաբաններ ու փորձագետներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Պատասխանատու մարմինը պետք է երաշխավորի նաև թեկնածուի կողմից նշանակման գործընթացում անարդարացի վերաբերմունքի կամ որոշման կապակցությամբ ներկայացված բողոքի արդյունավետ քննությունը⁷⁹:

Ըստ այդմ՝ դատական իշխանության անկախությունը երաշխավորող՝ դատավորների նշանակման ընդունելի մեթոդ է հանդիսանում արդարադատության խորհրդի հիմնադրումը, որը իր կազմի, գործառույթների և ինքնուրույնության համար կունենա սահմանադրական երաշխիքներ⁸⁰: Նման խորհուրդը պետք է որոշիչ դեր ունենա դատավորների նշանակման և առաջխաղացման գործում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառվող կարգապահական վարույթներում: Նշանակման գործընթացում արդարադատության խորհուրդները որպես ընդունելի տարբերակ նշվում է նաև Բանգլադեշյան սկզբունքներում⁸¹:

Վենետիկի հանձնաժողովը այն կարծիքին է, որ արդարադատության խորհուրդները պետք է որոշիչ դեր ունենան դատավորների ընտրության գործում, քանի որ նման փորձագիտական և անկախ մարմնի դերը ընտրության հարցում ավելի ընդունելի է⁸²: Անկախ նրանից դատավորների նշանակման ինչ համակարգ է ներդրվել պետության կողմից, պետք է գոյություն ունենա մարմին, որը անկախ կլինի գործադիր և օրենսդիր մարմիններից, որի կազմում անդամների առնվազն կեսը կլինեն դատավորներ, ովքեր ակտիվ

⁷⁷ Ibid 2, Ibid 4, ibid 5, 9, ibid 20,

Report On The Independence Of The Judicial System Part I: The Independence Of Judges Adopted By The Venice Commission At Its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010)

⁷⁸ Recommendation CM/Rec (2010)12 and explanatory memorandum

⁷⁹ Ibid 22

⁸⁰ Ibid 1

⁸¹ Ibid 23

⁸² CDL-AD(2003)019, Opinion on three Draft Laws Proposing Amendments to the Constitution of Ukraine

European Commission For Democracy Through Law

(Venice Commission), Cdl(2010)006 *

Or. Engl.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դերակատարություն կունենան դատավորների թեկնածուներին գնահատելու, պաշտոնի նշանակելու, առաջխաղացման և պաշտոնից ազատելու գործում⁸³:

Պարտադիր չէ, որ դատական իշխանությունը բացարձակ մեծամասնություն ունենա ընտրության և նշանակման համար պատասխանատու մարմնի կազմում: Որոշ երկրներում սա բացատրվում է այն հանգամանքով, որ նման մարմնի կազմում դատավորներին բացարձակ մեծամասնություն տալով վերջինս դառնում է ինքն իրեն ծառայող մարմին՝ անդամագրելով այն դատավորներին, որոնց նախապատվություն է տալիս⁸⁴: Սակայն որպեսզի ապահովվի այդ մարմնի անկախությունը, պետք է սահմանվեն կանոններ, ըստ որի, օրինակ, անդամները ընտրվում են դատական իշխանության կողմից և այդ մարմինը ինքն է որոշում կայացնում իր ընթացակարգային հարցերի շուրջ:

ԵԱՀԿ կողմից դատավորներին նշանակելու պատասխանատու մարմնի վերաբերյալ արտահայտվել է կարծիք, համաձայն որի, եթե նշանակման գործառույթը որևէ այլ անկախ մարմնի վրա դրված չէ, ապա պետք է ստեղծվի առանձին փորձագիտական հանձնաժողով՝ դատավորների ընտրության գործընթացում գրավոր և բանավոր քննություններ անցկացնելու նպատակով: Ինչի պարագայում, սակայն, դատական խորհրդի լիազորությունները պետք է սահմանափակել պատշաճ ընթացակարգերի պահպանումը ստուգելով և/կամ հանձնաժողովի ընտրած թեկնածուներին նշանակելով, կամ նշանակող մարմնին նրանց առաջադրելով:

Որպես այլընտրանք, դատավորների ընտրության և վերապատրաստման պատասխանատվությունն ուղղակիորեն կարող է դրվել դատական խորհուրդների, որակավորման հանձնաժողովների կամ որակավորման կոլեգիաների վրա: Այդ պարագայում հույժ կարևոր է, որպեսզի թվարկված մարմինները չլինեն գործադիր հսկողության ներքո, գործեն տարածքային կառավարման մարմիններից անկախ⁸⁵:

Կիրգիզիայի դատական ոլորտի փոփոխությունների վերաբերյալ հայտնած կարծիքում Վենետիկյան հանձնաժողովը նշել է, որ դատավորներին պաշտոնի նշանակող և պաշտոնեական առաջխաղացման ապահովման համար ցանկալի է ստեղծել մեկ միասնական մարմին՝ տարբեր մարմիններ նախատեսելու փոխարեն⁸⁶: Հանձնաժողովը անդրադարձել է նաև արդարադարձության խորհուրդների կողմից թեկնածուների ընտրության հարցին: Մասնավորապես, խորհրդի կողմից սուսկ ֆորմալ ընտրությունը՝ հաստատելու համար դատավորների ընդհանուր մրցույթի արդյունքները, խնդրահարույց չէ: Սակայն, այն դեպքում, երբ խորհուրդը յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ ընտրություն է իրականացնում և գնահատական տալիս, ինչի հիման վրա ներկայացնում նշանակման, դա խնդրահարույց է, քանի որ մրցույթի արդյունքները հնարավոր է անօգուտ դառնան, իսկ լավագույն արդյունք ստացած թեկնածուները խորհրդի անդամի համակրանքը չստանալու համար, չարժանանան դատավորի պաշտոնին:

⁸³ Comments on European Standards as regards the independence of the judicial system: Judges CDL-JD(2008)008

⁸⁴ Dublin Declaration On Standards For The Recruitment And Appointment Of Members Of The Judiciary

⁸⁵ OSCE, Kiyev Recommendations

⁸⁶ Opinion On The Draft Law On The Council For The Selection Of Judges Of Kyrgyzstan, 2011/019



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Այլ մարմինների դերակատարումը դատավորների նշանակման գործընթացում

Վենետիկյան հանձնաժողովի կողմից բազմիցս նշվել է, որ դատավորների նշանակման գործընթացում վերջնական որոշումները ընդունվեն դատական խորհուրդների կողմից: Նշանակման գործընթացում պետության ղեկավարի դերի կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ նա չպետք է դատական խորհրդի կողմից ներկայացված դատավորի թեկնածուի նշանակումը մերժի, եթե չկան կասկածներ թեկնածուի որակների և որակավորման վերաբերյալ: Նախագահը կարող է այս իրավասությունից օգտվել միայն ծայրահեղ դեպքերում՝ ընտրության ընթացակարգի կոպիտ խախտումների կամ անհամատեղելիության պահանջների խախտման դեպքում⁸⁷:

Ուկրաինայի օրինակի վրա, Վենետիկյան հանձնաժողովը սահմանել է, որ դատավորների թեկնածուների հաստատման բոլոր փուլերը անցնելուց հետո՝ որակավորում, հատուկ ստուգում, մրցույթի հաղթահարում և այլն, պատասխանատու մարմնի կողմից թեկնածուների ցուցակը հանրապետության նախագահին ներկայացնելը պետք է ֆորմալ ընթացակարգ լինի, ինչը պահանջում է, որ օրենքով հստակ սահմանվի նախագահի դերը, ըստ որի՝ ներկայացված ցուցակը պետք է հաստատվի նախագահի կողմից⁸⁸:

Հանձնաժողովը սահմանել է նաև, որ Ազգային ժողովը դատավորների ընտրության պատշաճ մարմին չէ: Այն դեպքում, երբ քաղաքական մարմինն է իրականացնում դատավորների ընտրությունը, ապա վտանգ կարող է առաջանալ առ այն, որ քաղաքական շահերը գերակա կլինեն թեկնածուի օբյեկտիվ արժանիքների նկատմամբ:

Նման մոտեցում արտահայտվել է նաև ԵԱՀԿ կողմից, մասնավորապես՝ Գործադիր իշխանության կարևոր դերակատարումը դատավորների նշանակման գործընթացում բացասաբար կարող է անդրադառնալ դատական իշխանության անկախության վրա, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում դատական նշանակումները կամ գոնե նշանակումների առաջարկները տրվեն անկախ մարմնի կողմից⁸⁹:

Կիրգիզիայի սահմանադրությունը դատավորների ընտրության հարցում նախատեսում են նաև նախագահին ու խորհրդարանին, ինչը, ըստ Վենետիկյան հանձնաժողովի, խնդրահարույց չէ: Դատավորների նշանակումը գործադիրի կողմից /նախագահ/ ընդունելի է, որոշակի պայմանների դեպքում, հիմնական շեշտը դնելով թեկնածուի հատկանիշների ու արժանիքների վրա և ոչ թե քաղաքական կամ այլ հարցերը կարևորելով⁹⁰: Ինչ վերաբերում է երկրի նախագահի ներգրավվածությանը նշանակման պրոցեսներին, ապա վերջինիս հայեցողական լիազորությունները պետք է հնարավորինս սահմանափակված լինեն և նախագահը լիազորված լինի սույն հաստատել օրենքով սահմանված կարգով իրականացված ընտրության և մրցույթի արդյունքները:

Նշանակման Գործընթացի թափանցիկությունը

Հաշվի առնելով դատական իշխանության ներսում դատական խորհուրդների դերը՝ առանձնակի կարևորվում է վերջիններիս կողմից թափանցիկության սկզբունքի պահպանումը: Թափանցիկությունը

⁸⁷ Venice Commission, Opinion No. 893/2017, on the draft judicial Code of Armenia, 2017

⁸⁸ Preliminary opinion on the Draft Law on Amending the law on the Judicial system and the status of judges of Ukraine, no 792/2015

⁸⁹ Ibid 6

⁹⁰ Ibid 9



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատական իշխանության գործունեության նկատմամբ հանրության վստահությունը ապահովող գործոն է, մինչև ժամանակ՝ քաղաքական ճնշումներից պաշտպանելու երաշխիք:

Ըստ այդմ՝ դատական խորհուրդներից պահանջվում է ցուցաբերել թափանցիկության բարձր մակարդակ ինչպես դատավորների, այնպես էլ լայն հանրության նկատմամբ, ինչի ապահովման համար անհրաժեշտ է ունենալ կանխատեսելի գործընթացներ ու պատճառաբանված որոշումներ ընդունել⁹¹:

Ավելին, դատավորների անկախության ապահովման կարևոր երաշխիքներից մեկը վերջիններիս նշանակման գործընթացի թափանցիկության ապահովումն է: Դատավորների ընտրության ու նշանակման ամբողջ գործընթացը պետք է ենթակա լինի հանրային վերահսկողության, քանի որ հասարակությունը իրավունք ունի տեղեկանալ, թե ինչպես են դատավորները ընտրվում⁹²: Մոսկ թափանցիկության սկզբունքի սահմանումը, սակայն, բավարար չէ, անհրաժեշտ է ապահովել դատավորների նշանակման գործընթացի ու պայմանների ամբողջական թափանցիկություն, այնպես որ յուրաքանչյուր դատավոր և լայն հասարակությունը վստահ լինի թեկնածուի՝ որակավորումների, կարողությունների, բարեխղճության, անկախության ձգտման, օբյեկտիվության ու արդյունավետության հատկանիշների վրա հիմնված ընտրությանը: Հետևաբար, կարևոր է, որ նշանակումներն ու ընտրության չափանիշները դատական խորհուրդների կողմից հրապարակային դարձվեն: Վերջիններս նաև պարտավորվում են նշանակման գործընթացը դարձնել լայն հանրության համար մրցակցային՝ ապահովելով թեկնածուների բազմազանություն: Ինչ վերաբերում է դատական ավելի բարձր պաշտոններին, ապա դատական խորհրդի կողմից պետք է նախապես և պաշտոնապես հրապարակվեն պաշտոնի ընդհանուր առանձնահատկություններն ու թեկնածուներից պահանջվող որակները, ինչը կապահովի որոշում կայացման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը⁹³:

Այն դեպքերում, երբ կառավարությունն իրավասու է իրականացնել դատավորների նշանակումը, ապա անհրաժեշտ է ապահովել այդ գործընթացի առավելագույն թափանցիկությունը, ինչպես նաև անկախությունը, այնպես, որ այդ որոշումները բացի սահմանված օբյեկտիվ չափանիշներից որևէ այլ ազդեցության չենթարկվեն⁹⁴:

Դատավորների նշանակման գործընթացի թափանցիկության կարևորությունն ընդգծվել է նաև **Դատավորների համընդհանուր խարտիայում**, ինչպես նաև Դատավորների եվրոպական խարտիայում: Համընդհանուր խարտիան պահանջում է, որ յուրաքանչյուր դատավորի նշանակում հիմնվի օբյեկտիվ ու թափանցիկ չափանիշների վրա՝ հիմք ընդունելով մասնագիտական որակավորումները⁹⁵: Եվրոպական խարտիան իր հերթին շեշտադրում է նաև նշանակման գործընթացի օբյեկտիվությունը, մասնագիտական կարողություններն ու անկախությունը⁹⁶:

⁹¹ Ibid 6

⁹² Anti-corruption network for Eastern Europe and Central Asia in cooperation with Council of Europe Group of States against Corruption, United Nations Office on Drugs and Crime, “Independence and integrity of the judiciary”, proceedings of the regional seminar, 2012

⁹³ **Consultative Council of European Judges**, Opinion no.10(2007) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Council for the Judiciary at the service of society, 2007

⁹⁴ Ibid 13

⁹⁵ Universal Charter for judges, <https://www.iaj-uim.org/universal-charter-of-the-judges/>

⁹⁶ European Charter on the Statut of judges, <https://rm.coe.int/16807473ef>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանով նշանակումներ

Վենետիկյան հանձնաժողովը քննադատաբար է մոտենում փորձնական շրջանով (սահմանափակ ժամկետով) դատավորների պաշտոնի նշանակմանը՝ բացատրելով նրանով, որ նման նշանակումը հակասում է դատավորների անփոխարինելիության սկզբունքին: Մասնավորապես, փորձաշրջանով նշանակումը կարող է ազդել դատավորի անկողմնակալության և անկախության վրա, քանզի վերջինս հնարավոր է որոշումներ ընդունի իր հետագա պաշտոնավարումը երաշխավորելու նպատակով: Ըստ այդմ վերահաստատվել է այն մոտեցումը, որ դատավորները պետք է ոչ թե ժամանակավոր նշանակվեն, այլ ցմահ, ինչը սակայն պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա⁹⁷:

Նույնիսկ եթե սահմանվում է պաշտոնավարման փորձաշրջան, այն չպետք է երկար լինի (օրինակ 5 տարին, ըստ Վենետիկյան հանձնաժողովի, շատ երկար ժամկետ է) և պետք է հստակ սահմանվեն նաև փորձաշրջանի ընթացքում դատավորի գործառույթներն ու լիազորությունները⁹⁸:

ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումներ

Դատավորների ընտրությունն ու նշանակումը ՀՀ-ում

2007թվականից հետո դատական օրենսգրքի ամենաշատ փոփոխված դրույթները եղել են հենց դատավորների նշանակման դրույթները՝ փնտրելով ամենալավը: Բայց ամենալավը դա հենց պրակտիկայում է, օրենքում չես կարող դա ապահովել:

Փորձագետ

Չկա ԲԴՄ մի որոշում, որ առնվազն վիճահարույց չլինի: Մասնավորապես, կապված դատավորի նշանակման, առաջխաղացման, տեղափոխման հետ, առնվազն վիճահարույց է: Ես չեմ ուզում ասել անօրինական, քանի որ վերջնական ակտ չկա: Բայց սա ցույց է տալիս, որ բոլորի մոտ կա կասկած ԲԴՄ գործունեության վերաբերյալ:

Փորձագետ

Ներպետական մակարդակում դատավորների ընտրության և նշանակման հարցերը սահմանվել են ՀՀ Սահմանադրությամբ և առավել մանրամասն կարգավորում ստացել ՀՀ Դատական օրենսգրքով⁹⁹:

ՀՀ սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով ընդունվեց, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող

⁹⁷ Preliminary opinion on the Draft Law on Amending the law on the Judicial system and the status of judges of Ukraine, no 792/2015 Report On The Independence Of The Judicial System Part I: The Independence Of Judges Adopted By The Venice Commission At Its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010)

⁹⁸ On The Law 29/1967 Concerning The Judicial System, The Supreme Council Of The Judiciary, And The Status Of Judges In Tunisia (As Amended Up To 12 August 2005)

⁹⁹ Ընդունվել է 2018թ. փետրվարի 7-ին, ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 9-ին:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից¹⁰⁰:

Դատական օրենսգրքով արդեն մանրամասնեցվում է ինչպես դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ցուցակների կազմման ու հաստատման, այնպես էլ դատավորների նշանակման կարգը:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակների կազմումը

Դատավորների թեկնածուների հավակնորդներից պահանջվում է նախ որակավորման ստուգում, ինչը իրենում ներառում է մի քանի փուլ՝ հայտի ներկայացում և ներկայացված հայտերի ստուգում, գրավոր քննության մասնակցություն և հարցազրույցի փուլ¹⁰¹:

Որակավորման ստուգմանը կարող են մասնակցել 28-60 տարեկան, ընտրական իրավունք ունեցող անձինք, որոնց համար օրենսդիրը սահմանել է հետևյալ պահանջները՝

- Միայն ՀՀ քաղաքացիության առկայություն
- ՀՀ-ում ստացել են իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով
- Տիրապետում են հայերենին, ինչպես նաև ունեն անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն երկուսի՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքներ՝ ԲԴԽ սահմանած համապատասխան մակարդակի իմացություն
- Ունեն առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, ինչպես նաև բացակայում են դատավոր նշանակելու՝ օրենսգրքով սահմանված սահմանափակումները¹⁰²:

Որակավորման գործընթացում կենտրոնական դեր ունի Բարձրագույն դատական խորհուրդը: Մանսավորապես, գրավոր առաջադրանքները գնահատվում են խորհրդի սահմանած գնահատման չափորոշիչներով, ստուգումը ինքնին իրականացվում է ԲԴԽ սահմանած կարգով¹⁰³:

Գրավոր քննության փուլը հաղթահարած թեկնածուները այնուհետ անցնում են բանավոր հարցազրույցի փուլ: Ըստ օրենսգրքի կարգավորումների՝ գրավոր քննության արդյունքները հրապարակելուց հետո Դատական դեպարտամենտը միասնական համալրված ցուցակը ներկայացնում է ԲԴԽ՝ հարցազույց

¹⁰⁰ ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով, հոդված 166

¹⁰¹ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 96

¹⁰² ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 97

¹⁰³ Նույն տեղում, հոդված 105



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

անցկացնելու նպատակով¹⁰⁴: Մասնավորապես, ըստ օրենսդրի՝ ցուցակը կազմվում է գրավոր քննության հանրագումարային արդյունքներով դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը համալրելու համար անհրաժեշտ թեկնածուների քանակի տոկոսով, բայց ոչ պակաս, քան հինգով գերազանցող քանակի, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան քանակի հավակնորդ չի հավաքել անհրաժեշտ միավորները, ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդներից:

Օրենսդրական կարգավորումներից երևում է, որ հարցազրույցի փուլ անցնում են միայն բավարար միավորներ հավաքած թեկնածուները:

Հարցազրույցը անց է կացվում՝ նպատակ հետապնդելով բացահայտել դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները: Վերջիններս բացահայտվում են հավակնորդի մասնագիտական աշխատանքի փորձառությունը դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, վարվեցողություն, հեղինակության/ազդեցության չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:

Հարցազրույցների նման կարգ և նպատակ սահմանելը ինչ խոսք միջազգային չափանիշներին բավարարող և ողջունելի գործընթաց է: Սրան զուգահեռ, սակայն, խնդրահարույց է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի կազմումը և հստատումը: Քանի որ, ինչպես նախատեսված է օրենսգրքով, ԲԴԽ-ում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո անցկացվում է գաղտնի քվեարկություն, որի ընթացքում խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»¹⁰⁵:

Ինչից հետո միայն խորհուրդը, հիմք ընդունելով որակավորման ստուգման արդյունքները, կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը և այն ներկայացնում Արդարադատության ակադեմիա՝ նրանց ուսուցումը կազմակերպելու նպատակով:

Չնայած հարցազրույցի համար նախատեսված են կարևոր չափանիշներ, որոնց հիման վրա, ըստ էության, պետք է կայացվի որոշումը, այնուհանդերձ փակ և ներքին համոզման հիման վրա որոշման կայացման հնարավորությունը գործընթացը դարձնում է ոչ թափանցիկ, իսկ որոշումը՝ չհիմնավորված: Քանի որ փակ և ըստ ներքին համոզմունքի քվեարկությունը ԲԴԽ անդամին հնարավորություն է տալիս նույնիսկ սահմանված չափանիշները շրջանցելով որոշում կայացնել, քանի որ բացակայում է այդ որոշման համար հետագա հաշվետվողականությունը: Ավելին, հավակնորդի համար հնարավոր է այնպիսի իրավիճակի առաջացում, երբ անհասկանալի լինի, թե կոնկրետ ինչպիսի կարողության բացակայության համար է արժանացել խորհրդի անդամի բացասական գնահատականին:

Քվեարկության նման կարգ սահմանելը անընդունելի է, քանզի չի ապահովում հավակնորդների ցուցակի կազմման փուլում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը հանրության առջև, ինչը և

¹⁰⁴ Նույն տեղում, հոդված 107

¹⁰⁵ Նույն տեղում, հոդված



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

բացասաբար կարող է անդրադառնալ հավակնորդներին ցուցակում ընդգրկելու մրցույթի նկատմամբ վստահության վրա: Միննույն ժամանակ պետք է նշել նաև, որ խորհրդի որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու որոշումների հիմնավորվածությունը կարող էր ծառայել որպես քաղաքական ազդեցություններից զերծ լինելու գործիք:

Ամեն դեպքում պատճառաբանությունները կարևոր են շատ: Կարելի է էլի գաղտնի անել, բայց նույնիսկ այդ դեպքում պետք է կարծիք տրվի, թե ինչու ոչ, կամ ինչու բացասական կարծիք: Որոշումները ոչ միայն պետք է պատճառաբանվեն, այլ նաև բողոքարկելու հնարավորություն լինի: Կարևոր հարց է, սակայն, թե ով է նայելու բողոքարկումը, ամեն դեպքում ԲԴԽ որոշումները պետք է բողոքարկելու մեխանիզմ լինի:

Փորձագետ

Դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումը

Դատավորների թեկնածուների ցուցակը համալրվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ Արդարադատության ակադեմիայում ուսուցումն ավարտած դատավորների թեկնածուների հավակնորդներից:

Օրենսդիրը մանրամասն սահմանել է դատավոր նշանակելու սահմանափակումները, ինչպես նաև դատավորների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակներից անձին հանելու հիմքերը:

Մասնավորապես, Դատական օրենսգրքի 113-րդ հոդվածը նախատեսում է դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակներից անձին հանելու հիմքերը: Հատկանշական է, որ նշված հոդվածի առաջին մասի 12-րդ կետը, ի հավելումն հոդվածում թվարկված հիմքերի, նախատեսում է նաև այլ հիմքեր: Նույն մոտեցումը առկա է նաև հոդվածի երկրորդ մասում՝ արդեն դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ցուցակից հանելու կապակցությամբ:

Օրենսդրական նման սահմանումը խնդրահարույց է հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն հոդվածի 5-րդ կետը նախատեսում է ԲԴԽ կողմից գաղտնի քվեարկության արդյունքներով անձին ցուցակից հանելու հնարավորություն, եթե խորհուրդը համարում է, որ առկա է հոդվածով նախատեսված հիմքերից մեկը:

Մի կողմից, նախատեսված է ցուցակից հանելու ոչ սպառիչ հիմքերի ցանկ, ընդ որում անհասկանալի է, թե այլ ինչպիսի հիմքեր կարող են օգտագործվել, որ պայմաններում և ինչպիսի գնահատման արդյունքում: Մինչդեռ դատավորների ընտրության ու նշանակման գործընթացում չափանիշների հստակությունը կենտրոնական հարցերից մեկն է, ինչը ունակ է բացառել կոռուպցիոն դրսևորումներն ու կամայականությունները: Մյուս կողմից, օրենսդիրը խորհրդին իրավասություն է տվել անձին ցուցակից հանել գաղտնի քվեարկության արդյունքում: Ինչը խնդրահարույց է թափանցիկության և հաշվետվողականության ապահովման տեսանկյունից:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նույն հոդվածում առկա է նա մեկ խնդրահարույց կարգավորում: Մասնավորապես, *113-րդ հոդվածի 7-րդ մասը* նախատեսում է ցուցակից անձին հանելու վերաբերյալ կայացած որոշման վերանայման հնարավորությունը: Ինչի համար հղում է կատարվում նույն օրենսգրքով նախատեսված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների վերանայման կարգին: Մինչդեռ, կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը վերանայելու միակ հնարավորությունը օրենսդիրը դիտարկում է Մահմանադրական դատարան դիմելը, ինչը չի հանդիսանում Խորհրդի որոշումը վերանայող պատշաճ դատական վերանայման մեխանիզմ (այս մասին կներկայացվի ... ենթաբաժնում)¹⁰⁶:

Հատկանշական է, որ օրենսդիրը խորհրդին գաղտնի քվեարկությամբ և ներքին համոզմունքի հիման վրա որոշում կայացնելու հնարավորություն տվել է նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման և հաստատման հարցում, ինչպես նաև վճռաբեկ դատարանում դատավոր նշանակելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման, հաստատման ու առաջարկություն ներկայացնելու հարցում:

Այսպես, Դատական օրենսգրքի **124 և 133 հոդվածներով** վերաքննիչ և համապատասխանաբար վճռաբեկ դատարանի դատավոր նշանակելու հարցի կապակցությամբ սահմանվում է, որ *Բարձրագույն դատական խորհուրդն անցկացնում է գաղտնի քվեարկություն, որի ընթացքում խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:*

Այստեղ կրկին խնդիր է առաջանում սուբյեկտիվիզմի ու նվազեցնում գործընթացի թափանցիկության առումով: Ավելին, նման պայմաններում հնարավոր է թեկնածուների կողմից որոշումների նկատմամբ անհամաձայնություններ ու բողոքներ, ինչը ընդհանուր առմամբ բացասաբար կանդրադառնա նաև խորհրդի գործունեության նկատմամբ հանրային վստահության տեսանկյունից:

Հարկ է նշել, որ խորհրդի գործունեության 8 ամիսների ընթացքում արդեն իսկ առաջացել են բողոքներ և դժգոհություններ նշանակումների որոշումների կապակցությամբ: Մասնավորապես, հարցված փորձագետներն ընդգծել են թափանցիկության ու հիմնավորվածության խնդիրները դատավորների թեկնածուների նշանակումների հարցում:

Պետական մարմինը՝ ԲԴԽ պետք է իրականացնի միայն օրենքով նախատեսված լիազորությունները: Եթե խախտում է դրանք, ուրեմն պետք է դատի տալ ԲԴԽ-ին, իրավական ճանապարհով պարզել, թե արդյոք ԲԴԽ իրավասու էր նման ինտերվյու ու քվեարկություն ացնկացնել, եթե չէ, ուրեմն անվավեր, առոչինչ ակտեր են: ԲԴԽ կասկածները հիմք չեն կարող հանդիսանալ: Պետական մարմինը պետք է առաջնորդվի միայն իր լիազորություններում, չկա լիազորվածություն, նա կարող է իմանալ, որ էս մարդը լավ դատավոր չի կարող լինել, իր ներքին զգացողություններով, ինչ-որ տվյալների տիրապետելով և այլն, բայց եթե իրավասու չեն, ուրեմն իրավասու չեն:

Փորձագետ

¹⁰⁶ Մանրամասների համար տես կարգապահական պատասխանատվության վերաբերյալ ներպետական օրենսդրության կարգավորումների հատվածը



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

*Նշանակումները ես նորմալ եմ համարում մինչև էդ պահը, որ սովորում են ակադեմիայում, քննությունները, բայց կա մի կետ՝ գաղտնի քվեարկությունը, ինչը կամայականությունների տեղ է տալիս՝ չնայած, որ միջազգային չափանիշներն էլ ասում են, որ հայեցողություն պիտի լինի:
Փորձագետ*

Դատավորների նշանակման գործընթացում, ինչպես երևում է օրենսդրական կարգավորումներից, կենտրոնական դերը պատկանում է Բարձրագույն դատական խորհրդին, որը անկախ և ինքնուրույն սահմանադրական մարմին է: Եվ այս առումով դատավորների նշանակման գործընթացը առաջին հայացքից զերծ է պահվել քաղաքական ազդեցությունից:

Ուշադրության է արժանի սակայն այն հանգամանքը, որ խորհրդի անդամների ուղիղ կեսը ուղղակիորեն ընտրված են խորհրդարանի կողմից, ինչը որոշումների կայացման գործընթացը կարող է խորհրդարանական ազդեցության ենթարկել և բացասաբար անդրադառնալ դատական իշխանության անկախության երաշխավորման վրա:

Ընտրության հիմքում դրվող չափանիշները

Ներպետական օրենսդրությունը դատավորների նշանակման չափանիշներին անդրադառնում է հարցազրույցի անցկացման փուլի կարգավորումներում: Մասնավորապես, օրենսգրքի 108-րդ հոդվածի սահմանումները ինքնին արտահայտում են այդ փուլի համար անհրաժեշտ որակները. *Հարցազրույցի նպատակն է դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելը: Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են հավակնորդի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, վարվեցողություն, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:*

Մակայն հավելյալ տեղեկություն և պարզաբանում, թե ինչպես պետք է գնահատվի թեկնածուի օրինակ, ինքնատիրապետումը կամ վերլուծական կարողությունները, չեն սահմանվել:

Սրանով է պայմանավորվում այն հանգամանքը, որ վերջին 10 ամիսների ԲԴԽ գործունեության ընթացքում վերջինիս կողմից դատավորների նշանակման որոշումները ենթարկվել են խիստ քննադատության և դարձել դատական բողոքարկման առարկա¹⁰⁷:

¹⁰⁷ <http://prwb.am/new/wp-content/uploads/2018/10/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D4%B2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D5%B0%D6%80%D5%A4%D5%AB->



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պետք է նշել, որ դատավորների նշանակման ու առաջխաղացման հարցում ներպետական կարգավորումների հիմնական խնդիրը կապված է խորհրդի կողմից փակ, գաղտնի քվեարկությամբ, ինչպես նաև անդամների կողմից ներքին համոզմունքի հիման վրա որոշում կայացնելու դրույթներին:

Նշանակման հարցում օրենսդրությունը պարզ է, խնդիր չեմ տեսնում մեծ ես այդտեղ: Միակ հարցը, որ կա, այն դեպքերի հետ է կապված, որ օրինակ առավելագույն միավոր ստացած անձը չի նշանակվում և գրավոր մրցույթը կորում է: Երկրորդ մեծ խնդիրը պատճառաբանությունների հետ է կապված, ինչը չի արվում: Նույնիսկ եթե փակ է ստուգումը, պետք է գրել, ասել ինչն է լավ, ինչը վատ: Սուբյեկտիվիզմը շատ մեծ է, բայց գրավոր քննության ժամանակ օբյեկտիվ գործոնները շատ են: Նույնիսկ հնարավոր է բողոքարկել ու միավորը բարձրացնեն:

Փորձագետ

Ընթացակարգի թափանցիկությունն ու հանրության մասնակցության հնարավորությունը

Ըստ ներպետական օրենսդրության դատական դեպարտամենտն ապահովում է գրավոր քննության և հարցազրույցի ողջ ընթացքի հեռարձակումը քննասենյակից դուրս գտնվող տարածքում¹⁰⁸: Ավելին, նշանակման գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար օրենքով հնարավորություն է տրված այլ անձանց ևս որակավորման գրավոր քննությանը և հարցազրույցին մասնակցություն ունենալ: Որպես այդպիսիք հանդես են գալիս Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի մեկ ներկայացուցիչ, փաստաբանների պալատի ներկայացուցիչ երկու փաստաբան և իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև երեք ներկայացուցիչ:

Վերջին նշվածը պրակտիկայում դեռևս չի իրագործվել, սակայն օրենսդրական նման կարգավորումները արդեն իսկ ողջունելի են: Այնուհանդերձ, թափանցիկության ապահովումը հնարավոր կլինի գնահատել այս հնարավորությունները պրակտիկայում արդյունավետ կիրառելու պարագայում միայն:

Դատավորների առաջխաղացում և գնահատում

Դատավորների գնահատման խնդիրներն ու նպատակները: միջազգային չափանիշներ

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատավորների գնահատմանը վերաբերող հարցերը երկատվում են.

1. դատական համակարգի որակի գնահատում,
2. դատավորների մասնագիտական կարողությունների գնահատում:

[%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC.pdf](#)

¹⁰⁸ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 102



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած պարագայում, դատավորները չպետք է գնահատվեն իրենց կայացրած որոշումների կամ վճիռների բովանդակության համար (ուղղակիորեն կամ վերադասների տոկոսների հաշվարկի միջոցով): Թե ինչպես է դատավորը լուծում վեճը, երբեք չի կարող հանդիսանալ նրա նկատմամբ սանկցիա կիրառելու հիմք: Դատարանի գործունեության արդյունավետության վերաբերյալ վիճակագրությունը պետք է օգտագործվի միայն կառավարման նպատակներով և հանդիսանա դատավորների գնահատման չափանիշներից միայն մեկը¹⁰⁹:

ԵԴԽԽ-ն այս առումով նշում է, որ դատական համակարգի որակի, այսինքն՝ դատական համակարգի գործունեության՝ որպես ամբողջականության կամ ցանկացած առանձին դատարանի կամ դատարանների խմբի գործունեության գնահատումը, չպետք է շփոթել դատավորի մասնագիտական ունակություններն այլ նպատակով գնահատելու հետ: Գնահատման գործընթացները պետք է ամենից առաջ նպատակ ունենան կանխորոշելու որոշակի կարիքներ, որպես այդպիսին՝ օրենսդրության փոփոխություն, դատական ընթացակարգերի բարելավում և դատավորների ու դատարանի աշխատակազմի հետագա վերապատրաստում:

Գնահատման սուբյեկտները, մեթոդները և գործընթացը պետք է լինեն հստակ ձևակերպված և հասկանալի: Դրանք պետք է սահմանվեն դատավորների կողմից կամ դատավորների հետ սերտ համագործակցության արդյունքում: Գնահատումը պետք է լինի թափանցիկ, սակայն դատավորի վերաբերյալ առկա անձնական կամ նույնականացնող տվյալները պետք է մնան գաղտնի¹¹⁰:

Դատական համակարգի որակը կարող է անշուշտ չափվել օբյեկտիվ տվյալների միջոցով, ինչպիսին են դատարանի մատչելիությունը և այն եղանակները, որոնցով հասարակությունը ներգրավվում է դատավարությանը, հասանելի ընթացակարգերի կիրառման մատչելիությունը և ժամկետային սահմանափակումները, որոնք նախատեսված են գործերի վարման և որոշումների ուժի մեջ մտնելու համար: Այնուամենայնիվ, սա ենթադրում է նաև առավել սուբյեկտիվ ընկալում կայացվող և կայացված որոշումների՝ հասարակության լայն շերտերի կողմից ընդունվելու վերաբերյալ: Հարկավոր է հաշվի առնել նաև առավել քաղաքական բնույթ կրող տեղեկատվությունը, ինչպիսին են երկրի բյուջեից արդարադատությանը հատկացված մասը և այն եղանակները, որոնցով ապահովվում է դատական համակարգի անկախությունը կառավարության այլ ճյուղերի կողմից: Այս բոլոր նկատառումները արդարացնում են դատական խորհուրդների ակտիվ մասնակցությունը արդարադատության որակի գնահատման և դատավորների աշխատանքի արդյունավետության ապահովման մեթոդների իրականացման գործում¹¹¹:

¹⁰⁹ Տե՛ս Տե՛ս [OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe](#)

Այս կարծիքն է արտահայտվում նաև [Դատավորների համընդհանուր խարտիայում](#), տե՛ս [INTERNATIONAL ASSOCIATION OF JUDGES: THE UNIVERSAL CHARTER OF THE JUDGE](#)

¹¹⁰ Տե՛ս [OPINION No.11 \(2008\) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES \(CCJE\) TO THE ATTENTION OF THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE QUALITY OF JUDICIAL DECISIONS](#)

¹¹¹ [Opinion no.10\(2007\) of the Consultative Council of European Judges \(CCJE\) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Council for the Judiciary at the service of society](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատական խորհուրդների եվրոպական ցանցը տարբերակում է գնահատման երկու համակարգ: Դրանք են՝

- *Ֆորմալ*. ֆորմալ գնահատումների մեծամասնության պարագայում գնահատման նպատակը, օգտագործվող չափանիշները, գնահատող մարմնի կազմը, գնահատման կարգը և դրա հնարավոր հետևանքները նախապես հստակ սահմանվում են որևէ գնահատման վարժություններում: Երբ կիրառվում է գնահատման ֆորմալ համակարգը, դրա հիմքերն ու հիմնարար տարրերը (չափանիշները, ընթացակարգը, գնահատման հետևանքները) պետք է հստակ և սպառիչ սահմանվեն առաջնային օրենսդրությամբ: Մանրամասները կարող են կարգավորվել ենթաօրենսդրական ակտերով: Գնահատվող դատավորի իրավունքներն ու պարտականությունները նույնպես պետք է ենթարկվեն օրենսդրական կարգավորման:

- *ոչ ֆորմալ*. ոչ ֆորմալ գնահատումը չի օգտագործում ո՛չ ձևական վարկանիշային սանդղակներ, ո՛չ ինչ-որ չափանիշներ: Այն սովորաբար ունենում է ոչ ուղղակի հետևանքներ գնահատվող դատավորի համար: Ոչ ֆորմալ գնահատումը կարող է անցկացվել քննարկումների միջոցով, ինչը հնարավորություն կտա գնահատված դատավորին՝ լուծել իր առջև դրված խնդիրները, ցույց տալ իր կարողությունները և համաձայնեցնել դրանք իր կարիերայի նպատակների հետ (ինչպես, օրինակ, Ֆինլանդիայում և Նիդերլանդներում): Առաջխաղացման ենթակա թեկնածու-դատավորի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման ոչ ֆորմալ եղանակը նույնպես կարող է դիտվել որպես ոչ ֆորմալ գնահատում (ինչպես, օրինակ, Միացյալ թագավորությունում)¹¹²: Ոչ ֆորմալ գնահատումը կարող է դառնալ դատավորներին գնահատելու ձև՝ նրան ինքնագնահատվելու հնարավորություն տալով, ապահովելով նրանց հետադարձ կապը և սահմանելով նրանց վերապապատրաստման կարիքները: Այս բոլորը կարող են լինել արդյունավետ միջոցներ՝ դատավորի հմտությունները և, այդպիսով, դատական համակարգի ընդհանուր որակը բարելավելու տեսանկյունից: Դատական աշխատակիցների կողմից ոչ ֆորմալ հետազոտությունն, դատավորների ինքնագնահատումը և դատավորների խորհուրդները նույնպես կարող են օգտակար լինել գնահատման գործում և պետք է խրախուսվեն¹¹³:

Ցանկացած դատական համակարգի երկու հիմնական պահանջներն են՝ ապահովել բարձրորակ արդարադատություն և հաշվետվողականություն ժողովրդավարական հասարակությունում: Պարտադիր է, որ դատավորների գնահատման որոշ ձևեր համապատասխանեն այս պահանջներին: ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս բոլոր անդամ պետություններին օգտագործել ոչ ֆորմալ գնահատման ընթացակարգեր, որոնք օգնում են բարելավել դատավորների հմտությունները և այդպիսով ամբողջ դատական համակարգի որակը: Ոչ ֆորմալ գնահատման նմանատիպ համակարգը հնարավորություն է տալիս դատավորներին ինքնագնահատվել՝ ապահովելով աշխատանքի հետադարձ կապը և հետազոտությունն իր աշխատակիցների կողմից¹¹⁴:

Եվրոպայի խորհուրդը նույնպես իր հանձնարարականներում անդրադարձել է դատավորների գնահատմանը՝ նշելով, որ երբ դատական իշխանությունները սահմանում են դատավորների

¹¹² Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

¹¹³ [CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES \(CCJE\) OPINION N° 17 \(2014\) ON THE EVALUATION OF JUDGES' WORK, THE QUALITY OF JUSTICE AND RESPECT FOR JUDICIAL INDEPENDENCE PART ONE: INTRODUCTION](#)

¹¹⁴ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գնահատման համակարգեր, դրանք պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա: Վերջիններս պետք է հրապարակվեն դատական իշխանության իրավասու մարմնի կողմից: Կարևոր է, որ գնահատման չափանիշները հիմնված լինեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումները, հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են գործերն ուսումնասիրելու ժամանակ՝ մարդկային արժանապատվության հարգմամբ օրենքը կիրառելիս¹¹⁵: Ոչ պակաս կարևոր է, որ այս գնահատման ընթացակարգը լինի արդար և օբյեկտիվ՝ թույլ տալով առանձին դատավորներին իրենց գործերի նկատմամբ հասանելիություն և գնահատման առարկայի վերաբերյալ մեկնաբանություն անելու իրավունք ունենալ¹¹⁶: Դատավորների գնահատման ընթացակարգը պետք է թույլ տա դատավորներին արտահայտել իրենց կարծիքը իրենց իսկ գործունեության և գործունեության գնահատման վերաբերյալ, ինչպես նաև բողոքարկել գնահատման արդյունքը անկախ մարմնի կամ դատարանի առջև¹¹⁷:

Գնահատման գործընթացում օգտագործվող տեղեկությունները պետք է լինեն վստահելի: Շատ կարևոր է, որ գնահատումը հիմնված լինի բավարար փաստերի վրա: Գնահատվող դատավորը պետք է անմիջական հասանելիություն ունենա ցանկացած փաստի, որն օգտագործվում է իր գնահատման գործընթացում, այնպես, որ այն անհրաժեշտության դեպքում կարողանա բողոքարկվել: Անհատական դատավորի գնահատման և դատարանի աշխատանքը գնահատող ստուգման ողջ գործընթացը պետք է առանձին լինեն: Այնուամենայնիվ, դատական ստուգման ընթացքում բացահայտված տեղեկությունները կարող են հաշվի առնվել դատավորի անհատական գնահատման գործընթացում¹¹⁸:

Վենետիկի հանձնաժողովը նույնպես գտնում է, որ դատավորի գնահատման չափանիշը պետք է հստակ սահմանված լինի իրավական ակտերով¹¹⁹: Բացի այդ, երբ որևէ մարմին հնարավորություն ունի կատարելու դատավորի գնահատում, այդ դատավորը պետք է հնարավորություն ունենա մարմնի առաջ բացատրել ցանկացած անհասկանալի երևույթ կամ ցանկացած հարց՝ կապված ուսումնասիրության արդյունքների հետ¹²⁰: Գնահատման համակարգը չպետք է օգտագործվի որևէ թեկնածուի առաջխաղացումից զրկելու համար, քանի դեռ գնահատման արդյունքում դատավորի գնահատականը չի համապատասխանում նվազագույն չափանիշին¹²¹:

¹¹⁵ Տե՛ս [Recommendation CM/Rec\(2010\)12](#).

[Council of Europe/ Eastern Partnership /Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries Opinion no.10\(2007\) of the Consultative Council of European Judges \(CCJE\) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Council for the Judiciary at the service of society](#)

¹¹⁶ Տե՛ս [Council of Europe/ Eastern Partnership /Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries](#)

¹¹⁷ Տե՛ս [Recommendation CM/Rec\(2010\)12](#)

¹¹⁸ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

Այս դրույթներն իրենց արտացոլումն են գտել նաև Դատավորների համընդհանուր խարտիայում, տե՛ս [INTERNATIONAL ASSOCIATION OF JUDGES: THE UNIVERSAL CHARTER OF THE JUDGE](#)

¹¹⁹ Տե՛ս [CDL-AD\(2009\)023](#)

[CDL-AD\(2017\)018, Bulgaria - Opinion on the Judicial System Act](#)

[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹²⁰ Տե՛ս [CDL-AD\(2015\)007-e Joint opinion by the Venice Commission and the Directorate of Human Rights of the Directorate General of Human Rights and the Rule of Law on the Law on the Judiciary and the Status of Judges and amendments to the Law on the High Council of Justice of Ukraine, adopted by the Venice Commission at its 102nd Plenary Session \(Venice, 20-21 March 2015 CDL-AD\(2014\)007-e](#)

¹²¹ Տե՛ս [CDL-AD\(2014\)007-e](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵՂԽՄ-ն և **Կիևի Հանձնարարականը** գտնում են, որ դատավորների գործունեության գնահատումը պետք է լինի հիմնականում որակական և հիմնվի նրանց հմտությունների, ներառյալ՝ մասնագիտական կարողությունների (իրավունքի իմացություն, դատավարություն անցկացնելու կարողություն, պատճառաբանված ակտերի կայացում), անձնական կարողությունների (աշխատանքի ծանրաբեռնվածությունը հաղթահարելու ունակություն, որոշում կայացնելու, նոր տեխնոլոգիաների հանդեպ բաց լինելու), սոցիալական հմտությունների (բանակցելու կարողություն, հարգանք կողմերի հանդեպ) և առաջնորդելու հմտությունների վրա՝ պաշտոնի հնարավոր առաջիադացման համար: Այս նույն հմտությունները պետք է զարգացվեն դատական համապատասխան կրթական ծրագրերում, ինչպես նաև աշխատանքում¹²²:

Հղում կատարելով քանակական հատկանիշներին՝ **Վենետիկի հանձնաժողովը** քննադատում է այն գնահատման համակարգերը, որոնք հիմնվում են դատավորի գործունեության տվյալների մաթեմատիկական գնահատման վրա: Օրենքը պետք է հստակ սահմանի, որ դատավորի՝ արդարադատությունը կառավարելու, կարգավորելու կարողությունների գնահատումը, օրինակ՝ առավելագույն ժամկետները պահելը, ժամանակացույցին հետևելը, և այլ պայմաններ, պետք է հաշվի առնվեն ծանրաբեռնվածության և համանման այլ հանգամանքների հետ միասին¹²³:

ԵՂԽՄ-ի կարծիքով գնահատման չափանիշները պետք է սկզբունքորեն բաղկացած լինեն որակական ցուցանիշներից, բայց, ի լրումն դրա, կարող են բաղկացած լինել նաև քանակական հատկանիշներից: Ինչ վերաբերում է քանակական ցուցանիշներին, **ԵՂԽՄ** քննադատել է գնահատման այն համակարգը, որը մեծապես հիմնվում է դատավորների գործունեության քանակական գնահատման վրա¹²⁴: **Խորհուրդը** դեմ է արտահայտվում գնահատման արդյունքները միայն միավորների, տոկոսների, կայացրած որոշումների քանակի միջոցով արտահայտելուն: Այս մեթոդները, որոնք հետագայում չեն պարզաբանվում, կարող են ստեղծել կեղծ օբյեկտիվության և որոշակիության վիճակ: Ապացույցների/փաստերի աղբյուրները, որոնց վրա հիմնվում են գնահատումները, պետք է լինեն վստահելի և բավարար, հատկապես, երբ դրանցով ապացուցվում է ոչ բարենպաստ գնահատումը:¹²⁵

ԵՂԽՄ-ն ընդգծում է նաև, որ ցանկալի է միավորել գնահատման տարբեր մեթոդներ (հատկապես եթե օգտագործվել են քանակական և որակական տվյալներ)՝ կապված որակի տարբեր ցուցանիշների և տեղեկատվության տարբեր աղբյուրների հետ: Որևէ առանձին եղանակ չպետք է գերակա դիրք գրավի մյուսների նկատմամբ: Գնահատման եղանակները կարող են ընդունվել, պայմանով, որ դրանք ուսումնասիրվում են անհրաժեշտ գիտական խստությամբ, գիտելիքներով և խնամքով և սահմանված են

¹²² Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

[OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe](#)

¹²³ Տե՛ս [CDL-AD\(2017\)018, Bulgaria - Opinion on the Judicial System Act](#)

¹²⁴ Տե՛ս [CDL-AD\(2015\)042, Opinion on the Laws on the Disciplinary Liability and Evaluation of Judges of “the Former Yugoslav Republic of Macedonia”](#)

[CDL-AD\(2017\)018, Bulgaria - Opinion on the Judicial System Act, § 84](#)

[CDL-AD\(2017\)019-e Armenia - Opinion on the Draft Judicial Code, adopted by the Venice Commission at its 112th Plenary Session \(Venice, 6-7 October 2017\) Yugoslav Republic of Macedonia](#)
[\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

¹²⁵ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

թափանցիկ ճանապարհով: Ավելին, գնահատման համակարգերը չպետք է վիճարկեն դատական որոշումների օրինականությունը¹²⁶:

Վենետիկի հանձնաժողովն իր փաստաթղթերում արտահայտում է այն միտքը, որ եվրոպական դատական համակարգում, ընդհանուր առմամբ, դատավորների «անհատական գնահատումը» անփոխարինելի չէ: Երկրները, որոնք որոշել են չկիրառել դատավորների անհատական գնահատման համակարգը (Դանիա, Ֆինլանդիա, Իռլանդիա և այլն), դրա փոխարեն զարգացրել են դատական ընդհանուր ընթացակարգերի իրականացման գնահատումը¹²⁷:

Դատավորների անհատական ֆորմալ գնահատումը պետք է հիմնված լինի իրավասու դատական իշխանության կողմից հրապարակված օբյեկտիվ չափանիշների վրա: Օբյեկտիվ ստանդարտները պահանջվում են ոչ միայն նրա համար, որպեսզի բացառեն քաղաքական ազդեցությունը, այլ նաև այլ պատճառներով, ինչպիսին է հավանական տպավորության, պահպանողականության կամ հովանավորչության ռիսկերից խուսափելը, որոնք կարող են գոյություն ունենալ, եթե գնահատումները/նշանակումները կատարվում են՝ ոչ համակարգված ձևով կամ հիմնվելով անհատական բնութագրերի վրա¹²⁸:

Անհատական գնահատման բոլոր ընթացակարգերը պետք է դատավորին թույլ տան արտահայտել իր կարծիքը իր գործողությունների և դրանց վրա հիմնված գնահատումների վերաբերյալ, ինչպես նաև բողոքարկել գնահատումները անկախ մարմնի կամ դատարանի առաջ: Ինչքան ծանր կարող են լինել գնահատման հետևանքները դատավորի համար, այդքան կարևոր է արդյունավետ վերանայման հնարավորությունը¹²⁹:

Արևելյան եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցն (Eastern Europe and Central Asia)՝ արտահայտում է այն կարծիքը, որ որոշակի գնահատումներ պետք է իրականացվեն միայն հատուկ դեպքերում, ինչպիսին են հնարավոր առաջխաղացումը կամ վերջին կարգապահական վարույթը, և դրանք պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա: Բացի այդ, հանդիպման մասնակիցներն առանձնացրել են այն սահմանափակումները, որոնք պետք է պահպանվեն գնահատումներն իրականացնելիս. այսպես՝

- Գնահատումը չի կարող միջամտել դատավորների անկախությանը և խոչընդոտել պաշտոնավարման իրավունքը:
- Գնահատվողը պետք է իրավունք ունենա, մասնակցել իր գնահատմանը (լսված լինելու իրավունք) և ունենա բողոքարկման հնարավորություն:

¹²⁶ Տե՛ս [OPINION No.11 \(2008\) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES \(CCJE\) TO THE ATTENTION OF THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE QUALITY OF JUDICIAL DECISIONS](#)

¹²⁷ Տե՛ս [CDL-AD\(2009\)023](#).

[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹²⁸ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

¹²⁹ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- Գնահատման չափանիշները պետք է հրապարակային լինեն բոլոր դատավորների համար և գնահատումը պետք է հիմնված լինի վստահելի և օբյեկտիվ տեղեկության վրա¹³⁰:

Վենետիկի հանձնաժողովն իր փաստաթղթերում նշում է, որ դատավորի պարբերական գնահատման նպատակն է պարզել դատավորի անհատական կարիքները՝ ապահովելու նրա որակավորման զարգացումն ու խթանումը¹³¹: Պարբերական գնահատումները դատավորի գործունեության կարևոր գործիքներ են, որպեսզի վերջինս բարելավի իր աշխատանքը և կարող են նաև ծառայել որպես առաջխաղացման հիմք: Կարևոր է, որ գնահատումը լինի մեծապես որակական և կենտրոնանա դատավորի մասնագիտական կարողությունների, անձնական և սոցիալական կարողությունների վրա: Դատավորի գնահատումը չպետք է հիմնված լինի դատավորի կայացրած վճիռների կամ որոշումների վրա: Ավելին, որպես գնահատման չափանիշ պետք է խուսափել այնպիսի քանակական ցուցանիշների կիրառումից, ինչպիսիք են հայցերի վերադարձնելը և արդարացումները¹³²:

Կիևի հանձնարարականի համաձայն՝ պարբերական գնահատումների հիմնական չափանիշները պետք է նախատեսվեն օրենքով: Ճշգրիտ չափանիշները, որոնք օգտագործվում են պարբերական գնահատումներում, պետք է սահմանվեն հետագա իրավակարգավորումներում՝ կատարման ժամանակացույցի և գնահատման մեխանիզմների հետ միասին: Դատավորների գնահատումը կարող է օգտագործվել՝ ապահովումն դատավորի աշխատանքային գործունեության տարբեր ասպեկտների բարելավման, ինչպես նաև հնարավոր առաջխաղացման համար: Դատավորների պարբերական քննությունները (որակավորումները), որոնք կարող են հանգեցնել աշխատանքից հեռացման կամ այլ սանկցիաների, չեն համապատասխանում դատավորների ցմահ պաշտոնավարմանը¹³³:

Դատավորների գնահատման իրավասու մարմինները

Ըստ Վենետիկի հանձնաժողովի, ԵԴԽԵ-ի և Կիևի հանձնարարականների՝ դատավորների գնահատումները չպետք է չարաշահվեն և խախտեն դատական անկախությունը¹³⁴: Հիմնական նպատակը ցանկացած հանգամանքի բացառումն է, որը կարող է մարտահրավեր նետել դատավորների անկախությանը. բացի գնահատման համակարգի համար բարձր ստանդարտներ սահմանելու գովելի նպատակից՝ շատ դժվար է համապատասխանեցնել դատավորի անկախությունը գործունեության գնահատման համակարգին: Եթե կարիք լինի այս երկուսի միջև ընտրություն կատարելու, դատական համակարգի անկախությունն ունի վճռական նշանակություն¹³⁵: Դատարանի և դատական համակարգի

¹³⁰ Տե՛ս [“INDEPENDENCE AND INTEGRITY OF THE JUDICIARY”, JUDICIAL COUNCILS, OTHER SELF-GOVERNANCE INSTITUTIONS AND THEIR ROLE TO ENSURE INTEGRITY AND INDEPENDENCE OF JUDGES \(Mr. Đuro Sessa\)...](#)

¹³¹ Տե՛ս [CDL-AD\(2015\)007-e](#)

¹³² Տե՛ս [CDL-AD\(2014\)007, Joint opinion on the draft law amending and supplementing the judicial code \(evaluation system for judges\) of Armenia](#)

¹³³ Տե՛ս [OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe](#)

¹³⁴ Տե՛ս [CDL-AD\(2017\)018, Bulgaria - Opinion on the Judicial System Act \(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

[OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe](#)

¹³⁵ Տե՛ս [EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\), CDL-AD\(2010\)004; CDL\(2009\)055rev4*; CDL\(2009\)055rev *; CDL\(2010\)006 *; CDL-JD\(2008\)002; CDL-AD\(2007\)028; CDL-JD\(2007\)001rev](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գնահատումը ընդհանուր առմամբ դիտվում են որպես կառավարական կամ քաղաքական որոշումների կիրառում՝ ուղղված այդ համակարգերի զարգացմանը, այն դեպքում, երբ առանձին դատավորների գործունեության գնահատումը հաճախ դիտվում է որպես միջամտություն դատավորների անկախությանը: Չնայած այս վտանգը կարող է գոյություն ունենալ, դա չի կարող կանխել գնահատումների իրականացումը¹³⁶: Գործունեության գնահատման պատշաճ համակարգը կարող է լինել լավագույնը, երբ դա օգտագործվում է ուղղակիորեն որպես զարգացման գործիք, և երբ առկա է գնահատողի և գնահատվողի համագործակցությունը: Կարևոր է, որ գնահատման համակարգը չօգտագործվի որպես դատավորների վրա ազդելու կամ նրանց վրա իշխելու գործիք¹³⁷: ԵՂԽՄ-ն իր հերթին ընդգծում է, որ դատական որոշումները գնահատելու որևէ մեթոդ չպետք է միջամտի արդարադատության անկախությանը ոչ ընդհանուր, ոչ էլ առանձնահատուկ հիմքերի վրա¹³⁸:

Եվրոպայի խորհուրդն անդրադարձել է նաև դատավորների գնահատումներն իրականացնող մարմինների հետ կապված խնդիրներին, նշելով, որ օրենսդիր և գործադիր մարմինները սովորաբար չեն ունենում բավարար իրավական գիտելիք՝ օրենքի վրա հիմնվելով արդարադատություն իրականացնելու համար պահանջվող որակավորումների, հմտությունների և կարողությունների առնչությամբ: Ուստի, դատավորի կողմից դատավարություն անցկացնելու կարողության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվությունն ապահովելու նպատակով պետք է գերիշխեն ոչ միայն դատարանների նախագահների, այլ նաև վերադաս դատարանների դատավորների կարծիքները¹³⁹:

Վենետիկի հանձնաժողովը նույնպես կարևորում է, որ դատական գնահատումներ անցկացնելիս վերջինիս հսկողությունը լինի դատական և ոչ թե գործադիր մարմնի ձեռքում¹⁴⁰: Միաժամանակ, Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ դատարանի նախագահին որպես դատավորների գնահատումների անցկացման կենտրոնական մարմին դիտելը կարող է ոչ միայն շահերի բախում առաջացնել, այլ նաև հանգեցնել չարաշահումների՝ սահմանափակելով առանձին դատավորների անկախությունը¹⁴¹:

¹³⁶ Տե՛ս [CDL-AD\(2014\)031, Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights \(DHR\) of the Directorate of Human Rights and the Rule of Law \(DGI\) of the Council of Europe, on the draft Law on Amendments to the Organic Law on General Courts of Georgia, §64](#)

[CDL-AD\(2013\)014, Opinion on the Draft Law on the amendments to the Constitution, Strengthening the Independence of Judges and on the Changes to the Constitution proposed by the Constitutional Assembly of Ukraine, §54](#)
[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹³⁷ Տե՛ս [CDL-AD\(2014\)007](#)

[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹³⁸ Տե՛ս [OPINION No.11 \(2008\) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES \(CCJE\) TO THE ATTENTION OF THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE QUALITY OF JUDICIAL DECISIONS](#)

¹³⁹ Տե՛ս [Council of Europe/ Eastern Partnership /Enhancing Judicial Reform in the Eastern Partnership Countries](#)

¹⁴⁰ Տե՛ս [CDL-AD\(2009\)023](#)

[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹⁴¹ Տե՛ս [CDL\(2005\)066, Opinion on Draft Constitutional Amendments concerning the Reform of the Judicial System in “the former Yugoslav Republic of Macedonia”](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՄՆ-ն իր հերթին գտնում է, որ դատարանի նախագահն իրականացնում է տվյալների հավաքագրման և ընդհանուր դատարանի գործունեությունը գնահատելու ֆունկցիա: Որոշ անդամ երկրներում դատարանի նախագահի գործառնություններից է առանձին դատավորների գնահատումն իրականացնելը (օրինակ՝ Գերմանիայում, Հունաստանում, Հունգարիայում, Նիդերլանդներում): Որոշ երկրներում սա դիտվում է որպես հնարավոր սպառնալիք դատական իշխանության անկախության համար: Երբ դատարանի նախագահը որոշակի դեր է խաղում գնահատման գործընթացում, պետք է լինեն իրավական որոշակի և հստակ երաշխիքներ՝ այս ուսումնասիրության անաչառությունն ու օբյեկտիվությունը ապահովելու համար¹⁴²:

Ըստ **Վենետիկի հանձնաժողովի**՝ խնդրահարույց է նաև դատավորների գնահատումը փաստաբանների և դատախազների մասնակցությամբ: Անշուշտ, և՛ դատախազները, և՛ փաստաբանները քաջատեղյակ են դատավորների ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, նրանք չեն հանդիսանում անաչառ գնահատողներ: Կա վտանգ, որ դատավորը կարող է հարաբերություններ հաստատել որոշակի դատախազների կամ փաստաբանների հետ՝ իր համար բարենպաստ գնահատական ապահովելու համար կամ կարող է ընկալվել որպես այդպիսին: Ավելին, դատախազներին գնահատման համակարգում ներգրավելու հատուկ վտանգ կա այն իրավական համակարգերում, որտեղ պատմականորեն դատախազները դատական համակարգում ունեն գերակա դեր: Դատավորի անկախության փոխզիջման ռիսկերը գերադաս դիրք են գրավում դատախազների և փաստաբանների՝ որպես գնահատողների հնարավոր գիտելիքների և փորձի նկատմամբ: Այնուամենայնիվ, այս նկատառումները չեն ունենա նույն ուժը, եթե որպես գնահատողներ օգտագործվեն պաշտոնաթող դատախազներն ու փաստաբանները¹⁴³: Իսկ ակա **ԵՂԻՄՆ-ն** խրախուսում է դատավորների աշխատանքի գնահատումը նույն ոլորտում աշխատող այլ մասնագետների կողմից, ինչպես նաև դատավորների ինքնագնահատումը: ԵՂԻՄՆ-ն նաև խրախուսում է «դրսի» մարդկանց մասնակցությունը (օրինակ՝ իրավաբաններ, դատախազներ, իրավական ֆակուլտետների դասախոսներ, քաղաքացիներ, ազգային և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ) գնահատման մեջ՝ ապահովելով դատական համակարգի անկախության նկատմամբ հարգանքը: Նման արտաքին գնահատումը չպետք է, անշուշտ, օգտագործվի որպես դատական անկախությունը կամ դատավարական գործընթացների ամբողջականությունը վտանգի ենթարկելու միջոց: Դատական որոշումների գնահատման առաջին կետը պետք է լինի ժամանակակից և արդյունավետ բողոքարկման ընթացակարգի հասանելիությունը:

Բարձրագույն դատարաններն իրենց նախադեպային իրավունքի, դատավարական պրակտիկայի հետազոտման և ամենամյա զեկույցների միջոցով կարող են նպաստել դատական որոշումների որակին և դրանց գնահատմանը: Այս առումով շատ կարևոր է, որ իրենց նախադեպային իրավունքը լինի հստակ,

[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹⁴² Տե՛ս [CCJE Opinion No. 17\(2014\)](#), [տե՛ս նաև՝ CCJE Opinion No. 10\(2007\)](#).

[OPINION N° 19 \(2016\) THE ROLE OF COURT PRESIDENTS, CCJE\(2016\)2](#)

¹⁴³ Տե՛ս [CDL-AD\(2013\)015, Opinion on the draft law on the courts of Bosnia and Herzegovina](#),

[CCJE Opinion No. 17\(2014\)](#).

[EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հետևողական և մշտական: Բարձրագույն դատարանները կարող են նաև նպաստել դատական որոշումների որակի բարձրացմանը՝ զարգացնելով ուղեցույցներ ստորադաս դատարանների համար, որոնցում ուշադրություն է դարձվել կիրառելի սկզբունքներին՝ նախադեպային իրավունքին համապատասխան: Բացի այդ, գնահատման գործընթացին կարող են մասնակցել նաև այլ մասնագետներ, ովքեր կարող են ունենալ օգտակար ներդրում, սակայն նրանց դերը պետք է լինի խորհրդատվական¹⁴⁴:

ԵՂԽՆ-ն գտնում է նաև, որ դատական համակարգի անկախությունն ապահովելու համար գնահատումները պետք է անցկացվեն ուղղակիորեն դատավորների կողմից: Դատական խորհուրդները կարող են որոշակի դեր տանել այս գործընթացում, սակայն պետք է խուսափել Արդարադատության նախարարության կողմից անցկացվող գնահատումներից¹⁴⁵: Միննույն ժամանակ, ըստ **Վենետիկի հանձնաժողովի**, գործող դատավորներին իրենց գործընկերներին գնահատելու համար օգտագործելը կարող է հանգեցնել որոշակի բարդությունների: Մասնավորապես, դա կարող է հանգեցնել գործընկերների միջև վատ անձնական հարաբերությունների և ապագայում կարող է հանգեցնել դատական համակարգի և արդարադատության ոգու ոտնահարմանը կամ կարող է դիտվել որպես հովանավորչության դրսևորում¹⁴⁶:

Ընդհանուր առմամբ, գնահատողների խառը թիմի ստեղծումը, գործող դատական համակարգից դուրս իրավական մասնագետների հրավիրումը կարող է լինել հնարավոր լավ տարբերակը: Կարևոր է նախատեսել գնահատումներ իրականացնող խումբ՝ հավասարակշռված կազմով: Սա թույլ կտա խուսափել հովանավորչությունից և ինքնապաշտպանության ընկալումներից¹⁴⁷:

Կիևի հանձնարարականի համաձայն՝ գնահատումները պետք է անցկացվեն գլխավորապես այլ դատավորների կողմից: Դատարանի նախագահները չպետք է ունենան գնահատելու համար բացառիկ լիազորություններ, բայց նրանց դերը պետք է լրացվի նույն կամ այլ դատարանի դատավորների խմբի կողմից: Այդ խումբը պետք է նաև հաշվի առնի մարդկանց կարծիքը, ովքեր պարբերաբար գործ են ունենում այդ դատավորի հետ (ինչպիսին են իրավաբանները) և գիտնականների կարծիքը՝ կապված ջանասիրության, կողմերի նկատմամբ հարգանքի և դատավարության ընթացքում դատավորի կիրառած կանոնների վերաբերյալ¹⁴⁸:

ԵՂԽՆ-ն շատ կարևոր է համարում, որ անդամ յուրաքանչյուր երկրում դատական խորհուրդը գլխավոր դեր խաղա մի կողմից՝ դատական ծառայությունների որակի գնահատման չափանիշների սահմանման, մյուս կողմից՝ տարբեր լիազորություններին վերաբերող որակական տվյալների

¹⁴⁴ Տե՛ս [OPINION No.11 \(2008\) OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES \(CCJE\) TO THE ATTENTION OF THE COMMITTEE OF MINISTERS OF THE COUNCIL OF EUROPE ON THE QUALITY OF JUDICIAL DECISIONS](#)

¹⁴⁵ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

¹⁴⁶ [CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES \(CCJE\) OPINION N° 17 \(2014\) ON THE EVALUATION OF JUDGES' WORK, THE QUALITY OF JUSTICE AND RESPECT FOR JUDICIAL INDEPENDENCE PART ONE: INTRODUCTION](#)

¹⁴⁷ Տե՛ս [CDL-AD\(2013\)015. Opinion on the draft law on the courts of Bosnia and Herzegovina, §68 EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW \(VENICE COMMISSION\) COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES](#)

¹⁴⁸ Տե՛ս [OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

մշտադիտարկման և կիրառման գործում: Սակայն դատական խորհուրդը չպետք է ստանձնի դատական մարմնի դեր, որին վերապահված է դատավորների անհատական գնահատումը¹⁴⁹: **Վենետիկի Հանձնաժողովը** զարգացրել է այս միտքը, նշելով, որ դատական խորհրդի կողմից գործերը դասակարգելու և ժամկետները մշակելու գործընթացը պետք է կատարվի նախապատրաստական աշխատանքներում համապատասխան մասնագետների, փորձառու դատավորների և դատավորների միության մասնակցությամբ¹⁵⁰: Սկզբունքներն ու գործընթացները, որոնց վրա հիմնվում է գնահատումը, պետք է հասանելի լինեն հասարակությանը: Այնուամենայնիվ, անհատական գնահատումների գործընթացն ու արդյունքները պետք է գաղտնի մնան՝ դատավորի անկախությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով¹⁵¹: Գնահատում իրականացնողները պետք է բավարար ժամանակ և ռեսուրսներ ունենան՝ յուրաքանչյուր դատավորի անհատական հմտությունների և գործունեության համապարփակ գնահատումներն ապահովելու համար: Գնահատված դատավորը պետք է տեղեկացված լինի, թե ովքեր են գնահատողները և պետք է ունենա իրավունք՝ խնդրել փոփոխել ցանկացած գնահատողի, ով կարող է անկողմնակալ լինել¹⁵²:

ԵԱՀԿ-ի կողմից դեռևս 2010 թվականին դատական համակարգի անկախության վերաբերյալ կարծիք է արտահայտվել, որ անհրաժեշտ է խուսափել դատավորի գործունեությունը գնահատելիս վերադաս ատյանների կողմից վերացված կամ փոփոխված որոշումների քանակը հաշվի առնելու պրակտիկայից՝ հաշվի առնելով վերադաս ատյանների կողմից ստորադաս ատյանների դատավորների նկատմամբ ունեցած իրավագործությունը: Առաջարկվում է նաև վերանայել վերադաս ատյաններին գնահատման գործընթացին և կարգապահական հարցերին ներգրավելու պրակտիկան: Առավել բարձր լեգիտիմության և հասարակության կողմից ընդունվելու համար, ընտրությունն իրականացնող իշխանությունը նաև պետք է ուշադրություն դարձնի տարբերակված դատական իշխանություն ստեղծելուն: Դատական ակադեմիաների և վերապատրաստման ծրագրերի ներառումը ընտրական գործընթացում նույնպես կարող է նպաստել դատական մարմինների թեկնածուների անհրաժեշտ հմտությունների և բնութագրիչների գնահատմանը¹⁵³:

Գնահատման մեթոդները

Դատավորների կողմից կայացված որոշումների գնահատման համար սահմանված մեթոդները

Քանակական վիճակագրական մեթոդը ներառում է վիճակագրության անցկացումը դատարանի մակարդակում (ընթացքում գտնվող գործերի, ուսումնասիրված գործերի և այն գործերի վերաբերյալ

¹⁴⁹ Տե՛ս [Opinion no.10\(2007\) of the Consultative Council of European Judges \(CCJE\) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Council for the Judiciary at the service of society](#)

¹⁵⁰ Տե՛ս [CDL-AD\(2014\)007](#)

¹⁵¹ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

¹⁵² Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)

¹⁵³ Տե՛ս [STRENGTHENING JUDICIAL INDEPENDENCE AND PUBLIC ACCESS TO JUSTICE, Working Group I: Judicial Administration with a Special Focus on Judicial Councils](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վիճակագրություն, որոնցով որոշում է կայացվել, լսումների քանակը յուրաքանչյուր գործով, չկայացած լսումների քանակը, դատավարության տևողությունը և այլն): Քաղաքացիների կարիքները բավարարելու համար դատարանի կողմից կատարված աշխատանքի որակը արդարադատության իրականացման կարողությունը չափելու չափորոշիչներից մեկն է: Այս կարողությունը արդարադատության որակի ցուցանիշներից մեկն է: Հետագոտման այս մեթոդը հաշվի է առնում դատարանի գործունեությունը, բայց չի կարող ինքնուրույն բավարար լինել կայացված որոշումները որակը գնահատելու համար: Որոշումների բնույթը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից: Այս մեթոդը, այնուամենայնիվ, թույլ է տալիս գնահատել՝ արդյոք գործերն իրականացվել են ողջամիտ ժամկետներում, կամ արդյոք առկա է ծանրաբեռնվածություն, որը կարող է հիմնավորել լրացուցիչ ռեսուրսների տեղաբաշխումը և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Որակական վիճակագրական մեթոդի պարագայում, որոշումները դասակարգվում են՝ համաձայն դրանց տեսակի, սուբյեկտի և բարդության: Այս մեթոդը թույլ է տալիս գնահատելու գործերի տարբեր տեսակները՝ սահմանելու համար արդյունավետ և ճշգրիտ աշխատանքների բաշխում և նվազագույն ու առավելագույն ծանրաբեռնվածություն, որը կարող է պահանջվել դատարանից: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հաշվի է առնում առանձին տեսակի խնդիրների վերաբերող գործերի առանձնահատկությունները: Որակական վիճակագրական գնահատման բարդությունը կայանում է գնահատման գործոնները և դրանք սահմանող իրավասու մարմնին սահմանելու մեջ¹⁵⁴:

ԵԴԽԽ-ն կարծում է, որ անհատական գնահատումների կենտրոնում պետք է լինի դատավորների կայացրած որոշումների որակը, ոչ թե պարզապես քանակը¹⁵⁵:

Վերջինս անդրադարձել է նաև բարձրորակ դատավճիռների կարևորությանը: Դատավորների որոշումները գնահատելու համար գնահատողները պետք է կենտրոնանան դատավորի կողմից կիրառվող մեթոդաբանությանը ընդհանրապես իր աշխատանքի նկատմամբ, այլ ոչ թե հիմնվեն անհատական որոշումների իրավական արժեքի վրա: Վերջինս պետք է սահմանվի միայն բողոքարկման ընթացակարգերի ժամանակ: Գնահատողները պետք է հաշվի առնեն դատավորի աշխատանքի համակողմանիությունն այն համատեքստում, որում այդ աշխատանքը կատարվում է: Այդ իսկ պատճառով ԵԴԽԽ-ն խնդրահարույց է համարում գնահատման այն մեխանիզմը, որի միջոցով գնահատվում է դատարանի բողոքարկված որոշումները և թե դրանցից քանիսն են վերացվել վերադաս դատարանի կողմից:

Դատավորների գործունեության գնահատումը ՀՀ-ում

Դատավորների գործունեության գնահատման հարցերը կարգավորում են ստացել Դատական օրենսգրքի 18-րդ գլխում: Առաջին անգամ մանրամասն օրենսդրական կարգավորում է ստացել ինչպես գնահատման նպատակը, այնպես էլ տեսակները:

¹⁵⁴ Տե՛ս [OPINION No.11 \(2008\) OF CCJE](#)

¹⁵⁵ Տե՛ս [\(CCJE\) OPINION N° 17 \(2014\)](#)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատական օրենսգրքի 136-րդ հոդվածի տրամաբանությունից երևում է, որ դատավորների գնահատման առաջնային նպատակը առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելիս *լավագույն թեկնածուների ընտրությանը նպաստելն* է: Սակայն գնահատման նպատակը չի սահմանափակվում միայն սրանով: Քանզի որպես այդպիսին նախատեսվում է նաև դատավորների վերապատրաստումների ուղղությունների ընտրությանը նպաստելը, դատավորների աշխատանքի արդյունավետության բարելավման ուղիները բացահայտելը, դատավորների ինքնակատարելագործմանը նպաստելն ու դատարանի գործունեության արդյունավետության բարելավումը¹⁵⁶:

Գնահատման չափանիշները

Գնահատման հարցում, սակայն, էական դեր ունեն դատավորների գործունեության գնահատման չափանիշները, որոնք պետք է լինեն հնարավորինս հստակ ձևակերպված և օբյեկտիվ, իսկ գործընթացը՝ հնարավորինս թափանցիկ:

Այս առումով Դատական օրենսգրքում նախատեսված են դատավորների *աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշներ, աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշները և դատավորի էթիկայի գնահատման չափանիշները*: Նման դրույթների նախատեսումը, ինչ խոսք, ողջունելի է, սակայն գնահատման օբյեկտիվությունը պրակտիկայում պահանջելու է առավել հստակ և կոնկրետ դրույթներ՝ սուբյեկտիվ մոտեցումները բացառելու նպատակով: Քանզի, օրինակ, դատավորի կողմից դատական ակտը հիմնավորելու կարողությունը ինքնին լայն պահանջ է և պրակտիկայում կիրառելու համար կպահանջվի առավել հստակ և կանխատեսելի դրույթների սահմանում:

Ուշադրության է արժանի նաև դատավորների *էթիկայի գնահատման չափանիշները*: Մասնավորապես, սրա ներքո նախատեսված են էթիկայի կանոնների պահպանումը, դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը, ինչպես նաև այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

Այս առումով անհրաժեշտ է հստակ տարանջատել դատավորների գնահատման ու կարգապահական պատասխանատվության ընթացակարգերը և երաշխիքներ նախատեսել, որպեսզի էթիկայի կանոնների խախտման համար վրա հասած գնահատման արդյունքում դատավորը չենթարկվի կարգապահական պատասխանատվության: Նման խնդիրներից խուսափելու համար օրենսդրական մակարդակում պետք է դատավորներին գնահատման գործընթացում տրամադրվեն ընթացակարգային երաշխիքներ առ այն, որ գնահատման բացասական արդյունքները ուղղակիորեն չհանգեցնեն կարգապահական պատասխանատվության:

Գնահատումը ինքնին ներքին մոնիթորինգի գործիք է, ոչ պատժիչ: Նախկինում դատական օրենսգիրքը գնահատման հետ ավելի հստակ հետևանքներ էր կապում, օրինակ՝ առաջխաղացման հետ կապված: Հիմա պարբերականությունն է նվազել, իրենց նախաձեռնությամբ ու հետևանքների մասն է անհստակ, ինչը ԲԴԽ կարող է իր որոշումներով հստակեցնել: Ուղղակի պետք է հասկանալ, որ գնահատումը ներքին գործիք է, հրապարակման ենթակա չէ, որովհետև դա կարող է ազդել դատավորի հեղինակության վրա, և

¹⁵⁶ ՀՀ Դատական օրենսգրք, հոդված 136



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կետք է հասկանալ՝ ինչպես է այդ գործիքը օգտագործվում, իր հիմնական նպատակը, որ հետո ինքնակառավարման մարմինը՝ ՂԲԽ խոսի դատավորի հետ, մշակվի դատավորի կատարելագործման մեխանիզմներ ու դատավորն այդ ուղղությամբ աշխատի: Եթե կա կամք, դա կաշխատի, եթե չէ, դա կդառնա ֆորմալ առաջադրանք:
Փորձագետ

Կարգապահականը կետք է վերջնական միջոց լինի, ներքին մոնիթորինգը առաջին գործիքն է, ու գնահատումը կետք է օգտագործվի: Բայց իր հետևանքներով դա չպետք է գնա կարգապահականի, սա կետք է լինի ներքին կատարելագործման գործիք:
Փորձագետ

Պատասխանատու մարմին

Պետք է գնահատման գործընթացում դրսից մարդիկ լինեն: Ուղղակի խնդիրը նրանում է, թե ոնց են ընտրելու այդ անդամներին, եթե օբյեկտիվ լինի, շատ լավ:
Փորձագետ

Ինչպես կարող է մեկ մարմինը գնահատել մյուսի աշխատանքը և միաժամանակ պատասխանատվության ենթարկել: Կարծում եմ սա օրենքի սխալ կարգավորում է:
Փորձագետ

ՀՀ ներպետական կարգավորումների համաձայն՝ դատավորների գործունեության գնահատման ողջ գործընթացի պատասխանատվությունը կրում է Բարձրագույն դատական խորհուրդը, որը կետք է նաև սահմանի գնահատման մեթոդաբանությունը, անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և այլ անհրաժեշտ մանրամասներ:

Ստացվում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը իրավասու է ինչպես դատավորների նշանակման ու առաջխաղացման համար, այնպես էլ միանձնյա կարգով գնահատման: Մինչդեռ դատավորների անհատական գնահատումը չպետք է իրականացվի դատական խորհուրդների կողմից՝ դատավորների անկախության հնարավորինս ապահովման նպատակից ելնելով:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորների վերապատրաստումներ

Միջազգային չափանիշներ

Դատական իշխանության անկախությունը կարող է երաշխավորվել դատական իշխանության կողմից «բոլոր և յուրաքանչյուր դատավորի համար բարձրորակ վերապատրաստում» իրականացնելու և վերահսկելու միջոցով: Այդ վերապատրաստումները ամբողջությամբ պետք է ֆինանսավորվեն պետության կողմից և ներառեն ոչ միայն տեսական և պրակտիկ թեմաներ, այլև դատավորի գործառույթների իրականացմանը վերաբերող տնտեսական, սոցիալական և մշակութային խնդիրներ¹⁵⁷:

Ըստ ԵԴԽԽ Թիվ 10 կարծիքի՝ դատավորների վերապատրաստումների կազմակերպման և վերահսկողության պարտականությունը պետք է վստահվի դատական իշխանությանը, գերադասելի է՝ դատական խորհրդին: Ավելին, վերապատրաստումների ծրագրերի հայեցակարգի և դրա իրականացման լիազորությունները նույնպես պետք է վստահվեն դատական իշխանության մարմիններին՝ դատական խորհրդին կամ այլ անկախ մարմնի՝ օրինակ՝ ակադեմիայի, որն ունի իր բյուջեն և պետք է աշխատի դատավորների հետ խորհրդակցելով: Ակադեմիայի առկայության դեպքում, խորհրդի և ակադեմիայի գործառույթները պետք է հստակորեն տարանջատվեն (չկրկնվեն): Մինչդեռ, եթե դատական խորհուրդը ունի լիազորություններ և դատավորների նշանակման կամ առաջխաղացման, և վերապատրաստման հարցում, հստակ տարանջատում պետք է սահմանվի խորհրդի այն մարմինների միջև, որոնք պետք է իրականացնեն տվյալ գործառույթները, և պետք է բացառվեն կապերը արդարադատության նախարարության կամ կրթության նախարարության հետ¹⁵⁸: Դատական խորհուրդը պետք է համագործակցի վերապատրաստող մարմնի հետ նախնական և շարունակական վերապատրաստումների շրջանակներում՝ ի ապահովումն արդյունավետ և բարձրորակ վերապատրաստման, և ապահովի դատավորների ընտրությունը՝ հիմք ընդունելով օբյեկտիվ և չափելի չափորոշիչներ, պատշաճ վերապատրաստումը և արժանիքների վրա հիմնված համակարգի գործունեությունը:

Ըստ ԵԴԽԽ Թիվ 10 կարծիքի՝ դատական խորհուրդը պետք է համագործակցի վերապատրաստում իրականացնող մարմինների հետ նախնական վերապատրաստման ծրագրերի ստեղծման և զարգացման հարցում, որի միջոցով թեկնածուները ոչ միայն կբարելավեն և խորացնեն իրենց իրավական գիտելիքները ազգային և միջազգային նյութական իրավունքների և դատավարության մեջ, այլև կզարգացնեն լրացուցիչ հմտություններ, այդ թվում՝ օտար լեզուների գիտելիքներ, էթիկա, վեճերի լուծման այլընտրանքային տեսակներ՝ ի ապահովումն դատավորների քննադատական և անկախ մտածողության, սոցիալական զգայունության և լայնախոհության: Ի լրումն դրա՝ դատական խորհուրդը պետք է լիազորություն ունենա իրականացնելու վերապատրաստումների գնահատում, այն իմաստով, որ հետևելով դատավորների մասնագիտական զարգացմանը և ամենօրյա աշխատանքին նշանակումից

¹⁵⁷ Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12, para. 56; Council of Europe, European Charter on Status of Judges, para. 4.4.

¹⁵⁸ CCJE, Opinion No 10(2007), paras. 65-66; ENCI, Councils for the Judiciary Report 2010-2011, p. 8.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հետո առաջին տարիների ընթացքում՝ կարողանա գնահատել նախնական վերապատրաստման արդյունավետությունը և առաջարկություններ ներկայացնել դրա բարելավման համար¹⁵⁹:

Շարունակական վերապատրաստումների առնչությամբ ԵԴԽՄ նշում է, որ դատական խորհուրդը պետք է խրախուսի դատավորների մասնակցությունը վերապատրաստման ծրագրերին՝ որպես մասնագիտական գործունեության էական տարր՝ հաշվի առնելով նրանց առաջնադասման հարցը քննարկելիս: Դատական խորհրդի կողմից կազմվող տարեկան ամփոփումները դատարանների և դատավորների աշխատանքի գնահատման մասին պետք է ներառեն տվյալներ այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնց շուրջ անհրաժեշտ է վերապատրաստում, այդ թվում՝ գործերի և ժամանակի կառավարում, բյուջետավորումը, աշխատանքային միջոցների զարգացումը, հանրային հարաբերությունների կարողությունները, հաղորդակցվելու հմտություններ, իրավական հետազոտություններ և այլն¹⁶⁰: Ընդհանուր առմամբ, դատական խորհուրդը պետք է լայնորեն ներգրավվի վերապատրաստման տարեկան ծրագրի թեմաների շուրջ քննարկումներում: Դատական խորհուրդը պետք է նաև մոնիտորինգի ենթարկի վերապատրաստումների իրականացումը և գնահատի դրանց ազդեցությունը դատական իշխանության գործունեության որակի վրա¹⁶¹:

Ի ապահովումն դատավորների վերապատրաստումների որակի՝ դատական խորհուրդը պետք է ապահովի պատշաճ ֆինանսավորում դասընթացների իրականացման համար բյուջետային մարմինների հետ լայնածավալ և պարբերական բանակցությունների միջոցով:

Եվրոպական պետություններում վերապատրաստումների կազմակերպման տարբեր համակարգեր են գործում: Միաժամանակ, գոյություն ունի ձևավորվող փոխհամաձայնություն առ այն, որ դատական իշխանության դասընթացները պետք է հանձնվեն անկախ մարմնի, որ ունի իր բյուջեն, և այդ մարմինը պետք է գործի դատական խորհրդի կողմից հաստատված կանոններով՝ դատական խորհուրդը իրականացնելով վերահսկող դեր դասընթացների իրականացման հարցում, սակայն գործառնական պատասխանատվությունը թողնելով անկախ մարմնին¹⁶²: Նույն տեսակետն արտահայտվել է նաև Վենետիկյան հանձնաժողովի կողմից ներպետական օրենսդրությունների վերաբերյալ կարծիքներում: Օրինակ Բուլղարիայի Դատական համակարգի մասին օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի մասին կարծիքում Վենետիկյան հանձնաժողովն արձանագրել է, որ Արդարադատության ազգային ինստիտուտը, ով պատասխանատու է դատավորների վերապատրաստումների համար, պետք է վերահսկվի Բարձրագույն դատական խորհրդի կողմից, այլ ոչ՝ արդարադատության նախարարության՝ ի ապահովումն դատական իշխանության անկախության¹⁶³: Նույն կերպ, Վենետիկյան հանձնաժողովը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի դերին դատավորների նշանակման հարցում, կարևորել է օրենքով երաշխավորել նվազագույնը, որ արդարադատության նախարարությունը չունենա կարևոր դերակատարում Ակադեմիայում և դրա տարբեր մարմիններում նշանակումների և ազատումների հարցում¹⁶⁴:

¹⁵⁹ CCJE, Opinion No 10(2007), paras. 68-69.

¹⁶⁰ CCJE, Opinion No 10(2007), paras. 70-71.

¹⁶¹ Ibid, para. 72.

¹⁶² ENCJ, Councils for the Judiciary Report 2010-2011, p. 8.

¹⁶³ Venice Commission, Opinion on the Draft Law on Amendments to the Judicial System Act of Bulgaria, CDL-AD(2002)015, para. 5.

¹⁶⁴ Venice Commission, Armenia - Opinion on the Draft Judicial Code, CDL-AD(2017)019, para. 120.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներպետական օրենսդրություն

Բարձրագույն դատական խորհուրդը և Արդարադատության ակադեմիա ինստիտուցիոնալ կապը

ՀՀ արդարադատության ակադեմիան պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիրը ՀՀ կառավարությունն է: Հիմնադրի անունից հանդես եկող մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է: Բարձրագույն դատական խորհուրդը որևէ ինստիտուցիոնալ գործառույթ չունի արդարադատության ակադեմիայի և դրա մարմինների ընտրության և գործունեության առնչությամբ:

Արդարադատության ակադեմիան կառավարվում է Ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից, որի անդամ է հանդիսանում նաև արդարադատության նախարարը (կամ նրա նշանակման՝ տեղակալը), 3 դատավորներ՝ նշանակված ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև 3 դատախազներ՝ նշանակված ՀՀ գլխավոր դատախազի կողմից: Անհրաժեշտ է փաստել, որ օրենքով արգելվում է արդարադատության նախարարի ընտրությունը՝ որպես խորհրդի նախագահ: Ակադեմիայի կառավարման խորհուրդն է իրականացնում ակադեմիայի կառավարումը, մշակում և արդարադատության նախարարի միջոցով կառավարությունն է ներկայացնում դրա կանոնադրությունը կամ դրանում առաջարկվող փոփոխությունները, վերահսկողություն է իրականացնում Ակադեմիային ամրակցված պետական սեփականության, ինչպես նաև Ակադեմիայի սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ, ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ներքին կարգապահական կանոնները, հաստիքացուցակն ու աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, ռեկտորի ներկայացմամբ հաստատում է Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը) և ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով կառավարություն է ներկայացնում առաջարկություններ Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվի (բյուջետային հայտի) վերաբերյալ, և այլ գործառույթներ¹⁶⁵:

Ավելին, չնայած Արդարադատության ակադեմիայի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ առանձին տողով, ֆինանսական Ակադեմիային հատկացվում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ վերապատրաստման ծառայությունների մատուցման ծրագրի շրջանակներում¹⁶⁶:

Այդպիսով, ԲԴԽ չունի ինստիտուցիոնալ որևէ կապ Արդարադատության ակադեմիայի հետ, ներգրավված չէ դատավորների թեկնածուների հավակնորդների ու դատավորների ուսումնական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների շուրջ բանակցելու հարցում՝ ի ապահովումն դատական իշխանության կարիքներին համահունչ ֆինանսավորման:

Բարձրագույն դատական խորհրդի ներգրավվածությունը ուսումնական գործընթացներում

Հայաստանի Հանրապետությունում դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստումը և դատավորների շարունակական վերապատրաստումները կատարվում են Արդարադատության ակադեմիայի կողմից: ՀՀ դատական օրենսգրքով սահմանված կարգով

¹⁶⁵ Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենք, հոդված 6:

¹⁶⁶ Տես օրինակ, <http://www.justice.am/storage/uploads/001.akademia.pdf>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որակավորման ստուգման արդյունքների¹⁶⁷ (որակավորման գրավոր քննության և հարցազրույցի) հիման վրա ԲԴԽ կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը և այն ներկայացնում Արդարադատության ակադեմիա՝ նրանց ուսուցումը կազմակերպելու նպատակով¹⁶⁸: Արդարադատության ակադեմիայում ուսուցումն ավարտած դատավորների թեկնածուների հավակնորդներին ներառում է դատավորների թեկնածուների ցուցակներում՝ ըստ համապատասխան մասնագիտացումների¹⁶⁹: Ըստ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ արդարադատության ակադեմիայում իրականացնում է դատավորների թեկնածությունների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց առաջնային ուսուցում՝ ուղղված վերջիններիս մեջ դատավորի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը: Ակադեմիայում իրականացվում է դատավորների վերապատրաստումը՝ նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման համար¹⁷⁰: Հայաստանի Հանրապետության դատավորները պարտավոր են մասնակցել պարտադիր վերապատրաստումների ծրագրերին, ինչպես նաև ապահովել իրենց պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը¹⁷¹: Ավելին, օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը հանդիսանում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք¹⁷²:

Արդարադատության ակադեմիայում ուսուցման ծրագրերը (ինչպես մասնագիտական պատրաստումը, այնպես էլ վերապատրաստման ծրագրերը) իրականացվում են Ակադեմիայի կառավարման խորհրդի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա կազմված և հաստատված ուսուցման ծրագրերով¹⁷³:

ԲԴԽ լիազորություն չունի լիազորություններ դատավորների մասնագիտական պատրաստման և վերապատրաստումների իրականացման, ծրագրերի մշակման, Արդարադատության ակադեմիային առաջարկությունների ուղղակի ներկայացման, ինչպես նաև վերահսկողության առնչությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ դատավորների վերապատրաստման կարգը սահմանում է Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը: Հանձնաժողովը Արդարադատության ակադեմիային է ներկայացնում նաև դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածուների հավակնորդների ու դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերում առարկայական կուրսերի կամ թեմաների ներառման վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև Արդարադատության ակադեմիային է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը առարկայական կուրսերի ընտրության նշումով¹⁷⁴:

¹⁶⁷ Դատական օրենսգրքի, հոդվածներ 100-108:

¹⁶⁸ Դատական օրենսգրքի, հոդված 109, 9-րդ մաս:

¹⁶⁹ Դատական օրենսգրքի, հոդված 110:

¹⁷⁰ Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենք, հոդված 18:

¹⁷¹ Դատական օրենսգրքի, հոդված 70, 2-րդ մաս, 9-րդ կետ:

¹⁷² Դատական օրենսգրքի, հոդված 14, 1-ին մաս, 3-րդ կետ:

¹⁷³ Նույն տեղում, հոդված 19, մաս 1:

¹⁷⁴ Դատական օրենսգրքի, հոդված 78, 3-րդ մաս, տես նաև Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքի հոդված 19, 4-րդ մաս:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ավելին, դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստման ծրագրերում առարկայական կուրսերի և թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները Արդարադատության ակադեմիայի ռեկտորին են ներկայացնում նաև Արդարադատության նախարարն ու Գլխավոր դատախազը¹⁷⁵: Ներկայացված առաջարկությունների և Ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից հաստատված կրթական չափորոշիչների հիման վրա ռեկտորը կազմում և կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում ուսուցման ծրագրերը: Խորհուրդը հաստատում է ռեկտորի ներկայացրած ծրագրերը կամ առաջարկում է դրանցում կատարել փոփոխություններ: Ծրագրերում առաջարկված փոփոխությունների վերաբերյալ ռեկտորի անհամաձայնության դեպքում խորհուրդն իրավունք ունի ծրագրերն իր հաստատմանը կրկին ներկայացնելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում հաստատելու ծրագրերն իր համար նախընտրելի տարբերակով: Սահմանված ժամկետում ծրագրերը չհաստատվելու դեպքում դրանց ընդունված են համարվում ռեկտորի ներկայացված տարբերակով¹⁷⁶:

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ ԲԴԽ չունի լիազորություն Արդարադատության ակադեմիային ներկայացնելու դատավորների վերապատրաստման ծրագիր կամ ուղղություններ: ԲԴԽ դերակատարումը, ըստ դատական օրենսգրքի, Ուսումնական հարցերի հանձնաժողովին դատավորի գործունեության գնահատման արդյունքների տրամադրումն է վերջինիս կողմից դատավորների վերապատրաստման ուղղություններն ընտրելու նպատակով: Միաժամանակ, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԲԴԽ կարող է Արդարադատության ակադեմիայի ռեկտորին ներկայացնել առաջարկությունների դատավորների լրացուցիչ վերապատրաստման (վերապատրաստման ուսուցման ծրագրերից դուրս առանձին ոլորտում անհրաժեշտ մասնագիտական, որակավորումը լրացնող ուսումնական դասընթացի) առարկայական կուրսերի և թեմաների առնչությամբ¹⁷⁷:

Մինչդեռ, ԲԴԽ լիազորված է հաստատել դատական ծառայողների ու դատական կարգադրիչների վերապատրաստում անցկացնելու կարգը, նրանց ուսուցման ծրագրերում ներառման նպատակով Արդարադատության ակադեմիա ներկայացնել առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ, սահմանել ուսումնառության ժամաքանակը¹⁷⁸:

Նման պայմաններում, ԲԴԽ չունի ներգրավվածություն դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստումների, դատավորների վերապատրաստումների ծրագրերի մշակման, իրականացման, ինչպես նաև դրանց արդյունքների վերահսկողության հարցում, մինչդեռ ինչպես սահմանված է միջազգային չափանիշներով, դատական խորհուրդը պետք է համագործակցի վերապատրաստումներն իրականացնող մարմնի հետ ինչպես նախնական ուսուցման, այնպես էլ շարունակական վերապատրաստումների շրջանակներում՝ ի ապահովումն արդյունավետ և բարձրորակ վերապատրաստման:

¹⁷⁵ Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենք, հոդված 19, 5-րդ մաս:

¹⁷⁶ Նույն տեղում, 7-րդ մաս:

¹⁷⁷ Նույն տեղում, 9-րդ մաս:

¹⁷⁸ Դատական օրենսգրքը, հոդված 89, 1-ին մաս, 36-38-րդ կետեր:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պրակտիկայի ուսումնասիրություն

Պրակտիկայում հարցված փորձագետների կողմից մատնանշվել են խնդիրներ, որոնք կապված են դատավորների վերապատրաստումները ոչ ըստ նրանց կարիքների գնահատման իրականացնելուն, վերապատրաստումներում տեսական նյութի գերակշռությանը և այլն:

Վերապատրաստումների ծրագրերը պետք է վերանայվեն: Դրանցում պետք է լինեն հրատապ արդիական պրակտիկ նշանակության հարցեր: Դատավորների կարիքները ճիշտ չեն գնահատվում:

Պետք է ուսումնասիրել դատական համակարգի խնդիրները և դրանց շուրջ վերապատրաստում իրականացնել, որտեղ են հատկապես դատավորները նեղվում, որտեղ սխալվում: Կարելի է դատավորներից անանուն հարցման միջոցով ճշտել նրանց կարիքները, ուսումնասիրել դատական պրակտիկան, գործերով բեկանումների թիվն ու դրանց բնույթը, ու էդ հարցերի շուրջ իրականացնել վերապատրաստում:

Փորձագետ

ԲԴԽ էական դերակատարումը Արդարադատության ակադեմիայում ուսումնական ծրագրերի, դրանց ուղղությունների մշակմանը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ ըստ ՀՀ օրենսդրության՝ ԲԴԽ է լիազորված իրականացնել ոչ միայն դատավորների գնահատում, այլև դատավորների կարգապահական պատասխանատվության հարցի լուծում, որպիսի պայմաններում ԲԴԽ տիրապետում է պրակտիկայում հանդիպող խնդիրների ամբողջական համալիրին, դատական գործերի վիճակագրությանը և պրակտիկային, որոնց առնչությամբ անհրաժեշտ կլինի ինչպես դատավորների թեկնածուների հավակնորդների, այնպես էլ դատավորների շրջանում իրականացնել ուսումնական ծրագրեր և վերապատրաստումներ դատական իշխանության կրողների գիտելիքների և հմտությունների կատարելագործման նպատակով: Ավելին, ԲԴԽ կարող է էական դերակատարում ունենալ նաև վերապատրաստումների արդյունավետության գնահատման հարցում հետագայում դատավորների գործունեության գնահատման համատեքստում:

Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել ԲԴԽ լիազորությունը դատավորների թեկնածուների հավակնորդների մասնագիտական պատրաստման և դատավորների վերապատրաստման ուղղությունների, թեմաների և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու առնչությամբ:

Այսպիսով, Արդարադատության ակադեմիան, որն իրականացնում է դատական իշխանության ներկայացուցիչների մասնագիտական պատրաստումն ու շարունակական վերապատրաստումները գործում է գործադիր իշխանության ներքո՝ բացառելով դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ներգրավվածությունը դրա կառավարման և ֆինանսավորման հարցերին:

Ավելին, ԲԴԽ չունի որևէ ներգրավվածություն դատավորների թեկնածուների հավակնորդների ու դատավորների համար ուսումնական ծրագրերի մշակման, դրանց շուրջ առաջարկություններ ներկայացնելու հարցում, բացառությամբ լրացուցիչ վերապատրաստումների առնչությամբ առարկայական կուրսերի ու թեմաների ներկայացման:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության ակադեմիայի կառավարման, ինչպես նաև դատավորների գնահատման և բողոքարկման հանձնաժողովների աշխատանքներում ՀՀ արդարադատության նախարարությունը չունի որոշիչ ազդեցություն, այդուամենայնիվ Բարձրագույն դատական խորհրդի կողմից Արդարադատության ակադեմիայի ֆինանսավորման, ինչպես նաև դատավորների թեկնածուների հավակնորդների ու դատավորների ուսումնական ծրագրերի շուրջ առաջարկություններ ներկայացնելու, դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը կապահովի դատական իշխանության կարիքներին համահունչ մասնագիտական պատրաստումների ու վերապատրաստումների իրականացմանը:

Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել ԲԴԽ-Արդարադատության ակադեմիա լայն համագործակցության հնարավորություն:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորների կարգապահական պատասխանատվությունը

Միջազգային չափանիշներ

Դատավորների կարգապահական պատասխանատվության և վերջիններիս մասնագիտական վարքագծի էթիկայի նորմերի վերաբերյալ ընդհանուր մոտեցումը հանգում է հետևյալին՝ դատավորի կողմից օրենքի մեկնաբանությունները, փաստերի գնահատումն ու ապացույցների կշռադատումը չպետք է հանգեցնի քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվության, բացի կոպիտ անփութության կամ խախտման դեպքերի: Նշված հիմքերը չպետք է հանգեցնեն նաև քրեական պատասխանատվության, բացառությամբ դիտավորությամբ թույլ տրված խախտումների:

Նման մոտեցում արտահայտվել է Դատավորների կարգավիճակի վերաբերյալ եվրոպական խարտիայում, Վենետիկյան հանձնաժողովի կարծիքներում, Դատավորների Մագնա Կարտայում¹⁷⁹ և այլ փաստաթղթերում: Խարտիան սահմանել է մասնավորապես, որ մարմինը, որը որոշում է կայացնում դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ, անդամների առնվազն կեսը պետք է կազմված լինի դատավորներից: Ինչ վերաբերում է ընթացակարգին, ապա կարևորվում է վարույթին դատավորի մասնակցությունն ու ներկայացված լինելը¹⁸⁰:

Միջազգային ասպարեզում դատավորների կարգապահության վերաբերյալ առավել համապարփակ փաստաթուղթ է հանդիսանում Դատավորների վարքագծի վերաբերյալ Բանգալորյան սկզբունքները¹⁸¹: Վերջիններս կենտրոնանում են 6 հիմնական արժեքների վրա՝ անկախություն, անկողմնակալություն, բարեխղճություն, պատշաճություն, հավասարություն և կոմպետենտություն:

Կարգապահական պատասխանատվության հիմքերը

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատավորները անձնական պատասխանատվություն չեն կրում իրենց կայացրած որոշումները բեկանվելու կամ փոխվելու համար: Նմանապես, դատավորները չպետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների կամ դատարանների քննադատության համար¹⁸²:

Ոչ դատական գործառույթներ իրականացնելիս դատավորները ենթակա են պատասխանատվության ընդհանուր կարգով:

Վենետիկյան հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում առանձնակի կարևորում է պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակության հարցը¹⁸³:

¹⁷⁹ Magna Carta Of Judges

¹⁸⁰ European Charter on the statute for judges

¹⁸¹ Ibid 25

¹⁸² Ibid 35

¹⁸³ Venice Commission, Opinion No. 893/2017, on the draft judicial Code of Armenia, 2017



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը էթիկայի նորմերի կապակցությամբ սահմանել է, որ վերջիններս հանդիսանում են դատական իշխանության ինքնակառավարման գործիքներ՝ էթիկայի օրենսգրքերի տեսքով, որոնք գոյություն ունեն մի շարք երկրներում՝ Իտալիա, Ֆրանսիա, Էստոնիա, Լիտվա, Ուկրաինա, Մլովենիա, Չեխիա և այլն: Տաջիկիստանի և Ղրղզստանի վերաբերյալ տրված կարծիքներում Վենետիկյան հանձնաժողովը նախապատվություն է տվել խորհրդատվական դեր ունեցող էթիկայի կանոններին, այսինքն, որը պարտադիր իրավաբանական ուժ չունի և ուղղակիորեն չի կիրառվում կարգապահական գործընթացներում:

Հանձնաժողովը նշել է նաև, որ էթիկայի նորմերը խախտելը չպետք է ուղղակիորեն հիմք հանդիսանան կարգապահական պատասխանատվության: Էթիկայի նորմերը կարգապահական պատասխանատվության կիրառելու գործիք օգտագործելը վտանգավոր է նաև դատական անկախության համար¹⁸⁴:

Վենետիկյան հանձնաժողովը վկայակոչում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու կանոնները ուղղակիորեն ազդում են դատավորների անկախության վրա: Լայն և ոչ հստակ սահմանումները մեծացնում են դրանց մեկնաբանության և չարաշահման հնարավորությունները, ինչը կարող է վտանգավոր լինել դատավորների անկախության համար: Հետևաբար, խորհուրդ է տրվում սահմանել առավել կոնկրետ հիմքեր կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Միննույն ժամանակ անհնար է ակնկալել, որ օրենսդիր մարմինը կկարողանա հստակ և սպառիչ թվարկել անընդունելի վարքագծի բոլոր դրսևորումները:

Ինչ վերաբերում է քաղաքականության մեջ դատավորների ներգրավվածությանը, ապա այն ավելի շուտ իրավական պարտավորություն է, քան էթիկայի նորմ: Դատավորների քաղաքացիական կյանքի ակտիվությունն ու մասնակցությունը առավել դժվար հարցերից է և յուրաքանչյուր երկիր իր կարգավորումներն ունի: Ակնհայտորեն կան կանոններ, որոնք գործում են ամեն տեղ, օրինակ, որ դատավորը չհանդիսանա քաղաքական կուսակցության անդամ կամ հրապարակային խոսի քաղաքական բնույթի հանդիպումներին¹⁸⁵:

Վենետիկյան հանձնաժողովը բազմիցս սահմանել է, որ դատավորի *երդման դրժումը* որպես հիմք բավականին լայն է, որպեսզի հանգեցնի պաշտոնանկության: Այս մտեցումը հաստատվել է նաև ՄԻԵԴ-ի կողմից՝ Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի դեմ գործով: Դատարանը սահմանել է, մասնավորապես, որ դատավորի կողմից դատավորի երդման խախտումը՝ որպես կարգապահական պատասխանատվության հիմք նախատեսելը, առանց ուղեցույցների և հստակ պրակտիկայի, ինչպես նաև պատշաճ իրավական երաշխիքների բացակայությամբ, խնդրահարույց է և վիճելի: Նման անհստակության պարագայում, դատավորի պրակտիկայում տեղի ունեցող ցանկացած թերացում հնարավոր է մեկնաբանել որպես երդման խախտում, ինչը կհանգեցնի պաշտոնից ազատման¹⁸⁶:

Ավելին, այն դեպքում, երբ սահմանվում է դատավորի *ընտանիքի անդամներից* կողմից իրականացվելիք հնարավոր գործողությունների շրջանակը, անհրաժեշտ է նախ հստակեցնել ընտանիք եզրույթը:

On The Law 29/1967 Concerning The Judicial System, The Supreme Council Of The Judiciary, And The Status Of Judges In Tunisia (As Amended Up To 12 August 2005)

¹⁸⁴ CDL-AD(2013)035, Opinion on the draft Code on Judicial Ethics of the Republic of Tajikistan, §§15 and 16

¹⁸⁵ Opinion no 841/2016, on Republic of Kazakhstan, on the draft Code of Judicial Ethic

¹⁸⁶ Volkov v Ukraine, ECHR, 2011, para 185-186



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորը չպետք է պատասխանատվություն կրի ընտանիքի այն անդամի խախտման համար, ում նկատմամբ չունի վերահսկողություն:

Կարգապահական պատասխանատվության և կիրառվող միջոցների մասով հանձնաժողովը սահմանել է նաև, որ պետք է հստակ լինեն կայացված որոշումների բողոքարկման մեխանիզմներն ու ընթացակարգերը¹⁸⁷:

Կարծիք հայտնելով Մակեդոնիայի դատական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ և հատկապես կարգապահական պատասխանատվության հիմքերի առնչությամբ՝ Հանձնաժողովը գտել է, որ մանր կարգապահական խախտումները, որպիսիք են օրինակ դատական գործառույթների վրա ազդեցություն թողնող անկարգությունը, Արդարադատության խորհրդի կամ Բարձրագույն դատարանի կոչով չգործելը ոչ հստակ հիմքեր են և կարող են կարգապահական վարույթի մեջ սուբյեկտիվ ընկալման տարր մտցնել: Որպես կոպիտ կարգապահական խախտում է սահմանվել դատավարական ժամկետների տարբեր խախտումները, ինչը կրկին պրակտիկայում կարող է հանգեցնել անորոշության: Ոչ հստակ է նաև դատավորին՝ կողմերի նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովելու առնչությամբ դրսևորած կողմնապահության համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը: Քանի որ այդ հիմքի դրսևորումը սովորաբար հանգեցնում է որոշման բեկանման՝ արդար դատաքնության իրավունքի խախտման հիմքով:

Որպես կոպիտ խախտում է դիտարկվում նաև վերջնական չհամարվող դատական գործերով տեղեկատվության հանրայնացումը, ինչի կապակցությամբ հանձնաժողովը նշել է, որ դատավորների կողմից իրենց պարտականություններն իրականացնելիս որևէ տեղեկատվության հանրայնացման արգելքը չափազանց ծայրահեղ սահմանափակում է: Հետևաբար, սահմանափակման կարելի է ենթարկել միայն գաղտնի տեղեկությունները:

Ինչ վերաբերում է հանրային վայրերում դատավորի ոչ արժանավայել վարքագծին, ինչը կրկին պատասխանատվության հիմք կարող է հանդիսանալ, ապա սահմանվել է, որ դատավորի արժանապատվության կոնցեպտը հարաբերականորեն լայն և չափազանց սուբյեկտիվ ընկալում է, որպեսզի կարգապահական բողոքի հիմք հանդիսանա:

Հանձնաժողովը ըստ այդմ սահմանել է, որ դատավորները մասնավոր կյանքում պետք է հարգանքի արժանի վարքագիծ ցուցաբերեն, սակայն դժվար է պարտականությունների դուրս դրսևորվող հարաբերություններում սահմանել վարքագծի կոնկրետ ստանդարտներ՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր երկրի բարոյական արժեքների զարգացումը:

Խոսելով դատական ծանրաբեռնվածության մասին՝ հանձնաժողովը նշել է, որ եթե դատավորը ավելի քիչ թվով դատական գործեր է ավարտին հասցրել, քան պահանջված է եղել, ապա նման դեպքերը պետք է քննարկման առարկա դառնան: Կարևոր է, որպեսզի գոյություն ունեցող բոլոր գործերը գնահատվեն, քանի որ չի կարելի թույլ տալ մի դատավորի բաժին հասնի ավելի բարդ գործերի քանակ, իսկ մյուսին թեթև գործեր, ինչի պատճառով երկրորդի ծանրաբեռնվածությունը ավելի քիչ է երևում¹⁸⁸:

¹⁸⁷ Preliminary opinion on the Draft Law on Amending the law on the Judicial system and the status of judges of Ukraine, no 792/2015

¹⁸⁸ Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը նշել է նաև, որ զուտ այն հանգամանքը, որ մի դատավորի պարագայում հնարավոր է մի քանի գործերի վերանայում վերադաս աստիճանի կողմից, դեռևս չի նշանակում, որ վերջինս թույլ է տվել մասնագիտական վարքագծի խախտում: Նման դեպքերում հնարավոր է քննարկման առարկա դարձնել տվյալ դատավորի կոմպետենտությունը¹⁸⁹:

Վենետիկյան հանձնաժողովը Մոլդովայի Դատական օրենսգրքի¹⁹⁰ վերաբերյալ հայտնած կարծիքում նշել է, որ «*օրենքի դիտավորյալ կիրառումը կամ անբարեխիղճ կիրառումը կամ օրենքների կիրառման պարբերական անփութությունը, որը հակասում է իրավական պրակտիկային*» ինչը սահմանվում է որպես կարգապահական խախտում, հստակ չէ և կարող է տարբեր իրավիճակում տարբեր մեկնաբանության ենթարկվել՝ թուլացնելով դատավորների անկախությունը:

Հանձնաժողովը ընդունել է նաև, որ դատավորին չպետք է սահմանափակել գործող նախադեպերը կիրառելով: Նրա գործառույթը գոյություն ունեցող իրավական կարգավորումները անկախ մեկնաբանելն է, ինչով պայմանավորված՝ վերջիններս երբեմն կարող են կիրառել կամ մեկնաբանել օրենքները այնպես, որը հակառակ լինի իրավական միասնական պրակտիկային:

Նմանապես, դատավորի կողմից տրված իրավական մեկնաբանությունը, որը չի համապատասխանում ընդունված նախադեպերին, չի կարող կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ, եթե իհարկե այն անբարեխիղճ մեկնաբանության արդյունք չէ՝ նպատակ ունենալով վնասել կողմերից մեկին:

Դատավորի կողմից մեկ այլ դատավորի մասնագիտական գործունեության միջամտության հարցը որպես կարգապահական խախտում քննարկելիս, Հանձնաժողովը առաջարկել է նախատեսել անհիմն միջամտության իրավիճակները որպես պատասխանատվության հիմք:

Նմանապես, «*հանցագործության տարր պարունակող արարք կատարելը, որը դեմ է եղել արդարադատությանը*» որպես կարգապահական պատասխանատվության հիմք նախատեսելը նույնպես հստակ ձևակերպում չէ, և միտում ունի կարգապահական պատասխանատվության կոնցեպտի մեջ ավելացնել քրեական տարրեր, ինչը անընդունելի է:

Կարգապահական պատասխանատվությունը կարելի է կիրառել, երբ քրեական մասով դատավորը արդարացվել է կամ քրեական հետապնդումը դադարեցվել է, բայց կարգապահական վարույթը չպետք է հակասի արդար դատաքննության իրավունքին ու սահմանված երաշխիքներին:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի մեջ «*արդարադատության հեղինակություն*» կամ «*դատավորի արժանապատվություն*» տերմինների նախատեսումը ընդհանուր առմամբ չափազանց լայն հասկացություններ են և սուբյեկտիվ ընկալման ենթակա:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմնական պահանջները հետևյալն են՝

- Սահմանված պարտավորությունների խախտում
- Առնվազն կազմի կեսը դատավորներից բաղկացած մարմնի կողմից նախաձեռնություն

¹⁸⁹ CDL-AD(2009)023, Opinion on the Draft Criteria and Standards for the Election of Judges and Court Presidents of Serbia

¹⁹⁰ Joint Opinion on the Draft Law On Disciplinary Liability of Judges of The Republic of Moldova Adopted By The Venice Commission At Its 98th Plenary Session (Venice, 21-22 March 2014) On The Basis Of Comments By



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- Դատավորի մասնակցությամբ արդար քննություն
- Սահմանված պատասխանատվության միջոցների հստակություն
- Համաչափության սկզբունքի պահպանմամբ սանկցիայի կիրառում
- Պատասխանատվության միջոցի բողոքարկում վերադաս դատական աստյան

Բավարար չէ օրենսդրական նորմով սուկ նախատեսել խախտման տեսակը, կարգապահական խախտումը պետք է նաև հստակ լինի և վրա հասնող հետևանքները պետք է պարզ ու հասկանալի լինեն: Անդրադառնալով դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ Վրաստանի ներպետական կարգավորումներին՝ Հանձնաժողովը արտահայտել է նույն կարծիքը, գտնելով, որ սահմանված տեսակները պետք է հստակ լինեն: Օրինակ, “գործի քննության ընթացքում օրենքի կոպիտ խախտում կամ կրկնվող խախտում” սահմանելը բավարար հստակ չէ¹⁹¹:

Կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմինները

Կարգապահական վարույթները դատավորների նկատմամբ հարուցվում են այն դեպքում, երբ վերջիններս թերանում են իրենց գործառույթներն արդյունավետ կատարել: Նման վարույթները պետք է անկախ մարմնի կողմից իրականացվեն կամ դատարանի կողմից, որը կպահպանի արդար դատաքննության չափանիշները և հնարավորություն կտա վիճարկել կայացված որոշումն ու պատասխանատվության միջոցը: Ընտրված կարգապահական պատասխանատվության միջոցները պետք է համապատասխանեն համաչափության սկզբունքին:

Ընդհանուր մոտեցման համաձայն պատասխանատվության ենթարկելու իրավասությունը պետք է տրվի հատուկ մարմնի, որը կունենա բողոքները լսելու և քննելու լիազորություն: Որոշումը յուրաքանչյուր դեպքում պետք է կայացվի անկախ մարմնի կողմից: *Կիևյան սկզբունքների համաձայն՝* պետք է գոյություն ունենա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող հատուկ անկախ մարմին (դատարան, հանձնաժողով կամ խորհուրդ) (տես 9-րդ պարբերությունը): *Դատավորների կարգապահությանն առնչվող խնդիրներով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք ունենան:* Ավելին, դրանց կազմում չպետք է լինեն այնպիսի անդամներ, ովքեր օժտված կլինեն կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ¹⁹²: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր հերթին ընդունել է, որ այն դեպքում, երբ դատարանի անդամների առնվազն կեսը դատավորներ են, ներառյալ նախագահողը, ով ունի վճռորոշ ձայնի իրավունք, ապա նման իրավիճակը անկողմնակալության լուրջ գործոն է: Հատկապես կարգապահական վարույթների գործերով կազմի էական մասը պետք է լինեն դատավորներ¹⁹³:

¹⁹¹ European Commission For Democracy Through Law (Venice Commission), Cdl(2007)020

¹⁹² Ibid 35

¹⁹³ ECHR, Oleksandr Volkov v. Ukraine, 09.01.2013

International Association Of Judges, The Universal Charter Of The Judge



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նմանատիպ մոտեցում արտահայտվել է նաև Դատավորների Եվրոպական ասոցացիայի կողմից: Այսպես, վերջինս սահմանել է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելը պետք է իրականացվի այնպիսի մարմնի կողմից, որի կազմում կան դատական իշխանության ներկայացուցիչներ և որը կգործի սահմանված ընթացակարգային կանոններին համապատասխան¹⁹⁴:

Առանձնակի ուշադրություն է դարձվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում գործադիր իշխանության ներգրավվածությանը: Վենետիկյան հանձնաժողովի դիրքորոշմամբ՝ կարգապահական պատասխանատվության գործընթացում արդարադատության նախարարի ներգրավվածությունը խնդրահարույց չէ, *եթե այդ գործընթացում կան այլ դերակատարներ* *ևս*¹⁹⁵: Հանձնաժողովը արդարադատության նախարարի մասնակցության համար պարտադիր կարևորում է երկու պայմանի ապահովում՝ արդյոք նման մասնակցությունը երաշխավորում է դատարանների անկախության սկզբունքը և իշխանությունների բաժանման սկզբունքը¹⁹⁶:

Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ *դատական խորհուրդները դատավորների անկախության ապահովման, միննույն ժամանակ նրանց հաշվետվողականության ապահովման մեխանիզմներն են*: Ըստ այդմ, նման խորհուրդները արժեքավոր պոտենցիալ ունեն դատավորներին պաշտոնի նշանակման, պաշտոնից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերում: Հանձնաժողովը նույնպես նշում է, որ մարմինը, որը նախաձեռնում է կարգապահական վարույթը չպետք է նաև որոշում կայացնի կարգապահական պատասխանատվության մասին: Այս ընթացակարգին բավարարելու համար պարտադիր չէ ստեղծել տարբեր մարմիններ, հնարավոր է մեկ մարմնի ներսում ձևավորել տարբեր գործառույթներով ստորաբաժանումներ: Այս մոտեցումը ամրագրված է նաև ԵԱՀԿ Կիևյան հանձնարարականում: Մասնավորապես, կորպորատիվ վերաբերյալ հնչեցվող մեղադրանքները բացառելու և կարգապահական արդար ընթացակարգ երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի դատական խորհուրդները միաժամանակ օժտված չլինեն հետևյալ երկու իրավասություններով. ա) բողոքների ստացում և կարգապահական քննության անցկացում, և բ) գործի քննություն և կարգապահական տույժի վերաբերյալ որոշման կայացում: Կարգապահական որոշումները պետք է ենթակա լինեն իրավասու դատարանի կողմից վերաքննության կարգով հսկողության (տես նաև 9-րդ, 14-րդ, 25- 26-րդ պարբերությունները)¹⁹⁷: Վենետիկի հանձնաժողովը, հղում կատարելով ՄԱԿ-ի դատավորների անկախության վերաբերյալ հիմնարար սկզբունքներին, նշում է, որ կարգապահական վարույթները **նախնական փուլում պետք է գաղտնի լինեն**, եթե դատավորի կողմից հակառակի պահանջը չկա: Վենետիկյան հանձնաժողովը սահմանում է նաև, որ վարույթները ընդհանուր առմամբ պետք է բաց լինեն, և միայն դատավորի խնդրանքով փակ անցկացվեն՝ օրենքով սահմանված կարգով:

¹⁹⁴ Judges' Charter in Europe (European Association of Judges) (1997)
¹⁹⁵ Opinion No905/2017, on the former Yugoslav Republic of Macedonia
¹⁹⁶ Opinion no 783/2014, CDL 2014.053
¹⁹⁷ Ibid 35



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հրապարակայնությունը կարգապահական վարույթի հետագա փուլերում նույնպես պետք է ապահովվի¹⁹⁸:

Կարգապահական վարույթների վերաբերյալ Կիևյան հանձնարարականը պահանջում է, որ դատավորների գործերով կարգապահական լուսմները անցկացվեն թափանցիկության պայմաններում: Դրանք պետք է լինեն դռնբաց, բացառությամբ, երբ մեղադրվող դատավորը միջնորդություն է ներկայացնում լուսմը դռնփակ անցկացնելու մասին: Այդ պարագայում միջնորդության հիմնավորված լինելու հարցը որոշում է դատարանը:

Դատավորի կարգապահության վերաբերյալ որոշումները պետք է **պատճառաբանված** լինեն: Կարգապահական տույժերի վերաբերյալ վերջնական որոշումները պետք է **հրապարակվեն**: Դատավորների կարգապահական պատասխանատվության գործերով թափանցիկությունը պետք է կանոն լինի: Ըստ այդմ, խորհուրդ է տրվում, որ լուսմները բաց լինեն, փակ հնարավոր է իրականացնել միայն բացառության կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և դատավորի դիմումի հիման վրա:

ԵԴԽԽ-ն ընդունել է, որ թափանցիկությունը կարևոր գործոն է անձանց կողմից դատական իշխանության նկատմամբ վստահությունը ապահովելու համար, ինչպես նաև դատարանները քաղաքական ճնշումներից պաշտպանելու գործում: Ինչի համար, օրինակ, ողջունելի է կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների հրապարակումը¹⁹⁹:

Որոշումը բողոքարկելու հնարավորությունները

Ընդունված կարգապահական որոշումների համար պետք է բողոքարկման հնարավորություն նախատեսել: Վենետիկի հանձնաժողովը այս առումով կարևորում է, որպեսզի բողոքարկման մարմինը օրենքով սահմանված լինի: Որոշումները պետք է այնպիսի մարմնի կողմից վերանայվեն, որը *անկախ է և ապահովում է դատական գործընթացների/արդար դատաքննության բոլոր երաշխիքները*²⁰⁰:

Վենետիկի հանձնաժողովը քննարկել է բացարկ հայտնելու անհրաժեշտության դեպքում դատավորի կողմից չհիմնավորված ձևով ինքնաբացարկ չհայտնելը կոպիտ կարգապահական խախտում դիտարկելու հարցը: Կանոնի համաձայն՝ բացարկ հայտնելու դեպքերը սահմանվում են օրենքով: Դատավորի կողմից ինքնաբացարկ չհայտնելու որոշումը կարող է կայացվել իր կողմից օրենքի մեկնաբանության հիման վրա: Հաշվի առնելով դատավորի գործառութային անկախությունը, վերջինս չպետք է նման դեպքերում կարգապահական պատասխանատվության ենթարկվի: Նմանապես, Վենետիկի հանձնաժողովը ողջունում է այն կարգավորումները, որոնք նախատեսում են բողոք

¹⁹⁸ CDL-AD(2014)032, Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate of Human Rights and the Rule of Law (DGI) of the Council of Europe, on the draft Law on making changes to the Law on disciplinary Liability and disciplinary Proceedings of Judges of General Courts of Georgia

¹⁹⁹ paragraph 91 of the CCJE Opinion no. 10

²⁰⁰ Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ներկայացրած անձի մասնակցությունը վարույթին: Սակայն պետք է նախատեսել նաև մասնակցության որոշակի ցուցանիշներ և տեղեկությունները տարածելու հետևանքները:

Դատավորը պետք է վարույթի նախնական փուլից տեղյակ լինի դրա մասին և հնարավորություն ունենա խորհրդատվություն ստանալ վարույթի բոլոր փուլերում²⁰¹:

Կարգապահական պատասխանատվության տեսակները

Խոսելով կարգապահական պատասխանատվության տեսակների մասին՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ միջոցների լայն ցանկ ունենալը նպաստում է համաչափության սկզբունքի իրագործմանը: Անթույլատրելի է բոլոր դեպքերում նույն միջոցի կիրառումը²⁰²: Բոլոր դեպքերում, ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն պատասխանատվության միջոցը որոշելիս պետք է պահպանվի համաչափության սկզբունքը²⁰³:

Հանձնաժողովը սահմանում է նաև, որ պատասխանատվության տարբեր միջոցները նախատեսելը ապահովում է համաչափության սկզբունքի կիրառումը: Մոլդովայի պարագայում, օրինակ, նախատեսված է եղել 4 տեսակի միջոց՝ նախազգուշացում, նկատողություն, աշխատավարձի կրճատում և պաշտոնից ազատում: Հանձնաժողովն առաջարկել է քննարկել նաև «պաշտոնի ժամանակավոր կասեցում» պատասխանատվության միջոցի հարցը, ինչպես նաև «դատավորի մոտ առկա գործերը վերցնել կամ դատավորին այլ գործառույթ տրամադրելը» որպես պատասխանատվության միջոց: Յուրաքանչյուր պարագայում պետք է ապահովվել համաչափության սկզբունքի կիրառումը:

Ինչ վերաբերում է աշխատավարձի կրճատմանը, ապա պետք է հիշել, որ դատավորների վարձատրությունը չպետք է կախված լինի միայն նրանց դրսևորած գործառույթներից: Հետևաբար, խորհուրդ է տրվում հստակեցնել, որ աշխատավարձի իջեցումը հնարավոր է կիրառել միայն ակնհայտ սխալների դեպքում, և ոչ այն դեպքերում, երբ խոսքը ավելի շատ վերաբերում է գործառույթների կատարմանը:

Խոսելով պաշտոնից հեռացման միջոցի մասին, նշվել է, որ այն լուրջ միջոց է և դրա հիմքերը պետք է հստակեցվեն, և պատասխանատվության նման միջոց սահմանվի միայն ամենալուրջ խախտումների կամ կրկնությունների դեպքում²⁰⁴:

Վրաստանում կարգապահական խախտման համար նախատեսված են պատասխանատվության հետևյալ միջոցները՝ նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, պաշտոնից ազատում,

²⁰¹ Joint Opinion Of The Venice Commission And The Directorate Of Human Rights (Dhr) Of The Directorate General Of Human Rights And Rule Of Law (Dgi) Of The Council Of Europe On The Draft Law On Making Changes To The Law On Disciplinary Liability And Disciplinary Proceedings Of Judges Of General Courts Of Georgia

²⁰² CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova

²⁰³ Consultative Council of European Judges (CCJE), CCJE (2002) Op. N° 3

²⁰⁴ Joint Opinion On The Draft Law On Disciplinary Liability Of Judges Of The Republic Of Moldova Adopted By The Venice Commission At Its 98th Plenary Session (Venice, 21-22 March 2014)



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

առաջխաղացման ցուցակից հեռացում, ինչպես նաև մասնավոր խորհրդատվական նամակի ներկայացում, պաշտոնից ազատում:

Պատասխանատվության միջոցը ընտրելիս հաշվի է առնվում կարգապահական խախտման ծավալն ու խստությունը, դրա հետևանքները կամ հնարավոր հետևանքները, մեղավորության աստիճանը, դատավորի անձը, բարոյական ու մասնագիտական հեղինակությունը:

Մինևույն ժամանակ Վրաստանի գերագույն դատարանը սահմանել է, որ միջոցը ընտրելիս էական դեր ունի խախտման ծանրությունն ու հետևանքները: Հնարավոր է կիրառել ամենախիստ պատասխանատվության միջոցը՝ հաշվի առնելով խախտման ծանրությունը, նույնիսկ եթե դատավորի մասնագիտական ու բարոյական հեղինակությունը կասկածի տակ չի դրվում: Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ նման կարգավորումների պարագայում համաչափության սկզբունքը չի պահպանվում: Ընդհանուր առմամբ պաշտոնից ազատումը, որպես ամենախիստ միջոց, համաձայն համաչափության սկզբունքի, պետք է կիրառվի միայն ծայրահեղ դեպքերում, և դա պետք է սահմանված լինի օրենքով:

Դատավորների կարգապահական պատասխանատվությունը ՀՀ-ում

Եթե ստեղծվում է մի ինստիտուտ, որ դատավորների համար մահակ է դառնում խիստ վտանգավոր է: Փորձագետ

Նախկինում ընդհանրապես չի գործել այս ինստիտուտը, եթե խորհուրդը գտնում էր, որ կոնկրետ անձի հետ հարց կա, ապա նույնիսկ չհիմնավորված ու չհաստատված պատճառներով դատավորին կարգապահական պատասխանատվության էին ենթարկում: Եղել են նաև բազմաթիվ դեպքեր, երբ դատավորները լուրջ խախտումներ են թույլ տվել, բայց պատասխանատվության չեն ենթարկվել: Փորձագետ

Կարգապահական պատասխանատվության առիթներն ու հիմքերը

Առիթները

Այսպես, Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածով նախատեսված են կարգապահական վարույթ հարուցելու առիթները: Որպես այդպիսիք են դիտարկվում՝

- 1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը,
- 2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները,
- 3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Ընդ որում, վարույթ հարուցող մարմինը, մինչև կարգապահական վարույթի հարուցման հարցի լուծումն իրավունք ունի հաղորդում ներկայացրած անձին առաջարկելու ներկայացնել կարգապահական վարույթ հարուցելու համար նշանակություն ունեցող տեղեկությունների վերաբերյալ նյութեր:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Այստեղ անհրաժեշտ է ապահովել, որ վարույթ հարուցող մարմինն տրված նման հնարավորությունը չօգտագործվի որպես դիմումները մերժելու առիթ, այլ օգտագործվի միայն խիստ անհրաժեշտ դեպքերում՝ ներկայացված փաստերը լրացնելու նպատակով:

2018 թվականի Դատական օրենսգրքի ընդունումից հետո 10 ամիսների ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթներ իրավասու մարմինների կողմից չեն հարուցվել, ըստ այդմ նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից չի կայացվել համապատասխան որոշում: Վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից դիմումներին ընթացք չտալն ու վարույթի հարուցումը մերժելը կարող է ունենալ տարբեր պատճառներ, ներառյալ նաև՝ վերը ներկայացված օրենսդրական դրույթի ոչ նպատակային կիրառումը պրակտիկայում:

Հիմքերը

*Դատական օրենսգրքում գրված հիմքերը բավարար հստակ են, խնդիրը՝ դրանց կիրառումն է, քանի որ դատական օրենսգրքը հստակ ամրագրել է, որ դատավորի մեկնաբանությունը օրենքի ինքնին չի կարող համարվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք: Խնդիրը կիրառման պրակտիկան է՝ նչ ենք հասկանում ակնհայտ կոպիտ խախտում ասելով և ԲԴԽ դա ոնց է մեկնաբանում: Դատավորների կարգապահական պատասխանատվության հարցում առանձնակի կարևորություն է ներկայացնում կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական հիմքերը:
Փորձագետ*

- Վերջիններս օրենսդրի կողմից սահմանվել են հետևյալ կերպ՝
- 1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը.
 - 2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.
 - 3) դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունը չկատարելը.
 - 4) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ միջամտության մասին Բարձրագույն դատական խորհրդին չհայտնելը:
- Ընդ որում, ըստ օրենսդրի՝ *ակնհայտ* համարվում է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով: Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրվում է դատական իշխանությունը: *Կոպիտ* է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրվում է դատական իշխանությանը: Արարքը համարվում է *դիտավորությամբ կատարված*, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Արարքը համարվում է *կոպիտ անփութությամբ* կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Էական կարգապահական խախտում է՝

1) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը կամ

2) դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Ներպետական օրենսդրությամբ նախատեսված հիմքերը և տրված բացատրությունները ողջունելի, սակայն բավարար չեն պրակտիկայում կարգապահական պատասխանատվության վարույթների օբյեկտիվությունն ապահովելու համար: Օրինակ, արարքը կարող է որակվել որպես դիտավորությամբ կատարված, եթե վարույթի ընթացքում հաստատվի, որ դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Վերջինս հաստատելը իրենում պարունակում է սուբյեկտիվ ընկալման որոշակի տարրեր, ինչը պրակտիկայում կարող է ենթարկվել տարաբնույթ վերլուծությունների ու բացատրությունների՝ ըստ այդմ կիրառվել ի վնաս դատավորի, կամ որոշակի անհրաժեշտ դեպքերում՝ ի վնաս կարգապահական պատասխանատվության ինստիտուտի բուն նպատակի: Նմանապես, նույն մեկնաբանության է ենթարկվում նաև օրենսգրքով սահմանված կոպիտ անփութության հիմքը, ինչը բացատրվում որպես դատավորի կողմից վարքագծի ոչ իրավաչափ բնույթի չգիտակցում, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Այս և նմանատիպ դրույթները բովանդակային առումով և մեկնաբանության հարցում բավականին լայն են, ավելին, կարող են դառնալ սուբյեկտիվ ընկալման առարկա, ինչից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել կարգապահական պատասխանատվության հիմքերի՝ պրակտիկայում կիրառման և մեկնաբանման ուղենիշներ և սկզբունքներ:

Ինչ վերաբերում է հարուցված կարգապահական վարույթի ընթացքին, ապա օրենսդիրը սահմանել է առավելագույն ժամկետները: Մասնավորապես, հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող վեց շաբաթից ավելի լինել²⁰⁵: Օրենսդրական ամրագրում են ստացել նաև վարույթի ընթացքում վարույթ հարուցող մարմնի իրավունքներն ու պարտականությունները:

Սահմանված ժամկետում, եթե առկա է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերից մեկը, ապա վարույթ հարուցող մարմինը որոշում է կայացնում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու մասին:

Հատկանշական է, որ դատավորը, ում վերաբերյալ հարցը քննարկվում է, այս փուլում արդեն օժտված է ընթացակարգային իրավունքներով: Մասնավորապես, կարգապահական պատասխանատվության

²⁰⁵ Նույն տեղում, հոդված 147



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշումը և կարգապահական վարույթի նյութերն ստանալու պահից երկու շաբաթվա ընթացքում դատավորն իրավունք ունի Բարձրագույն դատական խորհուրդ և վարույթ հարուցող մարմին ուղարկելու պատասխան՝ կցելով էլեկտրոնային կրիչը: Ավելին, Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարգելի ճանաչված պատճառների առկայության դեպքում դատավորի միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդը մինչև մեկշաբաթյա ժամկետով կարող է երկարաձգել պատասխան ներկայացնելու ժամկետը: Այն դեպքում, եթե դատավորը պատասխան չի ուղարկում, Խորհուրդը պատասխանատվության ենթարկելու հարցը շարունակում է առանց դատավորի պատասխանի: Դատավորին, ում նկատմամբ վարույթ է հարուցվում, այս փուլում երաշխիքներ տրամադրելը, դրական քայլ է:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասու մարմինները

Եվ առաջ և հիմա, հանձնաժողովը կորպորատիվ շահ է սպասարկում, դրա համար արդյունք չկա: Ես գիտեմ շատ փաստաբանների, որ անհիմն բողոքներ չէին գրում, լուրջ դեպքեր էին, բայց վարույթ չէր հարուցվում: Ու բոլորս միշտ նույնաբովանդակ պատասխան ենք ստացել, կոպիտ չի և այլն:
Փորձագետ

Մենք ունեցել ենք ակնհայտ անօրինական որոշումներ, դիմել ենք, բայց հանձնաժողովը մերժում է վարույթ հարուցել:
Փորձագետ

ԲԴԽ ձևավորումից հետո մոտ 10 դիմում եմ ուղարկել կարգապահական հանձնաժողով: Ուղարկել եմ նաև ԱՆ: Հանձնաժողովը բոլորը մերժել է ու չի հիմնավորում, թե ինչ հիմքով մերժեց, ինչու: Եթե ԱՆ-ն էջ գրությամբ է մերժում, հանձնաժողովը գոնե դա չի տալիս: Մեկ էջանոց մերժում ենք ստանում, հիմնավորվածություն չկա ընդհանրապես երկուսի դեպքում էլ:
Փորձագետ

Որպեսզի դատավորների կարգապահական պատասխանատվության հարցերն արդյունավետ ու արդար լինեն, կարգապահական հանձնաժողովի նկատմամբ վերահսկողություն պետք է սահմանվի: Օրինակ ԲԴԽի կողմից, գուցե ինչ-որ մեխանիզմներ ներդրվեն, որ վերահսկվի հանձնաժողովի գործունեությունը: Քանի որ ստացվում է, որ ԲԴԽ-ն որպես Սահմանադրական մարմին անգործության է մատնվում, հենց կարգապահականի պատճառով:
Փորձագետ

Եթե հարուցելու հարցում ԲԴԽին լիազորություն տանք, դա կլինի սարսափելի մի բան: Առանց այդ էլ ԲԴԽն նշանակում է, ընտրում է, տեղափոխում է դատավորներին, գնահատում է ու նման պայմաններում որևէ հակազդող միջոց չկա ու ստացվում է, որ ինքը անում է ամեն ինչ:
Փորձագետ



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորին կարգապահական պատասխանատվության հարցում կենտրոնական դերակատարում ունի Բարձրագույն դատական խորհուրդը: Սակայն մինչ ԲԴԽ կողմից կարգապահական խախտման վերաբերյալ որոշում կայացնելը, անհրաժեշտ է խախտման հարցով վարույթ հարուցել:

Օրենսդիրը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար դիտարկել է 2 իրավասու մարմիններ՝

- Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովը
- Արդարադատության նախարարը

Կարգապահական հանձնաժողովը հակասահմանադրական մարմին է, դատավորների ընդհանուր ժողովն ինքնին հակասահմանադրական մարմին է, ընդհանուր ինչպես այն ձևակերպված է դատական օրենսգրքում, այն սահմանադրությամբ նախատեսված մարմին չէ, և բնականաբար չի կարող ունենալ ենթահանձնաժողովներ, այդ թվում՝ նաև ուսումնական հանձնաժողով և այլն:
Փորձագետ

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությանը 2019 թվականի հունվարի 14-ին ուղարկված գրության համաձայն՝ **2018 թվականի հուլիսի 27-ից մինչև դեկտեմբերի 28-ն** ընկած ժամանակահատվածում Հանձնաժողով է ստացվել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարցուցելու վերաբերյալ թվով 130 հաղորդում, կարգապահական վարույթ է հարուցվել 14 հաղորդման հիման վրա, որոնցից 7-ը կարճվել է, 4-ը՝ գտնվում են քննարկման փուլում, իսկ 3-ով Հանձնաժողովը միջնորդություն է ներկայացրել Բարձրագույն դատական խորհրդին²⁰⁶:

Ինչպես արդեն ներկայացվել էր միջազգային չափանիշների բաժնում, գործադիր իշխանության ներգրավվածությունը կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի հարուցման փուլում խնդրահարույց չէ, եթե նման իրավասությամբ այլ մարմիններ ևս օժտված են և վարույթ հարուցող մարմինը վերջնական որոշում կայացնողը չէ:

Այս առումով, ներպետական կարգավորումները լիովին համապատասխանում են ընդունված մոտեցումներին, քանի որ վերջնական որոշում կայացնելու իրավասությունը տրված է Բարձրագույն դատական խորհրդին:

Կարգապահական պատասխանատվության այս փուլում կարևոր է պրակտիկայում վերը ներկայացված գործընթացների արդյունավետ կիրառումը՝ մասնավորապես, իրավասու մարմինների կողմից դիմումների ուսումնասիրությունն ու հիմքերի առկայության դեպքում կարգապահական վարույթ հարուցելը:

²⁰⁶ ԴԴ-Ե-131 14.01.2019թ., ՀՀ դատավորներ ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողով



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲԴԽ կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամկետներն ու ընթացքը

Օրենսդիրը սահմանել է ԲԴԽ կողմից կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման հստակ ժամկետ: Մասնավորապես, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը ԲԴԽ քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից մեկամսյա ժամկետում: Նախատեսված է նաև բացառություն, առ այն, որ բացառիկ դեպքերում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը մեկ ամսով, ինչի դեպքում, սակայն, խորհուրդը պետք է պատճառաբանված որոշում կայացնի:

Խորհրդում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն սկսվում է հարցի էության և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ, համապատասխանաբար ԱՆ կամ կարգապահական հանձնաժողովի ներկայացուցչի մասնակցությամբ, կախված նրանից, թե ով է վարույթը հարուցել: Կարգապահական վարույթի նյութերը ԲԴԽ ուղարկելուց հետո վարույթ հարուցած մարմնին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք բարելավում են դատավորի վիճակը կամ բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած մարմինը պարտավոր է այդ մասին հայտնել ԲԴԽ-ին:

Դատավորը, ում վերաբերյալ հարցը քննարկվում է, այս փուլում ևս օժտված է ընթացակարգային երաշխիքներով: Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունը Խորհրդի կողմից իրականացվում է միայն դատավորին լսելուց հետո²⁰⁷: Ավելին, դատավորը հնարավորություն ունի միջնորդել Խորհրդին՝ նիստին վկաներ հրավիրելու ու հարցաքննելու համար, ինչպես նաև փորձաքննություն նշանակել և պահանջել ապացույցներ: Դատավորը խորհրդում հարցի քննարկման փուլում օժտված է մի շարք այլ ընթացակարգային իրավունքներով, ինչը դրական է գնահատվում²⁰⁸: Հատկանշական է, սակայն, որ խորհրդի համար դատավորի միջնորդության հիման վրա նման գործողություններ կատարելը միայն իրավունք է, և ոչ թե պարտականություն:

Օրենսդրի կողմից ԲԴԽ-ում դատավորի կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման առնչությամբ նախատեսված է ևս մեկ երաշխիք: Հարցի քննությունը խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում:

²⁰⁷ Նույն տեղում, հոդված 151

²⁰⁸ Հոդված 153



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վարույթի թափանցիկությունը

Կարգապահական պատասխանատվության ամբողջ իմաստը կայանում է հենց նրանում, որ կարգապահեցնի դատավորներին: Եթե սելեկտիվ է դա իրականացվում, ուրեմն ԲԴԽ ինքնին խնդիրներ պետք է ունենա: Կառավարման ամբողջ գործընթացի տրամաբանությունը կայանում է նրանում, որ պրոցեսները հրապարակային են և հասանելի են հանրությանը, և եթե շատ սելեկտիվ մոտեցում ցուցաբերվի առանձին դատավորների նկատմամբ, դրա մասին հասարակություն տեղյակ է լինելու ու ԲԴԽ ստիպված կլինի ամեն անգամ արդարանալ: Նաև պետք է իրավական ու քաղաքական կուլտուրա ձևավորել, քանի որ ցանկացած իշխանություն էլ գայթակղությունից չի ազատվելու ինչքան էլ որ դեմոկրատական լինի, բայց սա ժամանակի խնդիր է: Կարևորը ինստուտուցիոնալ մեխանիզմների հիմքը ճիշտ դրվի, որ ամեն անգամ նոր իշխանության հետ միասին կարիք չառաջանա մեխանիզմները փոխելու, ինչը եղել է ցավոք մեզ մոտ ու միտում կա, որ դա նորից կկրկնվի:

Փորձագետ

Դատական օրենսգրքի 90 –րդ հոդվածը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս ԲԴԽ հանդես է գալիս որպես դատարան: Նույն հոդվածի համաձայն՝ որպես դատարան հանդես գալու դեպքում խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով, կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել:

Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող որոշումների: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները ենթակա են հրապարակման նույն կարգով՝ ապանձնավորած²⁰⁹:

Օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը կազմվում և դրա եզրափակիչ մասը հրապարակվում է Բարձրագույն դատական խորհրդի նիստում հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

2019 թվականի ապրիլի 20-ի դրությամբ կայքի Կարգապահական վարույթներ բաժնում տեղադրված է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ թվով 6 որոշում²¹⁰:

²⁰⁹ Դատական օրենսգրքի, Հոդված 94

²¹⁰ <http://court.am/index.php?link=arm/top/bdx/discdecision.htm>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական տույժերի տեսակները

Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է մեկ որոշում՝ կիրառելով պատասխանատվության մեկ միջոց: Եթե կարգապահական խախտման հիմքը պարբերաբար խախտումն է, ապա Բարձրագույն դատական խորհուրդը կիրառում է պատասխանատվության մեկ միջոց: Ներպետական օրենսդրությամբ նախատեսված են դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում.
- 2) նկատողություն.
- 3) խիստ նկատողություն.
- 4) էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում:

Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ: Անհասկանալի է, սակայն, այլ հանգամանքներ եզրույթի ներքո ինչ կարող են դիտարկվել խորհրդի անդամների կողմից: Յուրաքանչյուր դեպքում, երբ քննարկվում է դատավորին կարգապահական պատասխանատվության հարցն ու որոշվում տույժի տեսակը, անհրաժեշտ է սահմանել հնարավորինս հստակ հիմքեր ու չափանիշներ: Տույժի տեսակը որոշելիս խորհրդի անդամին լայն հայեցողություն տալը բարձրացնում է սուբյեկտիվ մոտեցման հավանականությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ընտրված տույժի և դատավորի կողմից թույլ տրված վարքագծի համաչափության վրա: Հետևաբար, օրենսդրի կողմից տույժի ընտրության հիմքում դրվող հանգամանքները ենթակա են լրացուցիչ հստակեցման՝ տույժի տեսակ ընտրելու տեսանկյունից չպատճառաբանված որոշումներից խուսափելու համար:

Նմանապես, սահմանված է, որ ԲԴԽ կողմից որոշում ընդունելիս դրա անդամների արտահայտած դիրքորոշումները հրապարակման ենթակա չեն²¹¹: Անդամներին նման իրավունք տալը վերջիններիս զերծ է պահում ցանկացած տեսակի ազդեցություններից և կաշկանդվածությունից: Մինևույն ժամանակ, սակայն, անդամները որևէ հաշվետվողականություն չեն կրում կայացված որոշման և դրա հիմքում իրենց կողմից արված հիմնավորումների ու դիրքորոշումների համար:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման բողոքարկման հնարավորությունները

Օրենսդրական մակարդակում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի հետ կապված թերևս ամենամեծ բացթողումն ու խնդիրը կապված է կայացված որոշման բողոքարկման մեխանիզմների հետ:

Այսպես, դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին ԲԴԽ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է: Կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորը կարող է դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման

²¹¹ Հոդված 154



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

վրա 212՝ յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այսինքն, կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի համար կայացված որոշման բողոքարկման միակ հնարավորությունը Սահմանադրական դատարանն է, ինչը անընդունելի է մի քանի պատճառներով:

Նախ, սահմանադրական դատարանը իրավասու է ուսումնասիրել նորմերի սահմանադրականության հարցը: Ավելին, ՀՀ Սահմանադրությունը Սահմանադրական դատարանին ԲԴԽ որոշումները վերանայելու իրավասություն չի տվել: Հետևաբար օրենսդիրը նախատեսել է ծայրահեղ նեղ հնարավորություն ունեցող մեխանիզմի հասանելիություն: Ըստ այդմ, խորհրդի կողմից կայացված կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը Սահմանադրական դատարանում վիճարկելը չի կարող համարվել վերանայման միջոց: Հետևաբար, Սահմանադրական դատարան դիմելը ԲԴԽ որոշումները վերանայող դատական ատյան, ինչը խնդրահարույց է և հակասում է ներկայացված միջազգային չափանիշներին:

Հատկանշական է, որ սույն մոտեցումն ու մտահոգությունը արտահայտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքում²¹³:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների հիմնական խնդիրը կապված է պատասխանատվության ենթարկելու հիմքերի ու կարգապահական տույժի տեսակների կիրառման չափանիշների անհստակությանն ու կայացված որոշման բողոքարկման մեխանիզմի բացակայությանը: Այս և նմանատիպ այլ հարցերը պետք է օրենսդրական բարեփոխման առարկա դառնան:

²¹² Հոդված 155

²¹³ Ibid 18



ԻՐԱԿՈՒԲԵՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատական իշխանության բյուջեի կառավարում և վերահսկողություն

Միջազգային չափանիշներ

Դատական իշխանության անկախության ապահովման նախապայմաններից է, որ դրա ինքնակառավարման մարմինը ներգրավված լինի դատական իշխանության և դրա մարմինների բյուջեի նախագծման, ինչպես նաև կառավարության և խորհրդարանի հետ գործընթացներում²¹⁴:

Դատարանների ֆինանսավորման (բյուջեի) և դատավորների անկախության միջև սերտ կապը հաստատվել է ԵԴԽՄ կողմից ընդունված Դատարանների ֆինանսավորման և ղեկավարման մասին թիվ 2 կարծիքով²¹⁵: Մասնավորապես, չնայած, որ դատարանների ֆինանսավորումը պետական բյուջեի մասն է, որը խորհրդարանին է ներկայացվում ֆինանսների նախարարության կողմից, դատարանների ֆինանսավորումը չպետք է կախված լինի քաղաքական տատանումներից: Անկախ նրանից, որ պետության կողմից դատարաններին հատկացվող ֆինանսավորումը քաղաքական որոշում է, անհրաժեշտ է ապահովել իշխանությունների բաժանումը՝ ի ապահովումն դատական բյուջեի ձևավորման գործընթացում դատական իշխանության վրա օրենսդիր կամ գործադիր իշխանությունների կողմից ցանկացած ճնշման բացառման: Դատարանների համար ֆինանսների հատկացման որոշումները պետք է ընդունվեն դատական իշխանության անկախության սկզբունքի նկատմամբ խստագույն հարգանքի հիման վրա²¹⁶:

ԵԴԽՄ-ն խրախուսում է բյուջեի ձևավորման հարցում դատարանների լայն ներգրավվածությունը, որպեսզի դատարանները ներկայացնեն իրենց դիրքորոշումն իրենց անհրաժեշտ ֆինանսների վերաբերյալ: Հետևաբար, ԵԴԽՄ հաստատել է, որ «կարևոր է, որ խորհրդարանի կողմից դատական իշխանության բյուջեն հաստատելու ընթացակարգերը ներառեն դատական իշխանության կարծիքը հաշվի առնելուն ուղղված գործընթացներ»²¹⁷:

Ըստ ԵԴԽՄ՝ դատական իշխանության ներգրավվածության ձև կարող է լինել դատական խորհրդին դատարանների ֆինանսավորման հայտերը կազմելու, դատարանների կարիքները գնահատելու հարցում համակարգող դերակատարման տրամադրումը՝ ուղիղ կապի մեջ դնելով դատական խորհրդին խորհրդարանի հետ: Ցանկալի է, որ դատական իշխանության ինքնակառավարման մարմինը իրավասություն ունենա բյուջետային հայտը ներկայացնել խորհրդարանին կամ դրա իրավասու հանձնաժողովներից մեկին²¹⁸: ԵԴԽՄ հատկապես շեշտում է դատարաններին բավարար ռեսուրսներով (այդ թվում՝ պրոֆեսիոնալ անձնակազմ և տեխնիկական հագեցվածություն) ապահովելու անհրաժեշտությունը՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի չափանիշներին համապատասխան գործունեություն իրականացնելու համար:

²¹⁴ Council of Europe, European Charter on the Statute of Judges, 1998, para. 1.8.

²¹⁵ CCJE, Opinion No 2(2001) on the Funding and Management of Courts.

²¹⁶ Ibid, para. 5.

²¹⁷ Ibid, para. 10:

²¹⁸ Ibid, para. 11:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵԴԽԽ թիվ 10 կարծիքով վերստին ընդգծվել է, որ դատարանները կարող են լինել իրապես անկախ, եթե նրանք ունեն առանձին բյուջե²¹⁹: Դատարանների ֆինանսավորման որոշումները պետք է կայացվեն դատական իշխանության անկախության սկզբունքի նկատմամբ հարգանքի խիստ պահպանմամբ: ԵԴԽԽ առաջարկում է պետություններին դատական խորհրդին օժտել ֆինանսական լիազորություններով: Նման ընդլայնված լիազորությունները ենթադրում են նաև խորհրդի հաշվետվողականությունը ոչ միայն գործադիր և օրենսդիր իշխանությունների, այլև դատարանների ու հանրության առջև²²⁰:

Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի՝ Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին թիվ (2010)12 հանձնարարականի համաձայն՝ դատական խորհուրդները կամ դատարանների ինքնակառավարման մարմինները պետք է ներգրավվեն դատական համակարգի բյուջեի կազմավորման գործընթացում:²²¹ Սա ենթադրում է, որ դատարանների կարիքներից բխող գնահատում կատարելու և տեղեկացված որոշում կայացնելու համար բյուջեն նախագծող մարմիններին աջակցելու համար դատական խորհուրդները կամ դատարանների կառավարմանը մասնակցելու գործառնությունով օժտված այլ անկախ մարմինները կարող են ներգրավվել դատարանների բյուջեի կազմման հարցում և դրա շուրջ խորհրդակցություններում²²²:

Դատական իշխանության բյուջեի հարցում դատական խորհուրդների դերն ընդգծվել է նաև Կիևյան առաջարկություններով²²³: Մասնավորապես, առանց կանխակալության դատական բյուջեի հայտն առաջարկելու կառավարության պարտականությունների և այն հաստատելու պաշտամենտի պարտականությունների հանդեպ՝ խորհուրդ է տրվում, որ դատական իշխանության շահերը ներկայացնող մարմինը, ինչպես օրինակ՝ դատական խորհուրդը, կառավարությանը ներկայացնի դատական իշխանության բյուջետային կարիքների վերաբերյալ հայտը՝ ապահովելով տեղեկացված որոշման կայացում: Դատական խորհուրդը պետք է մասնակցի և լավի բյուջեի ընդունման շուրջ խորհրդարանական քննարկումներին: Ավելին, առաջարկվում է, որ դատական խորհուրդն ունենա դերակատարում նաև դատական բյուջեի բաշխման հարցում²²⁴:

Դատական իշխանության բյուջեի կազմավորման հարցում դատական խորհրդի լիազորություններին անդրադարձել է նաև Վենետիկյան հանձնաժողովը իր տարբեր գեկույցներում և կարծիքներում: Հիմք ընդունելով ԵԴԽԽ կարծիքները՝ Վենետիկյան հանձնաժողովը դատական համակարգի անկախության մասին գեկույցում կարևորել է դատական իշխանության պատշաճ ֆինանսավորման անհրաժեշտությունը, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել դատարանների և դատավորների կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված չափանիշները, իրենց պարտավորությունների ամբողջական և արդյունավետ իրականացումը: Սա էական է դատական իշխանության և իրավունքի գերակայության նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու համար: Դատարանների պատշաճ ֆինանսավորումը պետության պարտավորությունն է: Նույնիսկ ճգնաժամային իրավիճակներում դատական իշխանության պատշաճ գործունեությունը և

²¹⁹ CCJE, Opinion No 10(2007) on Council for the Judiciary in the service of society.

²²⁰ Ibid, paras. 74-75:

²²¹ Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12, paras. 40.

²²² Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12, Explanatory Memorandum para. 45.

²²³ OSCE, ODIHR, Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe, South Caucasus and Central Asia, Kyiv, 23-25 June 2010.

²²⁴ Ibid, para. 6:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

անկախությունը չպետք է վտանգվեն: Դատարանների ֆինանսավորումը չպետք է պայմանավորված լինի պետական մարմինների հայեցողական որոշումներով, այլ պետք է իրականացվի օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների վրա: Ըստ Վենետիկյան հանձնաժողովի՝ դատարաններին ֆինանսներ հատկացնելու մասին որոշումները պետք է ընդունվեն դատական իշխանության անկախության սկզբունքի խստագույն պահպանմամբ, և դատական իշխանությունը պետք է հնարավորություն ունենա բյուջետային հայտի մասին իր կարծիքն արտահայտելու խորհրդարանին, գերադասելի է՝ դատական խորհրդի միջոցով²²⁵:

Ղազախստանի «Դատական համակարգի և դատավորի կարգավիճակի մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքում Վենետիկյան հանձնաժողովը փաստել է, որ ի ապահովումն դատական իշխանության ֆինանսների խորհուրդ է տրվում, որ դատական իշխանության կարծիքը հաշվի առնվի բյուջետային գործընթացներում²²⁶: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ներկայացնել դատական իշխանությունը և որոշակի ազդեցություն ունենալ դատական իշխանության կարիքներին առնչվող բյուջետային հարցերի վերաբերյալ կայացվող որոշումների վրա: Նման ազդեցությունը կարող է իրագործվել բյուջեի նախագիծ մշակելու կամ համապատասխան նախարարության կողմից պատրաստած բյուջեն վերանայելու միջոցով: Վենետիկյան հանձնաժողովի կողմից խորհուրդ է տրվել օրենքի նախագծում ավելացնել դրույթներ՝ բյուջետային գործընթացում ապահովելով Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները²²⁷: Սերբիայի Դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ կարծիքում Վենետիկյան հանձնաժողովն ընդգծել է դատական խորհրդի կողմից դատական իշխանության բյուջեի նախագծումը լրագործելու գերադասելիությունը²²⁸:

Դատական իշխանության բյուջեի ձևավորման, իրականացման և դրա նկատմամբ վերահսկողության տեսանկյունից գործող մոդելները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի:

Հյուսիսեվրոպական մոդելի պետություններում դատական խորհուրդը մեծ դերակատարում ունի դատական բյուջեի ձևավորման, իրականացման և վերահսկողության նկատմամբ:

Օրինակ, **Դանիայում**, Դատական խորհուրդը (Domstolsstyrelsen) բյուջեի կազմման լիազորությունը փոխանցում է դատարաններին: ԲԴԽ-ի կառավարիչների խորհուրդը կրում է վերջնական պատասխանատվություն բյուջեի կազմման գործընթացում: Կառավարիչների խորհուրդը իրավասու է դատական բյուջեի հայտի առաջարկով ուղղակիորեն դիմել խորհրդարանին, եթե գտնում է, որ հատկացումները բավարար չեն: Յուրաքանչյուր դատարանին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների

²²⁵ Venice Commission, Report on the Independence of the Judicial System, Part I: The Independence of Judges, CDL-AD(2010)004, paras. 52-55.

²²⁶ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է (հոդված 6, մաս 1):

²²⁷ Venice Commission, Joint Opinion on the constitutional law on the judicial system and status of judges of Kazakhstan, CDL-AD(2011)012, para. 25.

²²⁸ Venice Commission, Opinion on Draft Amendments to Laws on the Judiciary of Serbia, CDL-AD(2013)005, paras. 124-125: Ավելին, որպես դատական իշխանության անկախության լրացուցիչ երաշխիք՝ Վենետիկյան հանձնաժողովի կողմից առաջարկվել է սահմանել առանց ԲԴԽ-ի համաձայնության նախորդ տարվա համեմատությամբ հաջորդ տարվա դատարանների ծախսերը կրճատելու հնարավորության արգելք:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

բաշխումը կատարվում է ըստ դատարանի ծանրաբեռնվածության՝ դատարանում քննվող գործերի թվի հաշվարկով²²⁹, ինչպես նաև նախորդ տարիների բյուջեների համամասնությամբ:

Հարավսլոնացական մոդելի պետություններում դատական խորհուրդները բյուջետային գործընթացում ունեն շատ սահմանափակ կամ գրեթե ոչ մի լիազորություն: Օրինակ, Իտալիայում, դատարանների գործունեության և ընդհանրապես դատական իշխանության բյուջեն կառավարվում է արդարադատության նախարարության կողմից: Նույնը՝ նաև Ֆրանսիայում:

Այդուամենայնիվ, այն պետությունները, որտեղ դատական խորհուրդները նոր են ստեղծվում, դրանց օժտում են բյուջետային լիազորություններով: Օրինակ, Հունգարիայում գործում է Ազգային դատական խորհուրդ, որն ընտրվում է դատական իշխանության ներկայացուցիչների կողմից և Ազգային դատական գրասենյակ, որի նախագահն ընտրվում է խորհրդարանի կողմից: Դատական իշխանության բյուջեն կազմում է Հունգարիայի պետական բյուջեի առանձին տող և դրա կազմման հիմնական պատասխանատուն Ազգային դատական գրասենյակի նախագահն է, ով կազմում է բյուջեն կառավարությունից անկախ և ներկայացնում խորհրդարանին: Հաստատված բյուջեի բաշխումն իրականացվում է Ազգային դատական գրասենյակի նախագահի կողմից²³⁰:

ՀՀ ներպետական օրենսդրություն

ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատարանների և ԲԴԽ ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից՝ յուրաքանչյուր դատարանի և ԲԴԽ համար առանձին տողով: Դատարանների և ԲԴԽ ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվեն նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը²³¹:

Ըստ դատական օրենսգրքի՝ ԲԴԽ հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները, կառավարությանն է ներկայացնում իր և դատարանների բյուջետային հայտը պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար, հաստատում է իր և դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնում է կառավարությանը: Բարձրագույն դատական խորհրդին է վերապահված նաև բաշխել դատարանների պահուստային ֆոնդի միջոցները²³²:

Դատարանների և ԲԴԽ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և բյուջետային հայտի նախագիծը նախապատրաստում է դատական ղեկարտամենտը²³³, որի կենտրոնական մարմինը, դրանք ստանալով

²²⁹ European Commission/ENPI, Support to Justice Sector Reforms in Ukraine , Comparative Analysis on the High Councils for Judiciary in the EU Member States and Judicial Immunity, October 2015, p. 20.

²³⁰ Ibid, p. 21; Bancze M., Kovacs A., Zodi Z. The Quality of Justice in Hungary: Executive Summary, հասանելի է http://real.mtak.hu/74104/2/The%20quality%20of%20justice%20in%20Hungary_Executive%20summary.pdf

²³¹ Դատական օրենսգիրք, հոդված 38, 1-ին և 2-րդ մասեր:

²³² Դատական օրենսգիրք, հոդված 89, 1-ին մաս:

²³³ ԲԴԽ-ի կողմից իր լիազորությունները պատշաճ իրականացնելու համար ստեղծվել է ԲԴԽ աշխատակազմ՝ դատական ղեկարտամենտ: Դատական ղեկարտամենտն ապահովում է ԲԴԽ, դատարանների, դատավորների ընդհանուր ժողովի և դրա հանձնաժողովների գործունեությունը, ինչպես նաև քաղաքացիական, գանձապետական համակարգի, գնումների, ֆինանսատնտեսական և այլ գույքային իրավահարաբերություններին նշված մարմինների մասնակցությունը: Դեպարտամենտն ունի կենտրոնական մարմին, որն ապահովում է ԲԴԽ, Դատավորների ընդհանուր ժողովի և նրա հանձնաժողովների գործունեությունը, և առանձնացված ստորաբաժանումներ, որոնք հանդիսանում են դատարանների աշխատակազմերը և



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատարանների աշխատակազմերից, կազմում է դատարանների և ԲԴԽ միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ բյուջետային հայտի նախագիծը: Նախագիծը ներկայացվում է ԲԴԽ հաստատմանը: ԲԴԽ հաստատած բյուջետային հայտը կամ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ներկայացվում է կառավարությանը՝ ըստ բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված ժամկետների²³⁴:

Կառավարությունն ընդունում է բյուջետային հայտը և ընդգրկում այն պետական բյուջեի նախագծում: Եթե կառավարությունն ունենում է առարկություններ, բյուջետային հայտը նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով՝ Ազգային ժողովին և ԲԴԽ-ին ներկայացնելով բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումները: Ազգային ժողովում ԲԴԽ դիրքորոշումը բյուջետային հայտի կամ միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ ներկայացնում է ԲԴԽ նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ դատական դեպարտամենտի ղեկավարը²³⁵: Սահմանված ժամկետում պետական բյուջեն չհաստատելու դեպքում մինչև դրա հաստատումը ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Այսպես, ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ դատական իշխանության բյուջեի ձևավորման գործընթացում էական դերակատարում ունեն դատարանները և ԲԴԽ, ինչը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Ավելին, դատական իշխանության բյուջեն ոչ միայն կազմվում և ներկայացվում է կառավարությանը դատարանների և ԲԴԽ կողմից ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա, այլև ԲԴԽ իրավասու է ներկայացնելու իր դիրքորոշումը և անհրաժեշտ ծախսերի հիմնավորվածությունը Ազգային ժողովում տարեկան պետական բյուջեի քննարկման շրջանակներում, ինչը դրական զարգացում է, քանի որ ապահովում է դատական իշխանության ինքնակառավարման մարմնի ու խորհրդարանի միջև ուղիղ քննարկումների հնարավորությունը:

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ ԲԴԽ և դատարանների բյուջեների կազմման չափանիշները որոշակի չեն և ենթարկված չեն օրենսդրական կարգավորման: Արդյունքում անհասկանալի է, թե ինչ չափանիշների հիման վրա են ներկայացվում ԲԴԽ և դատարանների բյուջետային հայտը:

Այս առումով, դատական իշխանության մարմինների բյուջեի կազմման հստակ չափանիշների ամրագրումը, օրինակ՝ ըստ դատարաններում գործերի քննության համամասնության և դատարանի ծանրաբեռնվածության, դատարանների նյութատեխնիկական և շենքային պայմանների պահպանման և բարելավման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատման, բյուջետային հայտերի կազմումը հնարավորություն կտա բարելավել դատարանների գործունեության արդյունավետությունը և ապահովել դատական իշխանության ֆինանսական անկախությունը օրենսդիր և գործադիր մարմինների հայեցողությունից:

ապահովում են դատարանների գործունեությունը, տես ԲԴԽ, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական դեպարտամենտի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին որոշում, ԲԴԽ-25-Ո-58, 2018 թ:

²³⁴ Նույն տեղում, հոդված 38, 4-6-րդ մասեր:

²³⁵ Նույն տեղում, հոդված 38, 7-րդ մաս: Անհրաժեշտ է փաստել, որ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածը, որը վերաբերում է ազգային ժողովի նիստում պետական բյուջեի մասին օրենքի քննարկման կարգին, հստակ չի սահմանում ԲԴԽ դիրքորոշումը բյուջետային հայտի կամ միջնաժամկետ ծախսերի վերաբերյալ ներկայացնելու կարգը՝ չնայած այն հստակ ամրագրում է իրավասու պաշտոնատար անձանց էլոյթների հաջորդականությունը, դրանց տևողությունը և այլն:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատական իշխանության բյուջեի բաշխումը

Միջազգային չափանիշները

ԵԴԽԽ-ի թիվ 10-ի Կարծիքի համաձայն՝ դատական խորհուրդը պետք է լիազորություններ ունենա դատարանների միջև բյուջեի բաշխման հարցի շուրջ: Այնուամենայնիվ, ԵԴԽԽ ընդգծում է, որ դատական խորհուրդը չպետք է անհատ դատավորների գործունեության և կառավարման գործընթացին միջամտելու լիազորություն ունենա²³⁶:

Վենետիկյան հանձնաժողովը փաստել է, որ այնպիսի պրակտիկան, երբ Արդարադատության նախարարությունը փաստացի վերահսկում է դատարանների բյուջեների բոլոր մանրամասները, հակասում է դատական իշխանության բյուջետային անկախության սկզբունքին՝ դրանով դատավորների կողմից իրենց գործառույթների անկախ իրականացմանն անհարկի միջամտելու հնարավորություն ընձեռելով²³⁷:

Որոշ եվրոպական պետություններում դատարանի նախագահները դատարանների բյուջեի բաշխման հարցերում ունեն գործառույթներ: Օրինակ, նրանք վերլուծում են ողջամիտ ժամկետների, դատական ծանրաբեռնվածության վերաբերյալ խնդիրները և գնահատում հնարավոր խնդիրները լուծելու համար անհրաժեշտ ռեսուրսները, դրանց շուրջ բանակցություններ վարում բյուջեի բաշխման համար պատասխանատու կենտրոնական իշխանությունների հետ: Տարբեր դատարաններին ֆինանսական և մարդկային ռեսուրսների հատկացման գործընթացում կիրառվող չափանիշներն առանցքային են դատարանների նախագահների գործառույթի սահմանման համար: Նման գործառույթը, եթե ոչ որոշիչ, ապա պետք է նշանակալի լինի: Դատարանների նախագահները պետք է իրավասու լինեն կառավարելու իրենց դատարաններին հատկացված բյուջեն: Այս գործառույթի իրականացման համար դատարանի նախագահները պետք է ստանան մասնագիտացված օժանդակություն դատական ծառայող չհանդիսացող այլ մասնագետների կողմից²³⁸: Նման իրավասությունը պահանջում է նաև նախագահների հաշվետվողականությունը:

ՀՀ ներպետական օրենսդրություն

Ինչպես վերը նշվեց, ՀՀ դատական օրենսգրքի հիման վրա՝ ԲԴԽ լիազորված է հաստատել իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները, բաշխում դատարանների պահուստային ֆոնդի միջոցները²³⁹:

ԲԴԽ՝ որպես դատական իշխանության բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ, ըստ էության, տնօրինում է դատական իշխանության բյուջեն և դատարաններին բաշխում (տրամադրում) պետական բյուջեով նրանց համար սահմանված միջոցները:

Ըստ «Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ դատական ղեկավարամենտի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ԲԴԽ որոշման²⁴⁰ համաձայն՝ դատական

²³⁶ CCJE, Opinion No 10(2007), para. 77.

²³⁷ Venice Commission, Opinion on the Albanian law on the organisation of the judiciary (chapter VI of the Transitional Constitution of Albania), CDL(1995)074rev, p. 3.

²³⁸ CCJE, Opinion No 19(2016) on the Role of Court Presidents, paras. 32-33.

²³⁹ Դատական օրենսգրք, հոդված 89, 1-ին մաս:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ղեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչությունը իրականացնում է դատարանների բյուջեի բաշխման գործառույթներ: Մասնավորապես, նշյալ որոշման 42 կետի համաձայն՝ ֆինանսաբյուջետային վարչությունը կազմում է դատական ղեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումներին հատկացված բյուջետային միջոցների համամասնական բաշխման նախագիծը, գանձապետական հաշիվների միջոցով փոխանցում է առանձնացված ստորաբաժանումներին հատկացված գումարները, անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում դատական ղեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների պահպանման նախահաշվում փոփոխություն կատարելու մասին, եզրակացություն է տալիս դատարանների և ԲԴԽ պահուստային ֆոնդի միջոցները տնօրինելու վերաբերյալ: Դատական ղեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչությունն է պատասխանատու նաև բյուջեի կատարողականի վերլուծության համար և ապահովում է դատական ղեպարտամենտի կապը ՀՀ ֆինանսների նախարարության հետ²⁴¹:

Դատական օրենսգիրքը նախատեսում է դատական իշխանության չնախատեսված ծախսերը ֆինանսավորելու հնարավորություն, որի նպատակով բյուջեի առանձին տողով նախատեսվում է դատարանների և ԲԴԽ պահուստային ֆոնդ, որը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով դատական իշխանության մարմինների համար նախատեսված ծախսերի երկու տոկոսին: Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են ԲԴԽ որոշմամբ: Պահուստային ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում ԲԴԽ դիմում է կառավարությանը, որը, ի ապահովումն դատական իշխանության մարմինների բնականոն գործունեության, դատարանների և ԲԴԽ պահուստային ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում պակասը լրացնում է կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին²⁴²:

ՀՀ պրակտիկայի ուսումնասիրություն

2018թ. օգոստոսի 6-ին ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը հաստատել է ԲԴԽ և դատարանների 2019թ. բյուջետային հայտը և հանձնարարել է Դատական ղեպարտամենտին այն ներկայացնել կառավարությանը²⁴³: Սակայն ԲԴԽ պաշտոնական կայքէջում հրապարակված չեն ԲԴԽ և դատարանների բյուջետային հայտի մանրամասները, ինչը հնարավորություն չի տալիս համեմատել ներկայացված և ընդունված բյուջեների համապատասխանությունը: «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծով²⁴⁴ դատական իշխանության գործունեության ապահովման և իրականացման համար նախատեսվում է 12.380.667.600 ՀՀ դրամ, որը և հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:

²⁴⁰ ԲԴԽ, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի դատական ղեպարտամենտի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին որոշում, ԲԴԽ-25-Ո-58, 2018 թվական:

²⁴¹ Նույն տեղում, կետ 42:

²⁴² Դատական օրենսգիրք, հոդված 38, 10-11-րդ մասեր:

²⁴³ ԲԴԽ, Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2019 թվականի բյուջետային հայտը հաստատելու մասին որոշում, ԲԴԽ-31-Ո-76, 2018թ. <http://court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-31-%D5%88-76.pdf>

²⁴⁴ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/1230/about>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Միննույն է ամեն ինչ որոշելու են գործադիրն ու օրենսդիրը: ԲԴԽ կարող է նաև ԱԺ-ում ներկայացնել, ԱԺ կարող է գնահատել, որ ամեն դեպքում ԲԴԽ-ն է ճիշտ, այլ ոչ ֆինանսների նախարարությունը, և ԱԺ կարող է փոխել: Ամենայն հավանականությամբ կգնան կոմպրոմիսի: Տեսնենք՝ պրակտիկայում ինչ կլինի: Ամեն դեպքում ողջամիտ մեխանիզմ օրենքով կա, տեսնենք որքանով ողջամիտ կգործեն մարմինները:
Փորձագետ

ԲԴԽ կողմից հաստատվել են նաև Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2019 թվականի ծախսերի նախահաշիվները²⁴⁵: Այդուամենայնիվ, ինչպես և բյուջետային հայտի դեպքում, դատական իշխանության պաշտոնական կայքէջում ծախսերի նախահաշիվների մանրամասներն ամրագրող հավելվածները հրապարակված չեն, ինչը դատական իշխանության գործունեության թափանցիկության առնչությամբ խնդրահարույց է:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են նաև, որ պրակտիկայում դատական իշխանության ֆինանսավորումը բավարար չէ: Այս մասին հայտնել են հարցված բոլոր փորձագետները: Մասնավորապես, նրանց կողմից նշվել են դատարանների ֆինանսական և նյութատեխնիկական անբավարարության փաստեր, ընդհուպ՝ դատավորների աշխատակազմում թղթի, ներկի, ծրարների պակասի և տեխնիկական հագեցվածության այլ խնդիրներ: Ընդգծվել է ինչպես դատավորների, այնպես էլ դատարանների մասնագիտական կազմի աշխատավարձերի ցածր լինելը՝ իրականացվող գործառնությունների բնույթի և ծավալների առկա պայմաններում: Հետևաբար, դատական իշխանության բյուջեի ձևավորման չափանիշները թույլ կտան, որ այն կազմավորվի՝ հիմնվելով դատարանների և առանձին դատավորների աշխատակազմերի կարիքների արդյունավետ գնահատման արդյունքների վրա:

Երկու մակարդակ կա. համակարգային՝ դատական իշխանության բյուջեն, ու անհատական մակարդակ՝ աշխատավարձերը: Կառավարության հայեցողությունը, հատկապես աշխատավարձերի մասով, ոչ միայն դատավորների, այլև դատարանների մասնագիտական կազմի (դատավորի օգնականներ), պետք է սահմանափակվի:
Փորձագետ

2018թ. ապրիլից մինչև դեկտեմբեր²⁴⁶ ԲԴԽ կայացրել է ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից գումար հատկացնելու վերաբերյալ 5 որոշում, որոնք, մասնավորապես, ուղղված են եղել ԲԴԽ անդամ Հայկ Հովհաննիսյանի գործուղման ծախսերի փոխհատուցմանը (307 958 ՀՀ դրամ)²⁴⁷, դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինն իրեղեն ապացույցները տեղափոխելու համար ֆուրգոն տեսակի ավտոմեքենա ձեռք բերելուն (8 400 000 ՀՀ դրամի չափով)²⁴⁸, Արարատի և Վայոց Ձորի մարզերի

²⁴⁵ ԲԴԽ, Հայաստանի Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2019 թվականի ծախսերի նախահաշիվները հաստատելու մասին որոշում, ԲԴԽ-3-Ո-14, 2019թ. <http://www.court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-3-%D5%88-14.pdf>

²⁴⁶ Տեղեկատվությունը ճիշտ է 2018թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ:

²⁴⁷ <http://court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-11-%D5%88-17.pdf>

²⁴⁸ <http://court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-16-%D5%88-32.pdf>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի Վայքի նստավայրի տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին 3 772 300 ՀՀ դրամ գումար հատկացնելուն²⁴⁹, մատուցված և մինչև տարեվերջ նախատեսված թարգմանչական ծառայությունների մատուցման դիմաց վճարումներ կատարելու նպատակով Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին 20 000 000 միլիոն ՀՀ դրամ գումար հատկացնելուն²⁵⁰, ինչպես նաև ընդհանուր առմամբ 116 607 791 ՀՀ դրամ, որի թվում՝ թվով 55 հատ սկաներներ համակարգիչներ (յուրաքանչյուրը՝ 37800 ՀՀ դրամ), 100 հատ լազերային տպիչներ (յուրաքանչյուրը՝ 99600 ՀՀ դրամ), 22 հատ բազմաֆունկցիոնալ լազերային սարքեր (յուրաքանչյուրը՝ 386484 ՀՀ դրամ), 24 հատ անխափան սնուցման աղբյուրներ (յուրաքանչյուրը՝ 285709 ՀՀ դրամ), 10 հատ ձայնագրատման համակարգեր (յուրաքանչյուրը՝ 2085000 ՀՀ դրամ), 2 հատ համակարգչային սերվերներ (յուրաքանչյուրը՝ 3960000 ՀՀ դրամ), 50 հատ սեղանի համակարգիչներ (յուրաքանչյուրը՝ 446400 ՀՀ դրամ), Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի նստավայրի կոյուղաջրերը հեռացնելու նպատակով 2 կոյուղու պոմպեր (յուրաքանչյուրը՝ 330000 ՀՀ դրամ), ԲԴԽ վարչական և դատական դեպարտամենտի վարչական շենքերում ցուցանակներ (ընդհանուր՝ 554000 ՀՀ դրամ), ծաղկային կոմպոզիցիաներ (700000 ՀՀ դրամ), ինչպես նաև փոստային ծառայություններ ձեռք բերելու նպատակով (ընդհանուր 29 500 000 ՀՀ դրամ)²⁵¹:

Անհրաժեշտ է նկատել, սակայն, որ ԲԴԽ կողմից դատական իշխանության բյուջեի պահուստային ֆոնդից գումարներ հատկացնելու վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը թափանցիկ չէ, և հրապարակված որոշումները հիմնավորված չեն, չեն ներկայացվում ֆինանսների տրամադրման անհրաժեշտության գնահատման պատճառաբանությունները և այլն: Օրինակ, ԲԴԽ-54-Ո-158 որոշմամբ 29 500 000 ՀՀ դրամ է վճարվել փոստային ծառայություններ ձեռք բերելու նպատակով՝ առանց որևէ նշումի, թե ի՞նչ ժամանակահատվածի համար (արդյո՞ք չկատարված պարտավորություն է), ո՞ր կազմակերպության հետ է կնքվել պայմանագիր և ի՞նչ հիմնավորմամբ է փոստային ծառայություններ ձեռք բերելը գնահատվել որպես չնախատեսված ծախս և վճարվել պահուստային ֆոնդի գումարներից:

Այսպիսով, դատարանների ու ԲԴԽ բնականոն գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ է հստակեցնել բյուջետային հայտի կազմման չափանիշները, գնահատել դատարանների և անհատ դատավորների աշխատակազմերի իրական կարիքները՝ ապահովելով ինչպես նյութատեխնիկական անհրաժեշտ բազայով, այնպես էլ դատարանի և ԲԴԽ արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ այլ պայմաններով՝ ի ապահովումն միջազգային չափանիշներին համարժեք արդարադատության իրականացման: Ապահովել ԲԴԽ կողմից դատական իշխանության բյուջեի վերաբերյալ փաստաթղթերի հրապարակայնությունը: Ապահովել ԲԴԽ կողմից պահուստային ֆոնդի գումարների բաշխման գործընթացի թափանցիկությունն ու որոշումների հիմնավորվածությունը ապահովող օրենսդրական երաշխիքներ:

²⁴⁹ <http://court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-34-%D5%88-90.pdf>
²⁵⁰ <http://court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-49-%D5%88-137.pdf>
²⁵¹ <http://court.am/arm/top/bdx/decisions/ԲԴԽ-54-Ո-158.pdf>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատարանների կառավարումը

Միջազգային չափանիշներ

Դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությունը պահանջում է, որ դատական իշխանությունը հնարավորություն ունենա առանց արտաքին ազդեցության իրականացնելու իր կառավարումը և իր վարչարարության վերաբերյալ որոշումներ կայացնի²⁵²: ԵԴԽԽ փաստել է, որ ի լրումն առանձին բյուջեի՝ դատարանների անկախությունը իրատեսական է, եթե դրանք ղեկավարվում են գործադիրից և օրենսդիրից անկախ մարմնի կողմից՝ անկախ նրանից դա դատական խորհուրդ է, թե այլ անկախ մարմին²⁵³:

Եվրոպայի Խորհրդի պետություններում դատական անկախության և անկողմնակալության մասին 2017 թվականի ԵԴԽԽ զեկույցի²⁵⁴ արդյունքները փաստում են, որ չնայած ինքնակառավարման մարմինների ստեղծման՝ որոշ եվրոպական պետություններում արդարադատության նախարարն ունի որոշակի ազդեցություն դատարանների կառավարման գործում: Ըստ ԵԴԽԽ՝ սա խնդրահարույց է հավասարության և իշխանությունների բաժանման սկզբունքի տեսանկյունից: Գործադիր իշխանության պաշտոնյաների ներկայությունը դատարանների ղեկավարման մարմիններում պետք է բացառվի, քանի որ նման ներկայությունը կարող է հանգեցնել դատական գործառույթների նկատմամբ միջամտության, ինչը վտանգում է դատական անկախությունը²⁵⁵:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 հանձնարարականի համաձայն՝ դատարանների ղեկավարումը պետք է օժանդակի բարձրացնելու դատավորների աշխատանքի արդյունավետությունը և պահպանի նրանց անկախությունն ու անկողմնակալությունը: Սա չի սահմանափակում աշխատանքային ընդհանուր մեթոդների ներդրման հնարավորությունը, որոնք անհրաժեշտ են դատական պարտավորություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Այս նպատակով կազմված ուղեցույցներն ու չափանիշները պետք է հաստատվեն դատավորների կամ դատական իշխանության ինքնակառավարման մարմնի կողմից, որպեսզի ապահովվի աշխատանքային կանոնների արդյունավետությունը և դատական անկախությունը: Դատարանների կառավարման համար պատասխանատու մարմինները պետք է իրականացնեն բացառապես կառավարման գործառույթներ, և ոչ երբեք դատական գործառույթներ²⁵⁶:

Վենետիկի հանձնաժողովը, քննարկելով Սոնտենեգրոյի «Դատարանների և դատավորների իրավունքների և պարտականությունների մասին» օրենքի, ինչպես նաև «Դատական խորհրդի մասին»

²⁵² OHCHR, Human Rights in the Administration of Justice: Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers, Professional Training Series No. 9, New York/Geneva, 2003, pp. 120-122.

²⁵³ CCJE, Opinion No 10(2007) on Council for the Judiciary in the service of society, paras. 74-75:

²⁵⁴ CCJE, Report on judicial independence and impartiality in the Council of Europe member States in 2017, CCJE(2017)5Prov5, 3 November 2017.

²⁵⁵ Ibid, p. 8; CCJE, Opinion No 19(2016) of the Role of Court Presidents; CCJE Opinion No 18(2015) on the position of the judiciary and its relation with the other powers of state in a modern democracy paras. 48-49.

²⁵⁶ Committee of Ministers, Recommendation CM/Rec(2010)12 and Explanatory Memorandum, para. 46.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

օրենքի նախագծերը, մատնանշել է, որ դրանք հնարավորություն են տալիս կառավարությանը միջամտել դատարանների կառավարմանն ու գործունեությանը: Մասնավորապես, օրենքի նախագծի համաձայն՝ դատարանների ներքին գործունեության կազմակերպումը և կարգը պետք է իրականացվի դատարանների ընթացակարգային կանոնների համաձայն, որը հաստատում է Արդարադատության նախարարությունը Դատական Խորհրդի կարծիքն ստանալուց հետո: Ավելին, դատարանների ներքին կառավարման և պաշտոնի նկարագրերի վերաբերյալ փաստաթուղթը դատարանի նախագահի կողմից ընդունվելուց հետո ենթակա է կառավարության հաստատմանը: Ելնելով դատական իշխանության արտաքին անկախության լիարժեք պաշտպանության և իշխանությունների բաժանման ապահովման անհրաժեշտությունից՝ Վենետիկյան հանձնաժողովն առաջարկել է սահմանափակել կառավարության միջամտության հնարավորությունները²⁵⁷:

Դատական իշխանության և գործադիր իշխանության փոխազդեցության խնդիրները կարող են առաջանալ այն դեպքերում, երբ աուդիտի կամ ֆինանսական վերահսկողության լիազորություններ ունեցող կառույցներն իրավասու են դատարաններում ստուգումներ նշանակել: ԵԴԽԽ գտնում է, որ արտաքին ստուգողների կողմից ուսումնասիրությունը կարող է օժանդակել բացահայտելու դատական իշխանության մարմիններում առկա բացթողումները, սակայն էական է, որ ստուգումներ իրականացնող անձանց գործողությունները երբեք չմիջամտեն **դատարանների կողմից արդարադատության իրականացման գործառնություն**: Ավելին, դատական իշխանության մասին տեղեկություններ ունենալու կամ ստուգումներ իրականացնելու իրավասությունը բոլոր դեպքերում պետք է իրականացվի՝ դատական իշխանության անկախության և օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ստուգումների գաղտնիության պահպանմամբ²⁵⁸: Հետևաբար, դատական խորհուրդը պետք է հսկողություն իրականացնի տեսչական ծառայության կազմակերպման նկատմամբ, որպեսզի այն համապատասխանի դատական անկախության սկզբունքին: Սա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ տեսչական ծառայությունը գործադիր իշխանության ներքո են²⁵⁹:

Օրինակ՝ Վենետիկի հանձնաժողովը, գնահատելով Բուլղարիայի տեսչական մարմնի լիազորությունը՝ ուսումնասիրելու դատարանների, դատախազների ինչպես նաև անհատ դատավորների ու դատախազների գործունեության բոլոր ոլորտները, ինչպիսիք են ներքին ղեկավարումն ու աշխատանքային պայմանները, դատական պրակտիկան, դատավորների ֆինանսական վիճակը, նրանց ունեցվածքը, ինչպես նաև մասնավոր կյանքում վարքագիծը²⁶⁰, գտել է, որ տեսչական մարմնի լիազորությունների նման ծավալը կարող է վտանգ ստեղծել դատական իշխանության անկախության համար²⁶¹:

²⁵⁷ Venice Commission, Draft Opinion on the draft Laws on Courts and on Rights and Duties of Judges and on the Judicial Council of Montenegro, CDL(2014)053-e, paras. 31-32.

²⁵⁸ CCJE, Opinion No 18(2015), paras. 48-49.

²⁵⁹ CCJE, Opinion No 10(2007), para. 79.

²⁶⁰ Venice Commission, Bulgaria - Opinion on the Judicial System Act, CDL-AD(2017)018, paras. 51-57.

²⁶¹ For more details, see *ibid*, paras. 58-74.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵԴԽԽ սահմանել է, որ արդարադատության որակի չափման առնչությամբ քաղաքականության մշակման համար կարևոր է, որ դատական խորհուրդը լիազորություն ունենա դատարաններից ստանալ վերաբերելի վիճակագրություն ու տեղեկատվություն²⁶²:

Դատական իշխանության իրավական և կազմակերպչական բարեփոխումների վերաբերյալ որոշումների կայացումը դատարանների անկախության տեսանկյունից խնդրահարույց չէ: Այնուամենայնիվ, ԵԴԽԽ սահմանել է, որ կարճ ժամանակահատվածում շատ փոփոխությունները հնարավորինս պետք է բացառվեն, առնվազն՝ արդարադատության իրականացման բնագավառում: Դատական համակարգի փոփոխությունների դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք իրականանան պատշաճ ֆինանսական, տեխնիկական և ընթացակարգային հենքի վրա և ապահովված լինեն բավարար մարդկային ռեսուրսներով: Հակառակ պայմաններում արդարադատության կայունությունը կարող է վտանգվել, և հանրության մոտ թյուր ընկալում ձևավորվել, որ առկա թերությունները դատական իշխանության թերացումներն են²⁶³:

ԵԴԽԽ թիվ 19 Կարծիքի համաձայն՝ տարբեր պետություններում դատարանների կառավարման հարցում դերակատարում ունեն դատարանների նախագահները: Որոշ պետություններում դատարանների նախագահներն ունեն ռազմավարական պլանավորման գործառույթ, մյուսներում՝ դատարանների նախագահներն ունեն դատարանի գործունեությունը, ներառյալ՝ անձնակազմի միջոցները, նյութական միջոցներն ու ենթակառուցվածքները կառավարելու պարտավորություն: ԵԴԽԽ կարևորում է, որպեսզի նման պայմաններում նրանք ունենան անհրաժեշտ լիազորություններ ու բավարար ռեսուրսներ իրենց գործառույթները արդյունավետորեն իրականացնելու համար²⁶⁴:

Դատարանների նախագահների լիազորությունը դատարանի աշխատակազմի կառավարման հարցում տարբերվում է ըստ պետությունների: Նրանք կարող են ներգրավված լինել աշխատակազմի (ոչ դատավորների) ընտրության և աշխատանքի տեղավորման, վարձատրության չափի սահմանման, տեղափոխությունների, կատարողականի գնահատման կարգապահական ու աշխատանքից ազատման հարցերում:

Այլ պետություններում դատարանի նախագահի լիազորությունները շատ սահմանափակ են, և կառավարմանը վերաբերող գործառույթներից շատերն իրականացվում են արտաքին մարմնի կամ անձի (մենեջերի) կողմից²⁶⁵:

Որոշ պետություններում, դատարանների նախագահներն ունեն նաև դատավորների միջև գործի բաշխման լիազորություն: Նման դեպքերում, ըստ ԵԴԽԽ-ի, դատական գործերը պետք է բաշխվեն՝ հիմնվելով նախատեսված օբյեկտիվ չափանիշների վրա: Դրանք չպետք է կոնկրետ դատավորի վարույթից հանվեն առանց պատշաճ հիմնավորումների, և դատավորի վարույթից գործը հանելու որոշումները պետք է կայացվեն միայն նախատեսված չափանիշների հիման վրա թափանցիկ գործընթացների արդյունքում²⁶⁶:

²⁶² CCJE, Opinion No 10(2007), para. 78.

²⁶³ CCJE, Report on judicial independence and impartiality in the Council of Europe member States in 2017, CCJE(2017)5Prov5, p. 8.

²⁶⁴ CCJE Opinion No 19(2016), paras. 25-27.

²⁶⁵ Ibid, para. 28. ԵԴԽԽ Կարծիք թիվ 19(2016), 28-րդ կետ:

²⁶⁶ Ibid, para. 21.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներպետական օրենսդրություն

ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ դատական իշխանության կառավարումը, ըստ էության կատարվում է ԲԴԽ կողմից: Մասնավորապես, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը լիազորված է կառավարության համաձայնությամբ ավելացնել առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատել իր կողմից ավելացված դատավորների թվակազմը, սահմանել առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքը, հաստատել դատավորների բաշխումն ու թվակազմը՝ ըստ նստավայրերի ու մասնագիտացման, սահմանել դատական կազմի բացակայող դատավորներին փոխարինելու կարգը, սահմանել գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության, դատավորի ծանրաբեռնվածությունը հաշվարկելու կարգը, ինչպես նաև դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները, լուծել դատավորին մեկ այլ դատարան գործուղելու հարցը և այլն²⁶⁷: Ինչպես վերը նշվեց, ԲԴԽ ունի կարևորագույն լիազորություն դատական բյուջեն կառավարելու հարցում:

Դատարանի կառավարման (վարչարարության) գործառույթներ ունենա նաև դատարանների նախագահները: Այսպես, դատարանի նախագահը լիազորված է ապահովել դատարանի բնականոն գործունեությունը, այդ թվում՝ վերահսկել դատարանի աշխատակազմի գործունեությունը, դատավորներին տրամադրել արձակուրդ, դատարանը ներկայացնել այլ մարմինների հետ հարաբերություններում, դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմել ԲԴԽ-ին, դատավորների ընդհանուր ժողովին ու դրա հանձնաժողովներին, ինչպես նաև իրականացնում է այլ լիազորություններ²⁶⁸: Առաջին ատյանի դատարանի նախագահը լիազորված է նաև հաստատել մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահությունների ժամանակացույցը²⁶⁹: Անհրաժեշտ է փաստել, որ դատարանների նախագահներն ի լրումն կառավարչական լիազորությունների իրականացնում են նաև դատավորի լիազորություններ: Դատարանների նստավայրերը և նստավայրերի սպասարկման տարածքները սահմանվում են ԲԴԽ կողմից համապատասխան դատարանի նախագահի առաջարկության հիման վրա²⁷⁰: Միաժամանակ, սակայն, դատարանների նախագահները չունեն լիազորություններ դատարանի բյուջեի ծախսման և կատարման առնչությամբ, ինչը կատարվում է ԲԴԽ աշխատակազմի դատական դեպարտամենտի կողմից:

Անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ հստակեցված չէ դատարանի աշխատակազմի նկատմամբ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակը, քանի որ մի կողմից դատարանի նախագահին լիազորություն է տրված ապահովել դատարանի բնականոն գործունեությունը, այդ թվում՝ վերահսկել դատարանի աշխատակազմի գործունեությունը, որը իր հերթին հանդիսանում է ԲԴԽ աշխատակազմի

²⁶⁷ Դատական օրենսգրք, հոդված 89:

²⁶⁸ Դատական օրենսգրք, հոդվածներ 32, 33:

²⁶⁹ Դատական օրենսգրք, հոդված 32, 3-րդ մաս:

²⁷⁰ Դատական օրենսգրք հոդված 22: Դատարանների՝ դատական օրենսգրքով չսահմանված նստավայրերն ու սպասարկման տարածքները, ինչպես նաև դատավորների՝ ըստ նստավայրերի ու մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատվել է ԲԴԽ-23-Ն-1 որոշմամբ, որում հրնթացս կատարվել են փոփոխություններ:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հանդիսացող դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումը, և դատական դեպարտամենտի ղեկավարն է լիազորված նշանակել առանձնացված ստորաբաժանումների դատական ծառայողներին, ինչպես նաև ԲԴԽ նախագահի կողմից չնշանակվող քաղաքացիական ծառայողներին, նրանց նկատմամբ կիրառել խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ²⁷¹: Ավելին, հստակեցված չեն նաև դատարանի նախագահի վերահսկողական լիազորությունները և հարաբերակցությունը Դատական դեպարտամենտի ղեկավարի հետ, քանի որ դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դատարանի նախագահը դիմում է ԲԴԽ-ին:

Ինչ վերաբերում է դատավորների միջև գործերի բաշխմանը, ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում են ըստ մասնագիտացման սկզբունքի և պատահական ընտրության:

ԲԴԽ կարող է սահմանել մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների բաշխման, վերաբաշխման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը²⁷²:

Դատավորների միջև գործերը բաշխվում և վերաբաշխվում են հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, որի շահագործման կարգը սահմանում է ԲԴԽ: Վերջինս ապահովում է համակարգչային ծրագրի մշակումը, կատարելագործումը, դրա գաղտնիությունն ու անվտանգությանն ապահովումը, գործարկումն ու սպասարկումը²⁷³: Ըստ դատական օրենսգրքի՝ դատարանում ստացված գործն անհապաղ մուտքագրվում է ծրագրում ու հավասարաչափ բաշխվում տվյալ դատարանի դատավորների միջև առանց հաշվի առնելու մուտքագրման հերթականությունը:

Այդուամենայնիվ, պրակտիկայում դատավորների անհատական ծանրաբեռնվածությունը չի համապատասխանում գործերի բաշխման չափանիշներին: Մասնավորապես, հարցված փորձագետներից շատերն ընդգծել են հենց գործերի բաշխման անհավասարությունն ու առանձին դատավորների գերծանրաբեռնվածությունը:

Գործերի բաշխումը հավասար չէ, մեկը շատ է ստանում, մյուսը՝ քիչ: Այս առումով բան չի փոխվել, մի քանի դատավորի հետ համեմատած 200-250 գործի տարբերություն կարելի է գտնել: Գործերի թիվը չի հավասարվում դատավորների միջև: Անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բաշխումը, այլև վարույթ ընդունելը, քանի որ դատավորներ կան մասնագիտացել են վերադարձնելու վրա, և իրենց վարույթում չնչին թվով գործեր են լինում:
Փորձագետ

Ֆինանսական ծախսերի ստուգումն ու հսկողությունն իրականացվում է Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի վարչության կողմից, որն ապահովում է դեպարտամենտի ներքին աուդիտը, հսկողություն է իրականացնում Դեպարտամենտի գույքի տնօրինման, նպատակային օգտագործման

²⁷¹ Դատական դեպարտամենտի աշխատակարգ, կետ 20.3:

²⁷² Դատական օրենսգրք, հոդված 40, 1-ին մաս:

²⁷³ Նույն տեղում, հոդված 41:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

նկատմամբ, հսկողություն է իրականացնում Դեպարտամենտի հաշվապահական հաշվառման նկատմամբ²⁷⁴: Դատական իշխանության բյուջեի՝ որպես պետական բյուջեի բաղկացուցիչ մասի կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ազգային ժողովը: Մասնավորապես, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, կառավարությունն Ազգայն ժողով տեղեկանք է ներկայացնում պետական բյուջեի, այդ թվում՝ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ, որը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի նիստում²⁷⁵: Իսկ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև դրա վերաբերյալ կենտրոնական բանկի կողմից Կառավարություն ներկայացրած պաշտոնական եզրակացությունը Ազգային ժողով է ներկայացվում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, Ազգային ժողովում քննարկվում և քվեարկության է դրվում մինչև հերթական նստաշրջանի ավարտը²⁷⁶:

Միաժամանակ, դատական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն (հաշվեքննություն) է իրականացնում ՀՀ հաշվեքննիչ պալատը, որի գործունեության նպատակը պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է²⁷⁷: Այն, մասնավորապես, Ազգային ժողովին ներկայացնում է պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն, օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ, ինչպես նաև իրավասու է ուսումնասիրել իր կողմից հաշվեքննվող մարմինների ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը²⁷⁸:

²⁷⁴ Դատական դեպարտամենտի աշխատակարգ,

²⁷⁵ Ազգային ժողովի կանոնակարգ օրենք, հոդված 114:

²⁷⁶ Նույն տեղում, հոդված 116:

²⁷⁷ Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենք, հոդված 5, 1-ին մաս:

²⁷⁸ Նույն տեղում, հոդված 5, 4-րդ մաս:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Իշխանության այլ մարմիններին կարծիքի տրամադրումը

Միջազգային չափանիշներ

Դատավորների կարգավիճակին վերաբերող բոլոր փաստաթղթերի նախագծերը, արդարադատության իրականացման, ընթացակարգային օրենսդրությանը և ավելի ընդհանրական, բոլոր օրենսդրական նախագծերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ դատական իշխանության գործունեության վրա, օրինակ՝ ազդել դատական իշխանության անկախության վրա կամ նվազեցնել անձի՝ արդարադատության հասանելիության երաշխիքները պետք է մինչև օրենսդիր մարմնի կողմից քննարկման դրվելը ստանան դատական խորհրդի կարծիքը: ԲԴԽ այս խորհրդատվական լիազորությունը պետք է ճանաչվի բոլոր պետությունների կողմից²⁷⁹:

Խորհրդի այս լիազորությունը պետք է հստակորեն սահմանվի օրենքով, որպեսզի ապահովվի դատական խորհրդի կողմից իր կարծիքը ներկայացնելու հնարավորությունը, նույնիսկ այն դեպքում, երբ այդ կարծիքը հակասում է այլ մարմինների տեսակետներին: Ցանկալի է, որ գործադիր կամ օրենսդիր մարմինները մինչև օրենսդրական նախագծերը պատրաստելը ստանան դատական խորհրդի կարծիքը, մոտեցումներն այդ հարցի առնչությամբ: Սա կապահովի, որպեսզի գործադիրն ու օրենսդիրը դատական իշխանությանը վերաբերող հարցերի առնչությամբ ունենան մասնագիտական կարծիք²⁸⁰:

ԵՄ անդամ գրեթե բոլոր պետություններում դատական իշխանությանը վերաբերող և ընթացակարգային օրենսդրության առնչությամբ դատական խորհուրդներն ունեն խորհրդատվական դեր (Բելգիայում, Բուլղարիայում, Խորվաթիայում՝ Արդարադատության նախարարի խնդրանքի հիման վրա, Ֆրանսիայում՝ նախագահի խնդրանքի հիման վրա, Դանիայում, Իսպանիայում Իտալիայում, Հունգարիայում, Լատվիայում, Լեհաստանում, Լիտվայում, Նիդերլանդներում, Պորտուգալիայում, Ռումինիայում, Սլովակիայում, Սլովենիայում): Իսպանիայում օրենսդրությունը սահմանում է հարցերի շրջանակը, որոնց ուղղությամբ դատական խորհրդի հետ խորհրդակցությունը պարտադիր է, օրինակ՝ դատական իշխանությանը վերաբերող օրենքի փոփոխությունների վերաբերյալ, ընթացակարգային կանոնների առնչությամբ:

Լատվիայում, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիր մարմինը կարող է չհամաձայնել դատական իշխանության հետ, սակայն պարտավոր է լսել վերջինիս կարծիքը: Սլովակիայում, ի լրումն խորհրդատվական ֆունկցիայի՝ դատական խորհրդի նախագահը արդարադատության իրականացմանը վերաբերող օրենսդրության սահմանադրականության որոշման համար Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունի²⁸¹:

²⁷⁹ CCJE, Opinion No 10(2007), para. 87.

²⁸⁰ ENCJ, Councils for the Judiciary Report 2010-2011, p. 12.

²⁸¹ European Commission/ENPI, Support to Justice Sector Reforms in Ukraine, Comparative Analysis on the High Councils for Judiciary in the EU Member States and Judicial Immunity, October 2015, pp. 22-23.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներպետական օրենսդրություն

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ ԲԴԽ իրավասու պետական մարմիններին առաջարկներ է ներկայացնում դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ, ինչպես նաև դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տալիս է կարծիք²⁸²:

ԲԴԽ այս լիազորությունը հնարավորություն է տալիս նախաձեռնել դատական իշխանությանը վերաբերող օրենսդրական և պրակտիկ խնդրահարույց հարցերին վերաբերող օրենսդրական առաջարկություններ, քննարկումներ, այդ թվում՝ հանրային, տալ մասնագիտական կարծիք ինչպես առկա կարգավորումները կատարելագործելու, բարելավելու ուղղությամբ, այնպես էլ պետական այլ մարմինների կողմից նախաձեռնված և դատական իշխանությանը վերաբերող հարցեր կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի և օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ:

Օրենսդրական նման կարգավորումը համապատասխանում է ուսումնասիրված միջազգային չափանիշներին:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ ԲԴԽ չունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, ինչն ըստ էության ողջամիտ է, քանի որ օրենսդրությամբ սահմանված են նման լիազորություն ունեցող մարմիններ և անձինք՝ կառավարությունը և պատգամավորը:

Ըստ հարցված փորձագետների կարծիքի՝ նորմատիվ իրավական ակտերը կատարելագործելու ուղղությամբ ԲԴԽ առաջարկությունները ինքնին բավարար են փոփոխություններ նախաձեռնելու համար:

*Կա կառավարությունը և կան պատգամավորներ: Ընդամենը մեկ անձ բավարար է նախագիծ բերելու համար, ինչը նշանակում է, որ դա պետք է անպայման քննարկվի հանձնաժողովներում, և պատգամավորի պնդման դեպքում դա կարող է հասնել նաև պլենար նիստ: Այսինքն, չեն կարող լինել այնպիսի հարցեր, որոնք լինեն շատ ակտուալ և երբևէ չհասնեն երկրի թիվ մեկ քաղաքական ամբիոն: Էդ առումով կարծում եմ, որ օրենսդրական նախաձեռնության իրավունք ԲԴԽ չպետք է ունենա:
Փորձագետ*

Անհրաժեշտ է ընդգծել ԲԴԽ կողմից ներկայացվող առաջարկությունների և կարծիքի դերն ու նշանակությունը՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը երաշխավորողի և մասնագիտացված մարմնի կարգավիճակը: Հետևաբար, ի ապահովումն մասնագիտական կարծիքի՝ անհրաժեշտ է պրակտիկայում երաշխավորել ԲԴԽ կարծիքի ստացումը նախագծի մշակման ամենավաղ փուլերում: Միաժամանակ, պրակտիկայում առկա են դեպքեր, երբ օրինագծի առնչությունը դատական

²⁸² Դատական օրենսգրք, հոդված 89, 1-ին մաս, կետեր 19-20:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Իշխանությանն անուղղակի է, որպիսի պայմաններում չի ապահովվում ԲԴԽ ներգրավվածությունը և կարծիքի տրամադրումը, ինչը խնդրահարույց է:

*ԲԴԽ կարծիքը օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ պետք է ունենա նույն արժեքը, ինչը բյուջետային հայտը: Եթե անգամ կառավարությունը դեմ է ԲԴԽ կողմից ներկայացված կարծիքին, այն պետք է կցվի ու ներկայացվի Ազգային ժողովին: Նույնը վերաբերում է նաև ԱԺ պատգամավորին: ԲԴԽ կարծիքը պետք է դառնա լայն քննարկման առարկա: Օրինակ, ԲԴԽ ներկայացրել է կարծիք դատավորների կենսաթոշակներին առնչվող նախագծի վերաբերյալ: Դա կարող է չընդունվի կառավարության կողմից, բայց պետք է ներկայացվի ազգային ժողովի քննարկմանը:
Փորձագետ*

Դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դատավորների իրազեկվածության, նրանց կողմից քննարկումներին մասնակցության ու կարծիքի տրամադրման հնարավորության ապահովման նպատակով նախագծերը պետք է հասանելի դառնան դատավորներին և դատական այլ ծառայողներին: Այս նպատակով ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ ԲԴԽ հաստատում է դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը, որը, սակայն, դեռևս չի հաստատվել:

Պրակտիկայի ուսումնասիրություն

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը իր գործունեության ընթացքում օրենսդրական նախաձեռնությունների մասին կարծիք է հրապարակել մեկ անգամ՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի շուրջ, որում, մասնավորապես, իր դիրքորոշումն է հայտնել օրենքով սահմանվող կենսաթոշակի չափը կառավարության սահմանած նվազագույն կենսաթոշակի տասնապատիկի չափով առավելագույն չափ սահմանելու մասին, ինչը վերաբերելի է լինելու նաև դատավորների նկատմամբ:

Մեջբերելով տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված իրավական փաստաթղթերի դրույթներ՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրել է, որ դատավորի կենսաթոշակը նրա սոցիալական անկախության կարևորագույն երաշխիքն է, որի թուլացումը մեծագույն վտանգ է դատավորի և դատական իշխանության անկախությանը: Ավելին, դատավորի կենսաթոշակի չափը՝ կախվածության մեջ դնելով գործադիր իշխանության կողմից հաստատվող նվազագույն հաշվարկային միավորից, վտանգվում է նաև իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը: ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասով պարզապես բացառվում է գործադիր իշխանության կողմից հիշյալ հարաբերությունների իրավական կարգավորումը «Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով»: Բարձրագույն դատական խորհուրդն անընդունելի է համարում համահարթեցման այն մոտեցումը, որը դրված է



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

նախագծի հիմքում և գտնում է, որ Վենետիկի հանձնաժողովի կողմից քննարկման, դատական իշխանության անկախության երաշխավորման տեսանկյունից այդպիսի առանցքային նշանակություն ունեցող նախագիծն անընդունելի է²⁸³:

²⁸³ ԲԴԽ, Դատավորի անկախությունն անհնարին է երաշխավորել առանց նրա սոցիալական անկախության երաշխավորման, 07.11.2018թ., <http://www.court.am/index.php?link=news/07-11-2018/07-11-2018.htm>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորների հեղինակության պաշտպանությունն ու խթանումը

Միջազգային չափանիշներ

Դատական խորհուրդը պետք է լիազորություն ունենա խթանելու դատական իշխանության հեղինակությունը²⁸⁴, հերքելու լրատվամիջոցների կամ այլ մարմինների կողմից դատավորների շուրջ ստեղծված թյուրընկալումները և իրազեկելու լայն հանրությանը արդարադատության իրականացման, իրավունքի գերակայության, քաղաքացիական ազատությունների և հանրային շահի պաշտպանության տեսանկյունից դատավորի դերի մասին՝ այդպիսով բարձրացնելով դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը²⁸⁵: ԵԴԽՄ ընդգծել է, որ դատական խորհուրդը պետք է իրավասու լինի ոչ միայն հրապարակայնացնել իր տեսակետները, այլև պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը հանրության, քաղաքական իշխանությունների և անհրաժեշտության դեպքում՝ դատարանների առջև՝ պաշտպանելու դատական մարմինների և դրա անդամների հեղինակությունը²⁸⁶: Անդրադառնալով լրատվամիջոցների կամ քաղաքական և հասարակական գործիչների կողմից լրատվամիջոցների միջոցով դատարանի կամ դատավորների հասցեին հնչեցրած քննադատությանը ԵԴԽՄ փաստել է, որ ցանկալի է, որ դատական խորհուրդը (կամ դատավորների միությունը) կարողանա և պատրաստ լինի համապատասխան դեպքերում արագ և արդյունավետ կերպով արձագանքել նման քննադատություններին և հարձակումներին²⁸⁷:

Ըստ ԵԴԽՄ թիվ 10 Կարծիքի՝ արդարադատության հեղինակության պաշտպանության և խթանման գործում դատական խորհրդի գործառույթի իրականացումը հաճախ պահանջում է հավասարակշռության ապահովում անձի, սոցիալական և քաղաքական դերակատարների, լրատվամիջոցների ազատությունների, անկախ և արդյունավետ դատական համակարգ ունենալու հանրային պահանջի միջև²⁸⁸: Այս նպատակի արդյունավետ իրականացման համար խորհուրդը պետք է մշակի և հրապարակի հանրության և տեղական համայնքների հետ դատական իշխանության հարաբերակցության ռազմավարություն և քաղաքականություն՝ ի ապահովումն դատական իշխանության և դրա գործառույթների նկատմամբ վստահության²⁸⁹:

²⁸⁴ CCJE, Opinion No 10(2007), para. 83.

²⁸⁵ ENCJ, Councils for the Judiciary Report 2010-2011, pp. 11-12.

²⁸⁶ CCJE, Opinion No 10 (2007), para. 83.

²⁸⁷ CCJE, Opinion No 7(2005), para. 55.

²⁸⁸ CCJE, Opinion No 10 (2007), para. 84.

²⁸⁹ Venice Commission, Report on the Independence of the Judicial System Part I: The Independence of Judges, CDL-AD(2010)004, para.

82(14), որի համաձայն՝ դատական գործընթացներն անհարկի ճնշումներից պաշտպանելու համար կարելի է հաշվի առնել «դատարանի հայեցողության կամ իրավասության» (“sub judice”) սկզբունքի կիրառումը, որը պետք է հստակորեն սահմանվի՝ ի ապահովումն հավասարակշռության դատական գործընթացի պաշտպանության և լրատվամիջոցների ազատության և հանրային կարևորության հարցերը բաց քննարկելու միջև:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներպետական օրենսդրություն

ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ ԲԴԽ քննարկում է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող ցանկացած հարց և իրավասու մարմիններից պահանջում է հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ²⁹⁰:

Ըստ ԲԴԽ կողմից ընդունված «Դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող հնարավոր դրսևորումները կանխելու մասին» որոշման²⁹¹՝ անթույլատրելի է դատավորի գործունեությանը որևէ միջամտություն, այդ թվում՝ կոնկրետ գործի քննության առնչությամբ հանրային իշխանության ցանկացած ներկայացուցչի հեռախոսային կամ այլ բնույթի հաղորդակցությունը գործը քննող դատավորի հետ կամ դատարանի նախագահի հետ, ինչպես նաև այդ առնչությամբ հրապարակային հայտարարություն անելը: Բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի՝ ցանկացած սուբյեկտի կողմից քննության առարկա գործի առնչությամբ դատավորից ընդհուպ տեղեկատվություն ստանալու փորձը համարվում է միջամտություն դատավորի գործունեությանը և դատարանի անկախությանը:

Ավելին, դատավորը պարտավոր է նման միջամտության փաստի մասին *անհապաղ գրավոր կարգով տեղյակ պահել ԲԴԽ-ին*, ինչի հիման վրա ԲԴԽ քննարկում է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող հարցը և իրավասու մարմիններից պահանջում հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ ենթադրյալ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմում է իրավասու մարմնին, որը պարտավոր է ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ անհապաղ գրավոր տեղեկացնել Բարձրագույն դատական խորհրդին²⁹²:

Այդուամենայնիվ, արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար անձանցից, այլև ֆիզիկական և իրավաբանական անձանցից, և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ²⁹³: Հետևաբար, դատավորի անկախությունը վտանգող հարցը չի կարող սահմանափակվել բացառապես հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից գործը քննող դատավորի կամ դատարանի նախագահի հետ հեռախոսային կամ այլ բնույթի հաղորդակցությամբ, ինչպես նաև հրապարակային հայտարարություն անելով, այլև կարող է դրսևորվել այլ անձանց և խմբերի կողմից միջամտություններով ևս:

Հիմք ընդունելով դատարանի անկախության և դատավորների հեղինակության ապահովման սկզբունքները՝ ԲԴԽ լիազորված է հաստատել զանգվածային լրատվության միջոցների հետ իր և դատարանների փոխհարաբերության կանոնները²⁹⁴:

2019թ. հունվարի 14-ին ԲԴԽ կողմից ընդունվել է «Զանգվածային լրատվության միջոցների հետ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու

²⁹⁰ Դատական օրենսգրք, հոդված 89, 1-ին մաս, կետ 18:

²⁹¹ ԲԴԽ, դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող հնարավոր դրսևորումները կանխելու մասին որոշում, ԲԽԴ-2-Ո-3, <http://www.court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-2-%D5%88-3.pdf>

²⁹² Դատական օրենսգրք, հոդված 7, 5-րդ մաս:

²⁹³ Դատական օրենսգրք, հոդված 7, 1-ին մաս:

²⁹⁴ Դատական օրենսգրք, հոդված 89, 1-ին մաս, կետ 22:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

մասին» որոշումը²⁹⁵, որի նպատակն է մասնավորապես «նպաստել արդար դատաքննության իրավունքի համատեքստում հրապարակայնության և տեղեկություններ ստանալու իրավունքի արդի խնդիրներին համահունչ պատշաճ իրավական մշակույթի ձևավորմանը»²⁹⁶:

Որոշումը որոշ կարգավորումներ է պարունակում դատավորների հեղինակության և այլ կերպ նրանց անկախության վրա ազդեցություն ունեցող զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, քննադատությունների և այլ միջամտությունների առնչությամբ ԲԴԽ հրապարակային և արդյունավետ արձագանքելու գործառույթի առնչությամբ:

Մասնավորապես, որոշման 7-րդ գլխի՝ նախատեսվում է **ԲԴԽ անդամների կամ դատավորների կարգապահական խախտման մասին** զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին արձագանքելու կարգը: Ըստ որոշման 57-րդ կետի՝ դատական օրենսգրքի 146-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան (որը որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ նախատեսում է կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները)՝ ԲԴԽ անդամների կամ դատավորների կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներն ուսումնասիրում է ԲԴԽ մամուլի ծառայությունը, որի արդյունքում կազմված ամփոփ տեղեկանքները ներկայացվում են ԲԴԽ նախագահին²⁹⁷: Հրապարակումների քննարկումներն իրականացվում են՝ ըստ ԲԴԽ աշխատակարգի 99 և 100-րդ կետերի²⁹⁸:

Ըստ ԲԴԽ որոշման՝ եթե ԲԴԽ անդամների կամ դատավորների կողմից կարգապահական խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներն ակնհայտ չեն համապատասխանում իրականությանը, ապա ԲԴԽ նախագահի հանձնարարությամբ մամուլի ծառայությունը հրապարակում է հերքող նյութ²⁹⁹: Հերքման նախագիծ պատրաստելիս անհապաղ տեղյակ է պահվում ԲԴԽ այն անդամը կամ դատավորը, որին վերաբերում է տվյալ հրապարակված նյութը: Ընդ որում, ԲԴԽ անդամը կամ դատավորն իրենց հայեցողությամբ կարող են տրամադրել անհրաժեշտ նյութեր, ինչպես նաև պարզաբանումներ, որոնք պետք է համարժեք հաշվի առնվեն հերքման կամ պատասխանի տեքստում: ԲԴԽ անդամի կամ դատավորի պարզաբանումները հերքման

²⁹⁵ ԲԴԽ, Չանգվածային լրատվության միջոցների հետ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին որոշում, ԲԴԽ-2-Ն-1 2019թ. <http://court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-2-%D5%86-1.pdf>

²⁹⁶ Նույն տեղում, կետ 2:

²⁹⁷ Նույն տեղում, կետ 57:

²⁹⁸ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին որոշում, թիվ ԲԴԽ-13-Ո-24, 2018թ, կետեր 99-100, որոնց համաձայն՝ իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ հայտնաբերելիս ԲԴԽ ընդունում է կարգապահական խախտման մասին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի մշտական հանձնաժողովին դիմելու մասին որոշում, իսկ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հաղորդում ստանալու դեպքում, ԲԴԽ նախագահն այն քննարկելու համար ուղարկում է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի մշտական հանձնաժողովին, ինչի մասին տեղյակ է պահվում հաղորդում ներկայացված անձը: Ի դեպ, ԲԴԽ նախագահն իրավասու է հաղորդումների քննարկման ընթացակարգի հարցերի առնչությամբ համապատասխան եզրակացություններ ներկայացնելու վերաբերյալ հանձնարարություններ տալ ԲԴԽ անդամներին <http://court.am/arm/top/bdx/decisions/%D4%B2%D4%B4%D4%BD-13-%D5%88-24.pdf>

²⁹⁹ ԲԴԽ, Չանգվածային լրատվության միջոցների հետ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին որոշում, ԲԴԽ-2-Ն-1 2019թ., կետ 59:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կամ պատասխանի տեքստում ներառելիս, հղում է արվում նրանց³⁰⁰: Միաժամանակ, նույն որոշման 63-րդ կետով սահմանվում է, որ ԲԴԽ անդամն ու դատավորը, ում կողմից կարգապահական խախտման վերաբերյալ նյութեր են հրապարակվել, իրավասու է դիմելու ԲԴԽ մամուլի ծառայությանը՝ համապատասխան ուսումնասիրություններ կատարելու և հերքում կամ պատասխան հրապարակելու միջնորդությամբ՝ տրամադրելով անհրաժեշտ նյութեր: Ավելին, ԲԴԽ անդամը կամ դատավորը կարող են իրենց հայեցողությամբ անմիջականորեն հանդես գալ զանգվածային լրատվության միջոցներով և ներկայացնել իրենց սեփական դիտարկումներն ու տեսակետը³⁰¹:

Այսպիսով, նման կարգավորումների շրջանակներում, դատավորի կողմից թույլ տրված ենթադրյալ կարգապահական խախտման մասին քննարկումը ԲԴԽ կողմից կատարվում է կարգապահական վարույթի շրջանակներից դուրս, ինչը հանդիսանում է ԲԴԽ լիազորություններից անցում և օրինականության սկզբունքի խախտում:

Միաժամանակ, անդրադառնալով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ալեքսանդր Ազարյանի կողմից ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի գործով ենթադրյալ կարգապահական խախտման (գործի քննության շրջանակներում ինքնաբացարկ չհայտնելու կամ որոշման իրավաչափության կապակցությամբ) ԲԴԽ դիրքորոշման բացակայությանը, ԲԴԽ արձանագրել է, որ «դատավորների կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ նրա լիազորությունները դադարեցնելու հիմք հանդիսացող հանգամանքների վերաբերյալ ԲԴԽ կարող է կարծիք հայտնել բացառապես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության քննության արդյունքում կայացված հիմնավորված և պատճառաբանված որոշման շրջանակներում: Այլ կերպ դիրքորոշում արտահայտելու կամ գնահատականներ տալու իրավասություն չունեն ո՛չ խորհուրդը, և ո՛չ էլ խորհրդի անդամները: Եվ քանի որ ցանկացած նախապես արտահայտված դիրքորոշում հետագայում կարող է ողջամիտ կասկած հարուցել խորհրդում ակնկալվող գործով խորհրդի անդամների անաչառության մեջ, խորհրդի անդամները, պարտավոր լինելով ողջամտության սահմաններում իրենց դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ինքնաբացարկի անհրաժեշտություն առաջացնող դեպքերը, հետայսու ևս ձեռնպահ կմնան նախնական գնահատականներ հնչեցնելուց»³⁰²:

Նման պայմաններում, հիշյալ որոշմամբ ԲԴԽ-ին դատավորների կողմից ենթադրյալ կարգապահական խախտումների քննարկման իրավասության տրամադրումը հակասում է Դատական օրենսգրքով սահմանված ԲԴԽ լիազորություններին:

Պրակտիկայի ուսումնասիրություն

2018թ. ընթացքում տեղի ունեցած հանրային հնչեղություն ունեցող գործերի կապակցությամբ դատական իշխանությունը և անհատ դատավորներ հանրային իշխանության ներկայացուցիչների, լրատվամիջոցների, ինչպես նաև հասարակության լայն շերտերի կողմից ենթարկվեցին սուր քննադատության, դատական իշխանության հեղինակությունը նսեմացնող ու դատավորների պատիվն ու

³⁰⁰ Նույն տեղում, կետ 62:

³⁰¹ Նույն տեղում, կետ 63:

³⁰² Ինչո՞ւ է լրում Բարձրագույն դատական խորհուրդը, <http://www.court.am/index.php?link=news/20-08-2018/20-08-2018.htm>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

արժանապատվությունն արատավորող արտահայտությունների, նույնիսկ՝ սպառնալիքների ու վիրավորանքների:

Մասնավորապես, քննարկենք դատավորներին առավել սուր քննադատության և հարձակումների ենթարկելու դեպքերը:

Դեպք 1

Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ալեքսանդր Ազարյանը, ով 2018թ. օգոստոսի 13-ին որոշում էր կայացրել վերացնել Ռ. Քոչարյանի կալանավորումը՝ հիմք ընդունելով նախագահի անձեռնմխելիության մասին սահմանադրական դրույթը³⁰³: Լրատվամիջոցներով ու սոցիալական ցանցերով մեծ տարածում ստացավ ՀՔԾ պետի հայտարարությունը առ այն, որ դատավորի որոշումն անօրինական է, և վերջինս պետք է գործով ինքնաբացարկ հայտնել՝ հաշվի առնելով նախկինում նրա կողմից «Մարտի 1»-ի գործով 9 մեղադրական դատավճիռները³⁰⁴: Ավելին, Ռոբերտ Քոչարյանի ազատ արձակման դեմ քաղաքացիական ակցիայի շրջանակներում դրա մասնակիցները կազմակերպեցին ստորագրահավաք՝ դիմելու ԲԴԽ-ին «դատավոր Ազարյանի լիազորությունները կասեցնելու պահանջով»³⁰⁵:

Դեպք 2

2018թ. սեպտեմբերի 11-ին համացանցում տարածվեց ԱԱԾ տնօրեն Ա. Վանեցյանի և ՀՔԾ պետ Ս. Խաչատրյանի միջև խոսակցության գաղտնալսման ձայնագրառում, որի ընթացքում Ա. Վանեցյանը Ս. Խաչատրյանին հայտնում է, որ Ռ. Քոչարյանի գործով խափանման միջոց կիրառելու վերաբերյալ քննչական մարմնի միջնորդության քննության առնչությամբ դատավորը զանգահարել է իրեն: Խոսակցության ընթացքում լսվում են այլ մանրամասներ: Գաղտնալսման հրապարակման հաջորդ օրը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր դատավոր Վաչե Մարգարյանը, ով 2018թ. հուլիսի 26-ին քննել և բավարարել էր Ռ. Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին ՀՔԾ միջնորդությունը, տարածեց հայտարարություն, որում, մասնավորապես ասվում է «Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ ես ՀՀ ԱԱԾ տնօրենին անձամբ չեմ ճանաչում, նրան չեմ զանգահարել և նրա հետ երբևիցե որևէ հեռախոսային խոսակցություն չեմ ունեցել»³⁰⁶:

Վերոգրյալ դեպքերի առնչությամբ ԲԴԽ որևէ հայտարարությամբ հանդես չեկավ ի պաշտպանություն դատավորների և դատական իշխանության անկախության և հեղինակության՝ ինչպես հանրային իշխանության, այնպես էլ քաղաքացիների ու լրատվամիջոցների կողմից արված քննադատություններին:

³⁰³ Առավոտ, «Ռ. Քոչարյանը դուրս է եկել դատարանից և արդեն մեկնել է» Ռ. Սահակյան, 13.08.2018թ. <https://www.aravot.am/2018/08/13/975144/>

³⁰⁴ 168.am, «Պարոն Ազարյանը պետք է ինքնաբացարկ հայտնել», Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցի հարցը կարող է քննվել նաև ՄԴ-ում, <https://168.am/2018/08/16/996054.html>; Այսօր, ՀՔԾ-ն ապօրինի է համարում Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը, <https://www.aysor.am/am/news/2018/08/13/%D5%80%D5%94%D4%BE/1452351>

³⁰⁵ Առավոտ, Ստորագրահավաք Քոչարյանին ազատ արձակած դատավոր Ազարյանի լիազորությունները կասեցնելու համար, 14.08.2018թ. <https://www.aravot.am/2018/08/14/975295/>

³⁰⁶ Արմենպրես, Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատավոր Վաչե Մարգարյանի հայտարարությունը, 12.09.2018թ. <https://armenpress.am/arm/news/946981.html>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ինչպես վերը նշվեց, 2018թ. օգոստոսի 20-ին դատավոր Ազարյանի կողմից ենթադրյալ կարգապահական խախտումներ թույլ տալու փաստի առնչությամբ լրատվամիջոցներով տեղեկատվության տարածման առթիվ և ԲԴԽ լրության քննադատության առնչությամբ ԲԴԽ տարածեց հայտարարություն՝ իր լրությունը հիմնավորելով այն հանգամանքով, որ քանի դեռ վարույթ հարուցող մարմինը չի դիմել Բարձրագույն դատական խորհրդին դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, Խորհուրդն իրավասու չէ կոնկրետ դեպքի (դիմումի) առնչությամբ որևէ գործողություն կատարել:... Հետևաբար, թե Խորհուրդը, թե Խորհրդի յուրաքանչյուր անդամ, առանձին վերցրած պետք է ղեկավարվեն իրավունքի գերակայության հրամայականով և դրսևորեն այնպիսի վարքագիծ, որը ողջամիտ դիտորդի մոտ կասկած չի հարուցի նրանց անկողմնակալության հարցում: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, առավել ևս՝ նրա լիազորությունները դադարեցնելու հարցի քննարկումը լրջագույն իրավական խնդիր է, որի ընթացքում խստագույնս պետք է ապահովվեն օրինականությունը, արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև դատավորի դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության և խտրականության արգելքի սկզբունքները»³⁰⁷:

Միաժամանակ, գաղտնալսմամբ հայտնի դարձած տեղեկություններով դատավորի անկախության առնչությամբ միջամտության հարցի առնչությամբ ԲԴԽ նախագահ Գագիկ Հարությունյանի հայտարարության համաձայն՝ «օրենքով սահմանված կարգով միայն դատավորի դիմումի առկայության պարագայում ԲԴԽ կարող է որոշակի քայլեր ձեռնարկել»³⁰⁸, ինչը, սակայն, վերաբերում է ենթադրյալ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ իրավասու մարմնին դիմելուն: Մինչդեռ, օրենսդրական նման կարգավորումը³⁰⁹ չի սահմանափակում և բացառում ԲԴԽ իրավասությունը քննարկելու հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից կամ զանգվածային լրատվամիջոցներով դատավորի անկախությունը, հեղինակությունը և բարի համբավը վտանգող, ինչպես նաև դատավորի նկատմամբ հարձակում պարունակող ցանկացած հրապարակում և արձագանքել դրանց: Այս լիազորության իրականացումն ուղղված է դատավորի անկախության և հեղինակության ապահովմանն ու նրա գործունեության նկատմամբ անհարկի միջամտությունների բացառմանը, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի ու զանգվածային լրատվամիջոցների կողմից:

ԲԴԽ որևէ սահմանափակում չունի իր կարծիքն արտահայտելու առնչությամբ, եթե հրապարակայնորեն որևէ դատավորի մասին ինչ-որ բաներ են ասվում, որոնք prima facie արդեն վարկաբեկող են: ԲԴԽ միանշանակ այդ իրավունքն ունի՝ անկախ նրանից, որ հետո (կարգապահական վարույթի շրջանակներում- հեղ.) կարող է լիովին համաձայնել այն կասկածներին, որ հրապարակայնորեն արտահայտվել են... ԲԴԽ պետք է արտահայտի իր

³⁰⁷ Ինչո՞ւ է լրում Բարձրագույն դատական խորհուրդը, <http://www.court.am/index.php?link=news/20-08-2018/20-08-2018.htm>
³⁰⁸ Ազատություն ռադիոկայան, Դատավորի անկախությունը միայն այսպես կոչված հեռախոսային անկախությունը չէ, 28 հունվարի 2019թ.
³⁰⁹ Դատական օրենսգիրք, հոդված 7, 5-րդ մաս:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պիրքորոշումը, եթե քննադատության որոշակի շեմն արդեն անցել է: Դատավորը պետք է հասկանա, որ արտաքինից ինքը պաշտպանված է ԲԴԽ կողմից:

Փորձագետ

ԲԴԽ պետք է արձագանքի ցանկացած լրատվական լուրի դատավորների հասցեին, պետք է պաշտպանի դատավորներին: Սակայն ԲԴԽ ոչինչ չի անում, իրեն ձեռնտու է, որ դատական համակարգը վատ հեղինակություն ունենա, ինքը հաստատվի, ով էլ չի ենթարկվում, ենթարկի իրեն: ԲԴԽ պետք է դատական համայնքի հետ աշխատի, քննարկումներ իրականացնի, ավելի մոտ լինի:

Փորձագետ

Դեպք 1

2018թ. դեկտեմբերի 22-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատավոր Դավիթ Բալայանի նախագահությամբ քննվել էր Մանվել Գրիգորյանի նկատմամբ ընտրված կալանավորումը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարելիչնելու՝ պաշտպանների միջնորդությունը, որը բավարարվել էր: Այս կապակցությամբ դատավորի, ինչպես նաև Մանվել Գրիգորյանի փաստաբանների և նրանց ընտանիքների անդամների հասցեին սոցիալական ցանցերում հնչող ստեղծության խոսքն ու նրանց արժանապատվությունը վիրավորող գրառումները, սպառնալիքներն ու անգամ բռնության կոչերը: Ավելին, Մանվել Գրիգորյանին կալանավորելու պահանջով տեղի ունեցան հավաքներ, որոնց ընթացքում ցուցարարների կողմից նույնիսկ կոչեր էի հնչում հրապարակայնորեն պարզաբանումներ պահանջել որոշումը կայացրած դատավորից³¹⁰:

Այս առթիվ, 2018 թվականի դեկտեմբերի 25-ին ԲԴԽ անդամ Գևորգ Դանիելյանի կողմից պարզաբանում տարածվեց, որով ԲԴԽ անդամը ընդգծեց, որ «յուրաքանչյուր ոք կարող է ազատ կարծիք հայտնել դատական ակտի իրավաչափության վերաբերյալ, սահմանված կարգով հանդես գալ իր պատկերացմամբ վիճարկելի դատական ակտ կայացրած դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հաղորդմամբ, սակայն ոչ ոք իրավասու չէ պարզաբանումներ պահանջելու դատավորից, ոչ ոք իրավասու չէ հանրահավաքների կամ քաղաքացիական հասարակության գործունեության այլ միջոցներով ճնշումներ գործադրել դատարանների նկատմամբ: ... Բարձրագույն դատական խորհուրդը ելակետ է ընդունում այն ականհայտ իրողությունը, որ անկախ դատարան ունենալն առաջին հերթին անհրաժեշտ է հենց հասարակությանը, դրանում հենց ժողովուրդը պետք է շահագրգռված լինի, դա բխում է իր շահերից, դատարանի անկախությունը ցանկացած եղանակով սասանելը ձևավորում է անընդունելի նախադեպ, որի խիստ բացասական հետևանքների մասին մենք բոլորս ենք այժմ բարձրաձայնում: Դատարանների անկախությունը երաշխիք է ոչ միայն և ոչ այնքան դատավորների, որքան հենց հանրության համար, քանզի միայն անկախ դատական համակարգն է ի

³¹⁰ Մարդու իրավունքների պաշտպանի Պիրքորոշումը Մանվել Գրիգորյանի գործով ստեղծված իրավիճակի կապակցությամբ, <http://www.ombuds.am/media/65489.html>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գորու լիարժեք կյանքի կոչելու իրական արդարադատություն և այդպիսով ծառայելու ժողովրդին ու երկրին»³¹¹: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ տվյալ դեպքում ևս ոչ թե ԲԴԽ-ն է հանդես եկել հայտարարությամբ, այլ դրա անդամը:

Միաժամանակ, ԲԴԽ նաև որևէ հայտարարությամբ հանդես չեկավ ի պաշտպանություն դատավորների անկախության և հեղինակության, երբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակայնորեն հայտարարել էր, որ Հայաստանում չկա մի դատավոր, որ իր ասածը չանի: Մինչդեռ, դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու պարտականություն ունեցող ԲԴԽ կողմից որևէ հակազդեցություն գործադիր իշխանության ղեկավարի նման արտահայտությունների առնչությամբ տեղի չունեցավ: Իր հարցազրույցներից մեկում միայն ԲԴԽ նախագահ Գագիկ Հարությունյանը կարծիք հայտնեց, որ «Թող վարչապետը փորձի զանգել բոլոր 234 դատավորներին, իմանալու, որը կկատարի, որը՝ ոչ: Կան չափազանց պարկեշտ, հայրենասեր, իրենց գործը լավ իմացող դատավորներ և նրանք երբեք չեն փորձի զանգային արդարադատություն իրականացնել»³¹²:

Դատավորների անկախության, արժանապատվության և հեղինակության պաշտպանության առնչությամբ հայտարարություններով հանդես եկավ ՀՀ դատավորների միությունը: Միությունը, մասնավորապես, իր մտահոգությունն է հայտնել դատավորների հասցեին հնչող ատելության խոսքին և քննադատությանը և կոչ է արել «խուսափել դատական ակտերի այնպիսի քննադատություններից, որոնք կարող են խաթարել դատական համակարգի անկախությունը կամ վնասել դատարանների հանդեպ հասարակության վստահությանը: Նման դեպքերում պետք է գործեն այնպիսի կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան դատական հայցեր հարուցելու միջոցով պատշաճ կերպով պաշտպանել տվյալ դատավորին»³¹³:

Այսպիսով, ՀՀ ներպետական օրենսդրությամբ ԲԴԽ օժտված է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող ցանկացած հարց քննարկելու և իրավասու մարմիններից հարցի լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պահանջելու իրավասությամբ: ԲԴԽ կողմից ընդունվել է «Դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող հնարավոր դրսևորումները կանխելու մասին» որոշումը, որը սահմանափակված է միայն հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող գործողությունների մատնանշմամբ, մինչդեռ պրակտիկայում դատարանի և դատավորի անկախությունը կարող է վտանգվել ոչ միայն հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից և ոչ միայն տվյալ որոշմամբ արտահայտված դրսևորումներով:

³¹¹ Դատարանների անկախությունն

³¹² Ազատություն, Գագիկ Հարությունյանը վստահ չէ, որ ցանկացած դատավոր կկատարի վաչապետի հրահանգը, <https://www.youtube.com/watch?v=EmyVQ1g6m38>

³¹³ ՀՀ Դատավորների միություն, Դատավորների հասցեին հնչող ատելության խոսքը հատել է թույլատրելիության սահմանը. ՀՀ դատավորների միության հայտարարությունը, <https://ajra.am/hy/news/203-2018-12-28-08-51-37>. Հետք, Դատավորների միության հայտարարությունը, <https://hetq.am/hy/article/98886>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հանրային հաշվետվողականություն և վերահսկողություն

Միջազգային չափանիշներ

Դատական խորհուրդները պետք է ցուցաբերեն դատարանների և հանրության առջև թափանցիկության ամենաբարձր աստիճան՝ դրա համար մշակելով նախապես սահմանված ընթացակարգեր և կայացնելով պատճառաբանված որոշումներ³¹⁴:

Դատական խորհուրդը իր պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր է ապահովել իր գործառույթների իրականացման թափանցիկությունը, հասարակությանը և լրատվամիջոցներին տրամադրել բավարար տեղեկություններ, պարբերաբար զեկուցել իր գործառույթների իրականացման մասին³¹⁵, որպեսզի ապահովի արդարադատության իրականացման վերաբերյալ ճիշտ հանրային ընկալում:

Վենետիկյան հանձնաժողովն ընդգծել է, որ թափանցիկության պահանջը չպետք է մեկնաբանել այնպես, որ խորհրդի գործունեությունն ամբողջությամբ հրապարակային դարձվի: Այդուամենայնիվ, հրապարակային նիստեր անցկացնելու պահանջը կնպաստի խորհրդի վստահելիության աճին, ինչը ողջունելի է որպես այդ ինստիտուտի լեգիտիմությունը բարձրացնելուն ուղղված քայլ:

ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կարծիքի նախագծում Վենետիկյան հանձնաժողովը խորհուրդ է տվել, որ Արդարադատության խորհրդի նիստերը, որպես ընդհանուր կանոն, իրականացվեն դռնբաց, և նիստերն անց կացվեն դռնփակ դատավորի խնդրանքով: Սա ավելի համահունչ կլինի ՄԻԵԿ 6-րդ հոդվածին³¹⁶:

ԵԴԽՆՖ փաստել է, որ հաշվի առնելով դատական խորհրդի ներգրավվածությունը դատական իշխանության կառավարմանը, խորհրդի գործունեության թափանցիկությունը պետք է երաշխավորվի: Թափանցիկությունը դատական համակարգի գործունեության նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացման էական գործոն է: Ավելին, այն երաշխիք է դատական իշխանությանը հնարավոր քաղաքական ճնշումներից պաշտպանելու, ինչպես նաև դատական իշխանության ներսում սեփական շահերը պաշտպանելու, և «ընկերական նշանակումների» հնարավոր դրսևորումները կանխելու համար³¹⁷:

Որպես հանրային հաշվետվողականության դրսևորում՝ դատական խորհրդի բոլոր որոշումները, այդ թվում՝ դատավորների նշանակման, առաջխաղացման, գնահատման, պատասխանատվության և դատավորների կարիերային վերաբերող ցանկացած այլ որոշում, պետք է լինեն հիմնավորված:

Կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորները պետք է ամբողջությամբ տեղեկացված լինեն որոշման հիմնավորումների վերաբերյալ: Ավելին, դատական խորհուրդը պետք է հրապարակի պաշտոնական և վերջնական որոշումները՝ ապահովելով ոչ միայն դատական

³¹⁴ Committee of Ministers, Recommendation CM/Rec (2010)12, para. 28.

³¹⁵ ENCI, Resolution on Transparency and Access to Justice, 29 May 2009, para. 3.

³¹⁶ Venice Commission, Opinion on the Draft Amendments to the Law on the High Judicial Council of Serbia, CDL-AD(2014)028, paras 36-37; Venice Commission and Directorate of Human Rights and Directorate General on Human Rights and Rule of Law of the Council of Europe, Joint Opinion on the Draft Law Amending and Supplementing the Judicial Code (Evaluation System for Judges) of Armenia, CDL-AD(2014)007, para. 97.

³¹⁷ CCJE, Opinion No 10 (2007), para. 91.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

իշխանության, այլև հասարակության տեղեկացվածությունը իրականացված վարույթի վերաբերյալ և ցուցադրելով, որ դատական իշխանությունը չի թաքցնում իր անդամների նկատմամբ պատժիչ գործողությունները:

Դատավորների նշանակման և առաջխաղացման գործընթացի թափանցիկությունը հնարավոր է ապահովել նշանակման չափանիշների և պաշտոնի նկարագրությունների հրապարակման միջոցով: Ցանկացած շահագրգիռ կողմ պետք է հնարավորություն ունենա ուսումնասիրել կատարված ընտրությունները և ստուգել, թե դատական խորհուրդը կիրառել է արդյո՞ք կանոններն ու չափանիշները նշանակման և առաջխաղացման բովանդակությանը համապատասխան³¹⁸:

Դատական խորհուրդը պետք է հրապարակի պարբերական զեկույց իր գործունեության վերաբերյալ՝ ամփոփելով կատարված աշխատանքը և արձանագրված դժվարություններն ու խոչընդոտները, ինչպես նաև՝ առաջարկելով միջոցառումներ դատական համակարգի գործունեությունը բարելավելու ուղղությամբ: Ձեկույցի հրապարակումը կարող է ուղեկցվել նաև մամլո ասուլիսով, դատավորների և դատական համակարգի մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներով՝ ապահովելով տեղեկատվության տարածումը և դատական մարմինների հետ համագործակցությունը:³¹⁹

Բյուջետային լիազորություններ ունենալու դեպքում դատական խորհուրդը պետք է հաշվետու լինի բյուջեն հաստատած պառլամենտին ֆինանսների ծախսման վերաբերյալ: Դատարաններին ուղղված բյուջեն պետք է ենթարկվի վերահսկողության հանրային միջոցների օգտագործումը վերահսկող մարմնի կողմից, եթե կա նման մարմին³²⁰:

Նույն մոտեցումն է արտահայտել նաև Վենետիկյան հանձնաժողովը: Օրինակ, Սերբիայի Բարձրագույն դատական խորհրդի մասին օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքում նշել է, որ խորհրդի գործունեության վերաբերյալ պառլամենտին տարեկան զեկույց ներկայացնելը ողջամիտ է, և նման տեղեկատվության ներկայացումը կնպաստի խորհրդի գործունեության թափանցիկության բարձրացմանը: Դա թույլ կտա նաև հանրությանը տեսնել, օրինակ, որ կարգապահական խախտումներ թույլ տված դատավորները ենթարկվում են պատասխանատվության և այլն³²¹:

ՀՀ ներպետական օրենսդրություն

ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ ԲԴԽ նիստերն անց են կացվում դռնփակ, եթե ԲԽԴ որոշում չի կայացնում նիստերը դռնբաց անցկացնելու մասին: Որպես դատարան հանդես գալու դեպքում ԲԴԽ նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ԲԴԽ որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով, կամ

³¹⁸ CCJE, Opinion No 10 (2007), paras. 93-94.

³¹⁹ CCJE, Opinion No 10 (2007), para. 96.

³²⁰ CCJE, Opinion No 10 (2007), para. 95.

³²¹ Venice Commission, Opinion on the Draft Law on the High Judicial Council of the Republic of Serbia, CDL-AD(2008)006, paras. 35-36; Venice Commission, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina, CDL-AD(2014)008, paras. 71-72.



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել³²²: ԲԴԽ հանդես է գալիս որպես դատարան դատավորին և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և ԲԴԽ անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և ԲԴԽ անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը³²³ քննելիս: Այսինքն, ըստ դատական օրենսգրքի՝ այս հարցերի քննությունը տեղի է ունենում դռնբաց նիստում, քանի դեռ նիստը դռնփակ անցկացնելու վերաբերյալ որոշում չի կայացվել ԲԴԽ կողմից: Այդուամենայնիվ, դատական օրենսգրքի 163-րդ հոդվածով (որպես հատուկ նորմ) սահմանվում է, որ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին հարցի քննությունն իրականացվում դռնփակ³²⁴:

ՀՀ դատական օրենսգրքով ԲԴԽ գործունեության վերաբերյալ տարեկան հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն սահմանված չէ: Մինչդեռ դատական իշխանության գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունների ներկայացման պարտավորություն նախատեսված է ԲԴԽ աշխատակազմ՝ դատական դեպարտամենտի համար: Մասնավորապես, դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողությունն ապահովելու նպատակով՝ Դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրություն³²⁵: Դատական դեպարտամենտը հրապարակում է նաև դատարանների բյուջեն, այդ թվում՝ ֆինանսական ծախսերի համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ՝ ըստ դատարանների, դատավորների միջին աշխատավարձը և դրա համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ, դատավորների կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման մասին՝ հարուցված կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման վարույթների քանակները՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների և վարույթի հարուցման հիմքերի, կարճված վարույթներով գործերի քանակը, կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման դեպքերի քանակը և դատավորի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքի, այդ թվում՝ տույժի տեսակի վերաբերյալ տվյալներ, հրապարակվում է նաև վճարված և դատական ակտով վճարման ենթակա պետական տուրքի տարեկան ընդհանուր չափը³²⁶:

Միաժամանակ, դատական դեպարտամենտը վարում է դատական վիճակագրությունը, որը ներառում է ինչպես առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների, այնպես էլ դատավորների վերաբերյալ վիճակագրական տվյալների ամփոփում, այդ թվում՝ հաշվետու ժամանակահատվածում ստացված և ավարտված գործերի ընդհանուր քանակը, կասեցված գործերի ընդհանուր քանակը, ավարտված գործերի քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի ու ըստ ժամանակի և այլն³²⁷:

³²² Դատական օրենսգրք, հոդված 90, 5-6-րդ մասեր:

³²³ Դատական օրենսգրք, հոդված 90, 2-րդ մաս:

³²⁴ Դատական օրենսգրք, հոդված 163, 1-ին մաս:

³²⁵ Դատական օրենսգրք, հոդված 19, 1-ին մաս:

³²⁶ Դատական օրենսգրք, հոդված 19, 10-րդ մաս:

³²⁷ Դատական օրենսգրք, հոդված 19, 7-9-րդ մասեր:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲԴԻՍ գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության առնչությամբ կարևորվում է նաև զանգվածային լրատվության միջոցների հետ ԲԴԻՍ համագործակցությունը: Ըստ «Զանգվածային լրատվության միջոցների հետ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին» որոշման՝ ԲԴԻՍ և դատարանների գործունեության լուսաբանումը կազմակերպվում է ԲԴԻՍ Մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայության կողմից, ինչ նպատակով հրապարակում է ԲԴԻՍ և դատարանների գործունեության վերաբերյալ մամուլ հաղորդագրություններ, աջակցում ԲԴԻՍ և դատարաններին՝ զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում³²⁸: Ըստ նույն որոշման՝ ԲԴԻՍ դրնբաց նիստերին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցները, իսկ ԲԴԻՍ որոշմամբ՝ կարող են ամբողջությամբ կամ նիստի մի հատվածում կատարել լուսա-տեսանկարահանումներ, այդ թվում՝ անմիջապես ուղիղ եթեր հեռարձակելու իրավունքով³²⁹:

Լրագրողի մասնակցության հայտը գրանցելու նպատակով լրատվական գործունեություն իրականացնողն էլեկտրոնային եղանակով դիմում է Մամուլի ծառայություն³³⁰: Ընդ որում, խորհրդում կարող են գործունեություն իրականացնելու հայտ ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությունում հաշվառված՝ 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթերի, ամսագրերի, շաբաթաթերթերի, առնվազն շաբաթը մեկ անգամ թարմացվող ինտերնետային լրատվության միջոցների, լրատվական գործակալությունների, ռադիոընկերությունների, հեռուստաընկերությունների, Երևան քաղաքում թղթակցական կետեր ունեցող օտարերկրյա հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների լրագրողները, լուսանկարիչներն ու տեսաձայնագրման օպերատորները, անհատ լրագրողները, ֆոտոթղթակիցները³³¹:

Պրակտիկայի ուսումնասիրություն

ԲԴԻՍ և դատական իշխանության գործունեության վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքէջում, որտեղ զետեղված են տեղեկություններ ԲԴԻՍ և դատարանների, դատավորների վերաբերյալ³³²:

Կայքէջում հրապարակվում են ԲԴԻՍ կողմից կայացված որոշումները, այդ թվում՝ նորմատիվ, ընթացակարգային և աշխատանքային որոշումները: Ընդհանուր առմամբ 2018թ. գործունեության ընթացքում ԲԴԻՍ կողմից հրապարակվել են 188 որոշումներ:

Որոշման տեսակը	Որոշումների քանակը
Նորմատիվ որոշումներ	5

³²⁸ ԲԴԻՍ, Զանգվածային լրատվության միջոցների հետ բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին որոշում, թիվ ԲԴԻՍ-Ն-2-1, 2019թ., կետ 24:

³²⁹ Նույն տեղում, կետ 25:

³³⁰ Նույն տեղում, կետ 35:

³³¹ Նույն տեղում, կետ 39:

³³² ԲԴԻՍ, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը սահմանելու մասին որոշում, ԲԴԻՍ-36-Ո-95:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ որոշումներ	173
Աշխատակարգային որոշումներ	10

ԲԴԽ կողմից որոշումների կայացումը մեծամասամբ իրականացվում է դռնփակ նիստում և գաղտնի քվեարկությամբ, այդ թվում՝ դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելու հաստատելու, նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու որոշումներն ընդունվում են գաղտնի քվեարկությամբ:

Գաղտնի քվեարկությունը հնարավորություն է տալիս նիստի ընթացքում խոսել մի բան, բայց բոլորովին այլ բան քվեարկել, հետևաբար անհրաժեշտ է նախաձեռնել գաղտնի քվեարկության վերացում:
Փորձագետ

Միաժամանակ, ԲԴԽ կարճատև գործունեության ընթացքում կայացված որոշումները հիմնավորվածության առնչությամբ խնդրահարույց են, ինչը պրակտիկայում լուրջ քննադատությունների, անգամ ԲԴԽ դեմ դատական հայցերի հարուցման պատճառ է դարձել³³³: Ըստ հարցված փորձագետների, ԲԴԽ գործունեության թափանցիկության ու որոշումների հիմնավորվածության բացակայությունը կառույցի վստահելիության կարևորագույն խնդիրն է:

Նշանակման գործընթացը թափանցիկ չէ: ԲԴԽ վերջին որոշումները գալիս են դա հաստատելու: Օրինակ, առանց դատավորի համաձայնության կարող է տեղափոխել, մարզերի դատարաններից տեղափոխություններ եղան, որ հաստատված ցուցակի թեկնածուները գնան մարզեր: Թե ինչով սա հիմնավորվեց, որտեղ է գործընթացի թափանցիկությունը, հստակ չէ: Ցուցակի առաջին համարին կանխատեսելի չէ, որ տեղ բացվելուն պես իրեն կնշանակեն, օրինակ, Երևանում, կարող են Կոտայքից որևէ մեկին տեղափոխել ու իրեն նշանակել Կոտայքում: Մա օրենքի բաց է: Ավելին, կոռուպցիոն ռիսկ կա, քանի որ թափանցիկ չի, ու ողջամիտ կասկած կարող է լինել՝ ո՞նց են որոշում կայացրել, ի՞նչ արժեքներից ելնելով:
Փորձագետ

Չկա ԲԴԽ մի որոշում, որ առնվազն վիճահարույց չլինի: Մասնավորապես, կապված դատավորի նշանակման, առաջխաղացման, տեղափոխման հետ առնվազն վիճահարույց են: Ես չեմ ուզում ասել անօրինական, քանի որ դատավորները վիճարկում են, ու վերջնական դատական ակտ դեռ չկա: Բայց սա ինքնին ցույց է տալիս, որ բոլորի մոտ կա կասկած ԲԴԽ գործունեության վերաբերյալ:
Փորձագետ

³³³ Չեռք, Երկու դատավոր հայցադիմում են ներկայացրել ընդդեմ ԲԴԽ-ի և նախագահ Արմեն Սարգսյանի, <https://hetq.am/hy/article/92470> Դատալեքս դատական տեղեկատվական համակարգում ուսումնասիրությունը վեր հանեց ԲԴԽ դեմ 23 դատական գործերի առկայություն (2019թ. հունվարի 16-ի դրությամբ), որոնք վերաբերում են ի թիվս այլոց նաև տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու, ԲԴԽ կայացրած որոշումներն անվավեր ճանաչելու մասին պահանջների:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Չնայած այն հանգամանքին, որ ԲԴԽ որոշումները հրապարակվում են ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում³³⁴, այդ թվում՝ դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելու հաստատելու, նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու, դատավորների տեղափոխման, պահուստային ֆոնդի բաշխման և այլ որոշումները, այդուամենայնիվ ԲԴԽ գործունեության, ԲԴԽ ֆինանսական բյուջեի ու ֆինանսական ծախսերի, դատական իշխանության բյուջեի պահուստային ֆոնդի գումարների օգտագործման վերաբերյալ համապարփակ և հիմնավոր տեղեկատվություն ԲԴԽ կողմից չի հրապարակվում:

³³⁴ www.court.am